ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գրիգոր Ալեքսանի Ղարիբյան

85-ամյա հոբելյանական և 60-ամյա համալսարանական կյանքիս էջերից

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Ղ 471

Խմբագիր՝ Սամվել Պարգևի Մուրադյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ

Գրիգոր Ղարիբյան
Ղ 471 85-ամյա հոբելյանական և 60-ամյա համալսարանական կյանքիս էջերից/Գ. Ղարիբյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2015, 114 էջ + 16 էջ ներդիր:

Գիրքը ներկայացնում է Գրիգոր Ղարիբյանի 85-ամյա հոբելյանական և 60-ամյա համալսարանական կյանքի ուշադրության արժանի էջերը:

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-1967-4

© ԵՊՀ հրատարակչություն, 2015
© Գ. Ղարիբյան, 2015

ՍՈՒՐԲ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Էջմիածնի Մայր Աթոռ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի շուրջ 30 տարիների ճարտարապետ, իմ բարեկամ Բաղդասար Արզումանյանի հետ Բոստոնից վերադառնալուց հետո, հաճելի առիթով Վեհափառին այցելելիս նա ինձ նվիրեց «Եկայք շինեսցուք» պատկերազարդ գիրքը՝ իր հետևյալ սուրբ օրհնությամբ.

«Մեծարգո
Պրոֆեսոր Գրիգոր Ղարիբյանին
գնահատանքով և օրհնությամբ՝
Վազգեն Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց
19.02.1990թ.»

Վեհափառի այս օրհնությամբ էլ բացում եմ 85-ամյա կյանքիս էջերը...


Մեծարգո
Պրոֆ. Գրիգոր Ղարիբյանին
գնահատանքով և
օրհնությամբ՝
Վազգեն
Հայոց Ամենայն Հայոց
19 II 1990

ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ, ԵՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

Չափազանցրած կլինեի, եթե ասեի, թե Գրիգոր Ղարիբյանին ճանաչում է Հայաստանի ամեն մի երրորդ կամ չորրորդ քաղաքացի: Բայց և խոսքս հասցեական, թեկուզև լակոնիկ կհնչի, երբ ասեմ, թե ինչ դեր է խաղացել Գրիգոր Ղարիբյանը հայության համար մեծապես նշանակալի մի այնպիսի համակարգի արդյունավետ գործունեության համար, ինչպիսին Երևանի պետական համալսարանն է: Իր վաթսունամյա համալսարանական գործունեության բոլոր փուլերում ու դիրքերում, բոլոր պարտականությունների մեջ Գրիգոր Ղարիբյանը գտնվել է տեղում և ժամանակին և իր բազմազան առաքելությունները ճշտորեն կատարելով՝ իր ներդրումը բերել Համալսարանի հաջող երթին: Նա հստակ է կատարել իր պարտականությունները թե՛ ուսանելիս, թե՛ դասավանդելիս, թե՛ ամբիոն, ֆակուլտետ ղեկավարելիս: Գրիգոր Ղարիբյանը տասներեք տարի համակարգել է համալսարանի ուսումնական աշխատանքները՝ որպես պրոռեկտոր, իսկ Արցախյան շարժման շրջանում անընդհատ Մոսկվայում գտնվող ռեկտոր Սերգեյ Համբարձումյանի բացակայության ժամանակ համալսարանի ղեկավարման ողջ բեռը նրա ուսերին է եղել: Այսօր ութսունհինգամյա Գրիգոր Ղարիբյանը թավ հոնքերի տակից ելնող իմաստուն ու պատկառազդու հայացքով է մտնում համալսարանի գիտական խորհրդի նիստերի դահլիճ, նստում գիտխորհրդի սովորող անդամների կողքի շարքում՝ այստեղ և այսպիսով էլ կատարելով իր հերթական պարտականությունը՝ մտավորականի կեցվածքի օրինակ ցույց տալը:

Այս գրքում Գրիգոր Ղարիբյանի կերպարը բացահայտող, կյանքն ու գործն արժևորող, սերն ու նվիրումը պատկերող շատ խոսքեր, մտքեր ու լուսանկարներ կան: Այս ամենը նրան բերկրանք պարգևելու համար չեն միայն: Այս գրքում դառն հիշողություններ էլ կան, մանկության ու երիտասարդության շրջանի կրած զրկանքներ, մտավորականի խորն ու անկեղծ մտահոգություններ իր երկրի ծանր խնդիրների մասին՝ գիտական ձևակերպումներով հանձնված թղթին, հիասթափություններ կան, բաժանում: Այս ամենը նրան իր կյանքի ողջ դրաման գեղեցիկ ստեղծագործությամբ վերապրել տալու համար չէ միայն: Այս գիրքը առավելապես նրա համար է, ով պատրաստ է մի կենսագրության, մի աշխարհայացքի ծանոթանալուց հետո ինչ-որ տարրերով վերանայելու կյանքի իմաստը, թեկուզ չնչին, բայց դեպի դրականն ու բարոյականը տանող փոփոխություններ մտցը-

նելու սեփական աշխարհայացքի մեջ: Այս գիրքը երիտասարդի համար է, հայ երիտասարդի, ով կարող է տեսնել, թե ինչպես կարելի է կյանքի հարվածները կրել արժանապատվորեն և ազնիվ աշխատանքով, սիրով ու նվիրումով երջանկություն կերտել... ով կարող է կարդալ այն մասին, որ դպրոցականի ողջ էությունը կարող է համակված լինել իր ուսուցչի կերպարով, որ ավանդական ընտանիքը մեծագույն արժեք է, որ իրական երջանկությունը հայրենի հողի վրա կարող է լինել, որ որդիական պարտականությունները սիրով պետք է կատարել: Այս գիրքը համալսարանականի համար է, ով «գիտական բարդագույն խնդիրներին պետք է միշտ համադրի հայոց երգն ու բանաստեղծությունը»:

Ակնածանքի այն չափով, որքան Գրիգոր Ղարիբյանն իր հուշերում պատկերում է իր դպրոցական ու համալսարանական ուսուցիչներին, նույնչափ հարգանք էր վայելում ինքը՝ պրոֆեսոր Ղարիբյանը դեռ այն ժամանակ՝ 1970-ականներին, երբ ես համալսարանի ուսանող էի: Հատկանշական է, որ Գրիգոր Ղարիբյանը մեկն էր այն մարդկանցից, ովքեր կարևոր լումա ունեցան ԵՊՀ պատմության ֆակուլտետ աշխատանքի ընդունվելուս հարցում: Ահա և Գրիգոր Ղարիբյանի և իմ ճակատագրի միջև կապի մասին: Առաջին ծանոթությունը, զրույցը, որ ունեցել եմ պրոֆեսոր Ղարիբյանի հետ, 1979 թվականի ամռանն էր՝ Մոսկվայում սովորող ասպիրանտիս՝ ամառային արձկուրդները տանն անցկացնելու համար Երևան գալիս, ինքնաթիռի մեջ: Մայր բուհի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտորի հետ երեքժամյա թռիչքը լավ առիթ էր՝ համալսարանական կրթության մասին իմ ընկալումներն ու համոզմունքները բարձրաձայնելու համար: Ի պատասխան իմ՝ արտահայտածս դրույթների ճշմարտացիության մեջ համոզմունքին, պրոռեկտոր Ղարիբյանը մեղմ ժպտում էր՝ կարծես թե հասկացնելով, որ իրավիճակները ճիշտ գնահատելու համար խնդիրների մեջ ավելի խորամուխ պետք է լինել:

Երիտասարդ համալսարանականիս միշտ գերել ու զարմացրել է Գրիգոր Ղարիբյանի եռանդը, նպատակասլացությունը, նորին ու նորարարությանը ձգտելու մղումը: Մեզ համար և՛ խիստ հաճելի, և՛ վարակիչ էր նրա անսահման սերը դեպի մշակույթն ու մշակույթի գործիչները. պոեզիայի, մասնավորապես Սահյանի ստեղծագործությունների հանդեպ նրա ջերմությունը փոխանցվում էր և մեզ: Նա զարմանալիորեն իր մեջ համադրում էր և՛ կրթության գործի հմուտ կազմակերպչին, և՛ մշակութասեր քաղաքացուն, և՛ խորաթափանց գիտնականին: Հիսուն տարի շարունակ

Գրիգոր Ղարիբյանը հայ տնտեսագիտական մտքի ամենաճանաչված ներկայացուցիչներից մեկն է: Նրա այսօրինակ դրվատելի կերպարն ամբողջացնելու է գալիս իր կենսակերպը, նվիրումն իր ընտանիքին, անսահման սերը տիկնոջ՝ Գայանե Բուռնազյանի նկատմամբ, նույնչափ սերն իր հայրենիքի, մասնավորապես իր ծննդավայրի՝ Սիսական աշխարհի հանդեպ, որը նրա համար սոսկ ծննդավայր չէ, այլ իմաստավորված մի էություն:

Ինչպես ինքը՝ հոբելյարն է նշում, Երևանի պետական համալսարանում է գտել իր երջանկությունը՝ սիրված աշխատանքը, կյանքի ուղեկից կնոջը, հավատարիմ ընկերներին ու մեծ հարգանք վաստակելու գաղտնիքը:

Երևանի պետական համալսարանի ողջ կոլեկտիվի և ուսանողության անունից շնորհավորելով հարգելի պրոֆեսորին, գիտության վաստակավոր գործչին նշանակալի հոբելյանի առթիվ՝ մաղթում եմ առողջություն, երկար տարիների ստեղծագործ կյանք ու նորանոր հաջողություններ:

85-ԱՄՅԱ ԿՅԱՆՔԻՍ ԷՋԵՐԻՑ

Ծնվել եմ 1930 թ. մայիսի 25-ին Սյունիքում՝ Որոտանի ափին փռված Բորիսովկա (այժմ Ծղուկ) գյուղում: Աշխատասեր ու հարուստ գյուղ էր: Դպրոցը գյուղի ուշադրության կենտրոնում էր, իսկ լավ սովորող աշակերտը՝ բոլորի սիրելին: Կարևոր չէր, որ մեր դպրոցի հատակը և տանիքը հողածածկ էին: Գնահատելին այն էր, որ ուսուցիչը պաշտամունք էր: Ես գերազանցիկ էի և նկարում էի, ու քանի որ սովորում էինք պատերազմի տարիներին, դպրոցի պատերը ծածկված էին իմ պատկերած հայ գեներալների և հերոսների նկարներով:

Գյուղի յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո շարունակեցի սովորել հարևան Բազարչայ գյուղի միջնակարգ դպրոցում, որտեղ դասավանդում էին նաև եգիպտահայ պրոֆեսորներ Տիրան Փափազյանը և Անդրանիկ Քարամյանը: Պատերազմի տարիներին պետությունը «երկրի անվտանգության» նկատառումով նրանց Երևանից հեռացրել և աքսորել էր խստաշունչ ձմեռով Սյունիքի այդ հեռավոր գյուղը: Դա աշակերտներիս երջանկությունն էր:

Ութերորդ դասարանն ավարտելուց հետո՝ 1946 թ. ընդունվեցի Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարան: Ավարտական երրորդ կուրսում ուսման տևողությունը երեք տարուց դարձավ հինգ տարի, որն ինձ համար նյութական բնույթի խնդիրներ ստեղծեց, ուստի, զուգահեռ, 1948 թ. ավարտեցի Երևանի Կայարանի երեկոյան բաներիտ դպրոցը՝ նպատակ ունենալով կրթությունս շարունակել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ ճարտարապետության մասնագիտությամբ: Սակայն հանգամանքների բերումով 1949 թ. ընդունվեցի Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ: Դա աստծո կողմից ինձ նվիրված ճակատագիր էր, քանի որ համալսարանում գտա ամենակարևորը՝ իմ երջանկությունը...

1954 թ. գերազանցությամբ ավարտեցի համալսարանը, իսկ 1962 թ.՝ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան: 1963 թ. պաշտպանեցի թեկնածուական, իսկ 1973 թ.՝ դոկտորական ատենախոսություն:

1954 թ. աշխատանքի անցա քաղաքատնտեսության ամբիոնում՝ որպես լաբորանտ, հետո ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր, իսկ 1978-2008 թթ. Տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ: 1977-1978 թթ. աշխատել եմ ԵՊՀ կուսակցական կոմիտեի երկրորդ քարտուղար:

1978-1991 թթ. նշանակվեցի Երևանի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: Այդ տարիներին ռեկտորատը՝ ռեկտոր, ակադեմիկոս Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանի գլխավորությամբ մեծ ծավալի աշխատանք կատարեց համալսարանի կյանքի ընդհանուր հումանիզացման ուղղությամբ: Հայոց պատմությունը բոլոր մասնագիտությունների համար դարձավ պարտադիր առարկա: Բացվեցին հումանիտար մասնագիտությամբ Փիլիսոփայության ու սոցիոլոգիայի ֆակուլտետը, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը և, վերջապես, մեծ դժվարությամբ վերաբացվեց նաև Տնտեսագիտության ֆակուլտետը:

2015 թ. Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 85-ամյակին և դրա վերաբացման 30-ամյակին նվիրված ֆիլմում ակադեմիկոս Սերգել Ալեքսանդրի Համբարձումյանը նշում է, որ «Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացման նախաձեռնողը և ջատագովը Երևանի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր պրոֆեսոր Գրիգոր Ղարիբյանն էր: Մեկ տարուց ավելի համալսարանը համառորեն պայքարում էր տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը Երևանի ժողովրդական Տնտեսության ինստիտուտից տեղափոխելու Երևանի պետական համալսարան: Դա տեղի ունեցավ միայն ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար լուսահոգի Կարեն Դեմիրճյանի հրամանով: Կուզենայի, որ այդ ամենը չմոռացվեր»:

Քանի որ 55 տարիների գիտամանկավարժական գործունեությունս գնահատված և շարադրված է Երևանի պետական համալսարանի տընտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտ. գիտ. դոկտոր պրոֆեսոր Հ. Լ. Սարգսյանի և ՀՀ ԳԱԱ Քոթանյանի անվան ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վ. Հարությունյանի «Գրիգոր Ալեքսանի Ղարիբյան-80. Կրթությանն ու գիտությանը նվիրված կյանք» հոդվածում, (որը նյութերում ներկայացվում է), չկրկնելու համար, ես կանդրադառնամ իմ կյանքի՝ այնտեղ չարտացոլված էջերին: Կուզենայի հատուկ նշել 1989-1991 թթ. ժամանակահատվածը, երբ ԵՊՀ ռեկտոր Ս. Ա. Համբարձումյանը որպես պատգամավոր Մոսկվայում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստերին էր մասնակցում, և այդ տարիներին ինձ վրա էին դրված ռեկտորին փոխարինելու պարտականությունները:

Արցախի ազատագրական պատերազմի տարիներն էին: Մինչև Մոսկ-

վա մեկնելը, համաժողովրդական այդ պայքարին ԵՊՀ-ի ցույց տրվող օգնությունն առավել ծավալուն և արդյունավետ դարձնելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ իր իսկ նախագահությամբ: Հանձնաժողովում ընդգրկված էին պրոռեկտոր Գ. Ղարիբյանը, կուսկոմիտեի քարտուղար, լուսահոգի Յու. Մկրտումյանը, լուսահոգի ակադեմիկոս, Հայոց պատմության ամբիոնի վարիչ Լ. Խուրշուդյանը, պրոֆ. Գ. Փանոսյանը, ԵՊՀ արհկոմիտեի նախագահ Հ. Մկրտչյանը, դոցենտներ Ն. Գալստյանը և Ֆ. Մելիք-Ադամյանը: Այդ հանձնաժողովի աշխատանքները ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյանի Մոսկվայում գտնվելու պատճառով ես էի գլխավորում: 2011թ. հունիսի 24-ին ԵՊՀ գիտական խորհրդի նիստում ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանն ընդգծեց, որ արցախյան գոյամարտում ԵՊՀ-ն յուրահատուկ կենտրոն էր, հաստատապես իր ուրույն դերն ունեցավ մեր նորանկախ պետության ստեղծման գործում:

Իմ ստորագրությամբ էին Մոսկվա՝ կուսակցական և պետական մարմիններին ուղարկվում Երևանի պետական համալսարանի՝ Արցախի անկախությունը պահանջող բազմաթիվ որոշումները, նամակներն ու հեռագրերը: Արցախի նոր կազմավորվող ազատագրական բանակը զինելու և հանդերձավորելու գործում մեծ աշխատանք էր կատարում վերը նշված հատուկ հանձնաժողովը: Դա վերաբերվում էր, մասնավորապես, Մարտակերտում Լեոնիդ Ազգալդյանի և Սյունիքում Վուրգ Ոսկանյանի զորամիավորումները զինելուն և հանդերձավորելուն: Այդ օգնությունն իրականացվում էր հիմնականում դոցենտներ Նորայր Գալստյանի և Ֆրիկ Մելիք-Ադամյանի ջանքերով: Մեծ ծավալի աշխատանք կատարեց Արևելագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը: Համալսարանի գիտական պոտենցիալի և լաբորատորիաների ջանքերով աշխատանք էր տարվում զենքի արտադրության ուղղությամբ: «Ալազանի» հակակարկտային գլխիկը փոխարինվեց մարտական գլխիկով և դրա փորձարկումը Ն. Գալստյանի, Ֆ. Մելիք-Ադամյանի և մի քանի փորձագետների հետ կատարեցինք Սիսիանի իմ Ծղուկ գյուղի ձորում:

Արցախի ազատագրական պայքարին Երևանի պետական համալսարանի հսկայական ներդրումը, մշտական օգնությունը և ուշադրությունը ՀՀ առաջին իշխանությունների կողմից համապատասխան գնահատմամբ չարժևորվեց: Ամեն ինչ մնաց ստվերում: Ավելին, Հայաստանի առաջին իշխանություններն անհասկանալի վարքագծով ոչ միայն չգնահատեցին ԵՊՀ ռեկտորի, ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյանի Մոսկ-

վայում կատարած հսկայածավալ գործունեությունը, այլև Մոսկվայից վերադառնալուն պես նրան ազատեցին պաշտոնից: Դրան հաջորդեց նաև պրոռեկտորներիս ազատման հրամանը:

Այդ ամենով հանդերձ, հետագա տարիներին Հ. Հանրապետության իշխանությունները գնահատեցին Երևանի պետական համալսարանի տասնամյակների իմ աշխատանքը և գործունեությունը: ՀՀ նախագահ Ռ. Ս. Քոչարյանի հրամանագրով 1999 թ. Երևանի պետական համալսարանի 80-ամյա հոբելյանի կապակցությամբ, պարգևատրվեցի «Մովսես Խորենացի» մեդալով: ՀՀ նախագահ Ս. Ա. Սարգսյանի հրամանագրով ծննդյանս 80-ամյակի կապակցությամբ ինձ շնորհվեց Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Տարբեր առիթներով պարգևատրվել եմ վարչապետի շնորհակալագրով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվոգրով, ծննդյանս 70, 75 և 80-ամյակներին պարգևատրվել եմ ԵՊՀ երկու ոսկե մեդալներով, ԳԱԱ-ի Վ. Համբարձումյանի անվան հուշամեդալով, ՀՀ Կենտրոնական բանկի ոսկե հուշամեդալով, ՀՊՏՀ-ի ոսկե հուշամեդալով: Ծննդյանս 80-ամյակի կապակցությամբ Սյունիքի մարզպետարանի կողմից ինձ շնորհվել է «Պատվավոր սյունեցու» բարձր կոչում, իսկ Սիսիանի քաղաքապետի կողմից՝ պատվոգիր: Բոլոր պարգևներն էլ ինձ համար թանկ են և բոլորի համար շատ շնորհակալ եմ:

Սակայն, ստիպված եմ ավելացնել, որ իմ 85-ամյա անձնական և 60-ամյա համալսարանական կյանքը միայն ծափերով ու պարգևատրումներով չի անցել: Առնչվել եմ բազմաթիվ անարդարությունների և ունեցել շատ ծանր կորուստներ, ստացել դաժան հարվածներ: Որպես ասածիս կոնկրետացում, մեջբերեմ ծննդյանս 80-ամյակին «Երևանի համալսարան» թերթի թղթակցի հետ կայացած զրույցս:

Թղթակից - Պարոն Ղարիբյան, որպես կայացած երջանիկ մարդ, ու՞մ կառանձնացնեիք Ձեր հաջողություններում:

- Ամենից առաջ ծնողներիս, գյուղի դպրոցը և, իհարկե, հիմնականում համալսարանը՝ իմ դասախոսներ՝ պրոֆեսորներ Ջ. Գ. Բաշինջաղյանին, Ս. Ա. Բաղալյանին, Մ. Հ. Ադոնցին, ակադեմիկոս ռեկտորներ Մ. Գ. Ներսիսյանին, Ս. Ա. Համբարձումյանին, Ռ. Մ. Մարտիրոսյանին և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Հ. Սիմոնյանին: Արդարացի լինելու և ապերախտ չդառնալու համար, պարտավոր եմ հատուկ ընդգծել ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյանի մեծ դերը իմ կայացման գործում: Ի վերջո, **իմ կյանքի բոլոր հաջողություններում, մինչև այսօր էլ հիրավի մեծ է կնոջս՝ Գայանե**

Սողոմոնի Բուռնազյանի դերը, ով անտրտունջ տարել է մեր ընտանիքի բոլոր դժվարությունները:

- Ո՞րն եք համարում Երևանի պետական համալսարանում Ձեր լուծած ամենամեծ հարցը:

- 1984 թ.-ի Տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացումը, ինչը, ցավոք, այսօր համարյա մոռացվել է:

- Որո՞նք են Ձեր 80 տարիների չգրված մռայլ էջերը:

- **Առաջինը**՝ 1938 թվականին հորս բանտարկվելը: **Երկրորդ**՝ Հայրենական պատերազմում եղբայրներիս՝ Երվանդի և Հայկազի զոհվելը: **Երրորդը**՝ 1973 թ. պաշտպանածս դոկտորական ատենախոսության հաստատման 4 տարվա ձգձգումը: Այդ տարիներում պաշտպանված և չհաստատվող հինգ դոկտորական ատենախոսությունները հաստատվեցին միայն այն բանից հետո, երբ ԽՍՀՄ ԲՈՀ-ի պլենումի հայաստանյան ակադեմիկոս անդամն ազատվեց զբաղեցրած պաշտոնից և նրա տեղը նշանակվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, լուսահոգի Ստեփան Սիտարյանը: **Չորրորդը**, երբ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնի համար ներկայացվեց իմ թեկնածությունը, Մոսկվայից մեր կենտկոմը ստացավ խիստ բացասական կարծիք 1977 թ. ռուսերենով լույս տեսած մենագրությանս մասին: Ընդ որում, ոչ միայն մերժվում էր պրոռեկտոր դառնալու իմ թեկնածությունը, այլև պահանջվում էր հետ վերցնել ինձ շնորհված տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանը: Ութ ամիս տևեցին այդ քննարկումները, և միայն ԵՊՀ ռեկտոր Ս. Համբարձումյանի ու ակադեմիկոս Ս. Սիտարյանի ջանքերով հնարավոր դարձավ մերկացնել ու չեզոքացնել այդ ծանր զրպարտությունը, և ՀՀ Կենտկոմի քարտուղար, լուսահոգի Կ. Դեմիրճյանը ստորագրեց հրամանս:

Դրանից հետո ևս եղան ստորություններ, որոնց մասին այսօր ավելորդ եմ համարում գրել, մանավանդ, որ երկու ապերախտ հեղինակներն Աստծո կողմից արդեն պատժվել են:

Իմ խորը ցավը. ծննդավայրս՝ սքանչելի Բորիսովկա գյուղը մանկությանս հետ անհետք մնացին Որոտանի Սպանդարյան ջրամբարի տակ...

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանում Գրիգորի Ալեքսանդրովիչի հետ աշխատել և համագործակցել եմ, երբ նա ԵՊՀ նոր վերաբացված տնտեսագիտության ֆակուլտետի ղեկանն էր: Դժվար ու ծանր տարիներ էին: Պետք է վերափոխվեր տնտեսագիտական կրթական համակարգը: Ամեն ինչ պետք է սկսվեր դասախոսների վերապատրաստումից: 1990-ական թվականների ցուրտ ու մութ տարիներին Գրիգորի Ալեքսանդրովիչի ջանքերով ամերիկյան համալսարանում կազմակերպվեցին դասախոսների վերապատրաստման երեքամսյա կուրսեր՝ ղեկանի և բոլոր դասախոսների մասնակցությամբ: Դա կարևոր քայլ էր, բայց ոչ հիմնականը: Բարձր որակավորման ժամանակակից տնտեսագետ դասախոսներով ֆակուլտետը համալրելու հիմնական ուղին ասպիրանտական կրթությունն էր: Ռեկտորատն այդ տարիներին բոլորից շատ ասպիրանտական տեղեր հատկացնում էր տնտեսագիտության ֆակուլտետին: Բացի դրանից՝ ղեկանը, օգտագործելով իր անձնական ծանոթությունները, նպաստեց, որ ֆակուլտետի լավագույն շրջանավարտներից տարեկան 3-4 հոգի 5-6 տարի շարունակ անվճար ասպիրանտական կրթություն ստանան Մոսկվայի պետական համալսարանում և դառնան ժամանակակից բարձր որակավորման դասախոսներ:

Տնտեսագիտական կրթության վերակառուցման և զարգացման վրա դրականորեն ազդեց նաև Ֆրեզնոյի համալսարանի հետ ֆակուլտետի և համալսարանի ջանքերով չորսամյա արդյունավետ համագործակցությունը: Ահա այդ բոլորի արդյունքում կայացավ այսօրվա Երևանի պետական համալսարանի բարձր որակավորմամբ, մրցունակ Տնտեսագիտական ֆակուլտետը:

Ինչ վերաբերում է հոբելյարի մարդկային նկարագրին՝ նա իր բարեխիղճ աշխատանքով, գիտական հեղինակությամբ, բարի ու համեստ խառնվածքով վայելում է մտավորականների մեծ հարգանքը: Այդ պատճառով հեշտ ու հաճելի է նրա հետ աշխատելը և համագործակցելը:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Գրիգորի Ալեքսանդրովիչին ճանաչում եմ շուրջ 40 տարի: 1977-1978 թթ. նա Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեի երկրորդ քարտուղարն էր, իսկ 1978-1991 թթ.՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը: Դրանից հետո մեր համագործակցությունը և բարեկամությունը շարունակվում է ՀՀ ԳԱԱ շրջանակներում:

Երևանի պետական համալսարանում համատեղ աշխատելու տարիներից կառանձնացնեի՝ **առաջին**՝ նրա գլխավորած հանձնաժողովի արդյունավետ գործունեությունը ՀԽՍՀ գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանին և հայ մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակին ԵՊՀ պատմության ֆակուլտետի պրոֆեսոր Խ. Բաղալյանի կողմից կուսակցական վերադաս մարմիններին ներկայացրած զրպարտությունների բացահայտումը և դատապարտումը:

Երկրորդ՝ պրոռեկտորության տարիներին համալսարանական կյանքի հումանիզացման զարգացումներին նրա արդյունավետ աշխատանքը բոլոր ֆակուլտետներում հայոց պատմություն դասավանդելու մասին որոշման ընդունման, ինչպես նաև Փիլիսոփայության ու սոցիոլոգիայի, օտար լեզուների ֆակուլտետների բացման և հատկապես տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացման հարցերում:

Երրորդ՝ 1989-1990 թթ. որպես պատգամավոր Մոսկվայում իմ գտնվելու տարիներին Արցախի ազատագրական պայքարին նրա կողմից Երևանի պետական համալսարանի հսկայածավալ աջակցության և օգնության կազմակերպումը: Դժբախտաբար նոր կայացած իշխանությունների կողմից նրա այդ մեծ ներդրումը չգնահատվեց:

Որպես Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր՝ Գրիգորի Ալեքսանդրովիչն իր պարտականությունները կատարում էր բարեխղճորեն, առանց ավելորդ արհեստական բարդացումների և վայելում էր ռեկտորատի ու համալսարանականների մեծ հարգանքը: Իբրև մարդ՝ համեստ է. նա չտրվեց ժամանակի կերպարանափոխություններին: Մնաց անդավաճան ու ազնիվ:

ՀԻՍՈՒՆ ՏԱՐԻ ՄԻԱՍԻՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Գ. Ա. Ղարիբյանին ճանաչում եմ անցյալ դարի 60-ական թվականների կեսից: Ես ասպիրանտ էի, ֆակուլտետի ՈՒԳԸ խորհրդի նախագահ, ինքը՝ երիտասարդ դասախոս, ՈՒԳԸ գիտական ղեկավար: Այնուհետև համատեղ աշխատել ենք ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում, գիտահետազոտական աշխատանք կատարել ՀԽՍՀ պետպլանի տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտում:

Պրոֆ. Ղարիբյանը միշտ էլ օրինակելի էր ու իբրև դասախոս, ավագ ընկեր, և արդյունավետ՝ որպես գիտական աշխատող: Հատկապես ուշագրավ են նրա աշխատությունները անհրաժեշտ և հավելյալ արդյունքի, բնակչության կենսամակարդակի բարդ տեսական հիմնախնդիրների վերաբերյալ, գիտական շրջանակներում բարձր գնահատականի արժանացան նրա և պրոֆ. Ա. Խ. Կարապետյանի համատեղ ընտրանքային հետազոտությունների արդյունքները բնակչության բյուջեների, եկամուտների և ծախսերի դիֆերենցիալ հաշվեկշռի մասին:

1975 թ. երկրորդ անգամ (առաջինը 1930-ին էր) Տնտեսագիտական ֆակուլտետը առանձնացավ, դարձավ առանձին բուհ, սակայն Գ. Ղարիբյանը մնաց ԵՊՀ-ում՝ զբաղեցնելով համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, Տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի պատասխանատու պաշտոնները:

1984-ին նրա նախաձեռնությամբ վերաբացվեց Տնտեսագիտության ֆակուլտետը, առանց որի համալսարանն ամբողջական չէր լինի: Նա ջանք ու եռանդ չխնայեց նորաբաց ֆակուլտետը կայացնելու համար՝ որոշ ժամանակ նաև վարելով ֆակուլտետի դեկանի պաշտոնը: Իր հարազատ օջախում այսօր էլ նա՝ իբրև Տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆեսոր, ֆակուլտետում գործող մասնագիտական խորհրդի նախագահ եռանդով շարունակում է իր գիտամանկավարժական գործունեությունը, հրատարակում նոր արժեքավոր աշխատություններ, ակտիվորեն մասնակցում բարձր որակավորմամբ տնտեսագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը՝ շրջապատված իր սաներով, երիտասարդ ու ավագ սերնդի գործընկերներով: Իր երկարամյա ու բեղուն աշխատանքով նա արդարացիորեն արժանացել է կրթության ու գիտության ոլորտում հնարավոր բարձր պարգևների և կոչումների: ՀՀ գիտության վաստակավոր գործիչ է, ՀՀ

ԳԱԱ թղթակից անդամ:

Հրաշալի ընտանիքի հայր է Գ. Ղարիբյանը: Ունի զավակներ, թոռներ: Շատ ափսոս, որ տիկին Գայանեն, հրաժեշտ տալով կյանքին, ի վիճակի չէ մասնակցելու իր սիրելի ամուսնու հերթական հոբելյանին:

Շատ հարգելի պարոն Ղարիբյան, սիրով շնորհավորում եմ Ձեր 85-ամյակը, ցանկանում եմ երկար տարիների առողջություն, ստեղծագործական նորանոր նվաճումներ:

ՅՈՒ. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԳՐԻԳՈՐ ԱԼԵՔՍԱՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ - 85. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

Լրացավ անվանի գիտնական, հայ տնտեսագիտական մտքի ակնառու ներկայացուցիչ, մեծ մանկավարժ Գրիգոր Ալեքսանի Ղարիբյանի 85-ամյակը: Պրոֆեսոր Գ. Ղարիբյանի անցած ճանապարհն արժևորվում է իր գիտաուսումնական հետաքրքրություններին վերաբերող տնտեսագիտության հիմնախնդիրների խորն իմացությամբ, մարդկային հարաբերությունների նրբություններին տիրապետելու և դասավանդելու բնատուր ունակություններով և ազգային արժեքների պահպանմամբ ու զարգացմամբ մտահոգ հայ մտավորականի նրա տեսակով:

Պրոֆեսոր Գ. Ղարիբյանի կյանքի 60 տարիներն անմնացորդ նվիրված են եղել մարդկային կապիտալի զարգացման և մեր երկրի բարգավաճմանն ուղղված հիմնախնդիրների լուծմանը: Գիտակրթական ոլորտում ունեցած անուրանալի ծառայությունների համար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Ղարիբյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով, նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Վաստակաշատ մտավորականը և պատվավոր սյունեցին արժանացել է նաև ՀՀ Ազգային ժողովի, Կառավարության, Կրթության և գիտության նախարարության, Կենտրոնական բանկի, Գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ոսկե մեդալների և մի շարք այլ պարգևների:

Գիտական գործունեության ասպարեզում հատկապես կարևորվում է պրոֆեսոր Գ. Ղարիբյանի կողմից դիտարկվող հիմնախնդիրների խիստ արդիականությունն ու հետազոտական մտքի խորությունը: Նրա մասնակցությամբ ու ղեկավարությամբ հրապարակված աշխատություններն ու դասագրքերը ուսումնասիրողների և երիտասարդների բազմաթիվ սերունդների համար դարձել են տնտեսագիտության հիմունքների յուրացման կարևորագույն միջոց: Մեր նորանկախ երկրում պրոֆեսոր Գ. Ղարիբյանը սահուն մուտք գործեց ազատական տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունների շրջան: Այն իր դրսևորումը ստացավ ինչպես կազմակերպչական, այնպես էլ գիտահետազոտական ասպարեզներում:

Պրոֆեսոր Գ. Ղարիբյանը աշխատել է ՀՀ գիտակրթական հեղինակավոր կենտրոններում և հրապարակել է 100-ից ավելի գիտական աշ-

խատանքներ և մի շարք մենագրություններ: Աշխատանքային գործունեության 60 տարիներն անցկացրել է Երևանի պետական համալսարանում: Անկախության տարիներին լինելով համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ նա մեծապես նպաստեց մի շարք ֆակուլտետների և մասնագիտությունների կայացմանը: Հատկապես մեծ է նրա ավանդը Երևանի պետական համալսարանի կազմում տնտեսագիտության ֆակուլտետի վերացման գործում: Դեռևս 1984 թ. պրոֆեսոր Ղարիբյանի ջանքերի շնորհիվ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտից տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը տեղափոխվեց Երևանի պետական համալսարան և հետագայում, որպես այդ ֆակուլտետի դեկան, նա ամեն ինչ արեց այն դարձնելու միջազգային ժամանակակից ամենաբարձր պահանջներին բավարարող տնտեսագիտության դարբնոց: Դրա զարգացմանը նպաստեց նաև պրոֆեսոր Ղարիբյանի կողմից տասնամյակներ շարունակ ղեկավարվող տնտեսագիտության գծով գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհուրդների գործունեությունը:

Պրոֆեսոր Գ. Ղարիբյանի հետազոտությունները նվիրված են անցումային տնտեսություններում բնակչության կենսամակարդակի բարձրացման, բաշխման և վերաբաշխման գործընթացների կարգավորման, կապիտալի նախասկզբնական կուտակման, աշխատանքի շուկայի ձևավորման, մարդկային կապիտալի զարգացման և այլ հիմնախնդիրներին: Դրանք այն կարևորագույն հարցերն են, որոնք տարբեր ուժգնությամբ կանգնում են կենտրոնացված կառավարման մոդելից ազատական տնտեսական հարաբերություններին անցնող ցանկացած երկրի առջև և որոնց լուծումը պահանջում է հետևողական աշխատանք: Նշված խնդիրներին զուգահեռ, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, Հայաստանի Հանրապետությունը կանգնեց նաև արտագաղթի հիմնահարցի առջև, որը կարող է ունենալ լուրջ բացասական ազդեցություն երկրի ազգային անվտանգության վրա: Այս հարցերի լուծումը ևս գտնվում է պրոֆեսոր Գ. Ղարիբյանի սևեռուն ուշադրության կենտրոնում:

Պրոֆեսոր Գ. Ղարիբյանի երկարամյա և բարեխիղճ աշխատանքին, նրա մարդկային բարի և իմաստուն խառնվածքին մեր համոզմամբ մեծապես նպաստել է նաև նրա ընտանիքը և հատկապես երջանկահիշատակ տիկին Գայանեն: Այս ամենը պայմանավորել է պրոֆեսորի նկատմամբ ինչպես համալսարանականների, այնպես էլ մտավորականության

լայն շերտերի մեծ հարգանքը:

Շնորհավորում ենք հարգարժան մարդուն, վաստակաշատ մանկավարժին ու գիտնականին՝ նրան մաղթելով քաջառողջություն:

Պրոֆեսորներ՝ ԵՊՀ տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Լ. Սարգսյան
Վ. Բ. Բոսպանջյան
Ա. Վ. Դարբինյան
Ա. Խ. Մարկոսյան

ՄԵՐ ԴԱՍԱԽՈՍԸ

Ավելի քան չորս տասնամյակ է, ինչ ճանաչում ենք տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ Գրիգոր Ալեքսանի Ղարիբյանին: Մենք բախտավորություն ու պատիվ ենք ունեցել լինելու նրա ուսանողները Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում սովորելու տարիներին: Տնտեսագիտության, այն ժամանակ քաղաքատնտեսության առաջին իսկ դասախոսությունները մեծ հետաքրքրություն առաջացրին մեր մեջ և, թերևս, դա վճռորոշ դեր խաղաց մեր հետագա կյանքում: 1970-ական թթ. սկզբին ի՞նչ իմանայինք, որ մեր սիրելի դասախոսի միջոցով ներկայացված տնտեսագիտությունը հրապուրելու է ու ներքաշելու իր զարմանահրաշ աշխարհը: Տասնամյակներ անց, երբ վերհիշում ենք այդ ժամանակաշրջանը, հասկանում ենք, թե այս կամ այն առարկայի, մասնագիտության տիրապետման համար ինչ նշանակություն ունի գիտելիքներ փոխանցող անձը: Պրոֆեսոր Գ. Ղարիբյանն իր հիմնական պարտականությունը չի համարել միայն գիտելիք փոխանցելը, նա նպաստել է նաև ուսանողների բնավորության, ունակությունների, արժեքային համակարգի ձևավորմանը, ինչն էլ պարարտ հող է ստեղծել նրա սերմանած գիտելիքների ծլարձակման համար: Նրա գրավիչ ու հարուստ, կարծես Սիսական աշխարհի աղբյուրներից սկիզբ առնող, այդ աղբյուրների նման զուլալ ձայնը, ուսանողների և ընդհանրապես շրջապատի հետ շփվելու մշակույթը նույնպես նպաստել են դրան: Իսկապես՝ դասախոսի, մանկավարժի չափանիշ:

Կ. Լ. Աթոյան: Ինչպե՞ս էր ընկեր Ղարիբյանը նպաստում մեր բնավորության ու արժեքային համակարգի ձևավորմանը: Այսպես, օրինակ՝ դասախոսություններից մեկի ժամանակ նա ինչ-որ բանաձև գրեց գրատախտակին: Հետո, նայելով դրան, ջնջեց տառերից մեկը, որն այնքան էլ պարզ ու գեղեցիկ չէր ստացվել, ու գրեց նորը: Այդ պահին մի քանի ուսանողներ բարձրաձայն ծիծաղեցին: Նա հանգիստ շրջվեց դեպի լսարանը ու ժպիտով ասաց. «Պետք է կարողանալ ներողամիտ լինել: Ներել կարողանալը բնորոշ է ուժեղ մարդկանց»: Ընդամենն այդքանը. ու շարունակեց դասը: Այդ կարճ նախադասությունն ինձ համար ավելի մեծ դաս էր: Դա, ցանկացած պարագայում, միմյանց նկատմամբ ներողամիտ ու հանդուրժող լինելու հորդոր էր, մարդկանց հետ շփվելու մշակույթ: Ոչ շատ հաճախ, սակայն անդրադառնում էր իր փոքր հայրենիքի՝ Սիսիանի

բնաշխարհին, մարդկանց ՝ հասարակ ու նշանավոր, ինչպիսին էին Իսրայել Օրին, Նիկողայոս Ադոնցը, Համո Սահյանը... Այդպես՝ բնական ու առանց պարտադրանքի է ձևավորվում մարդու արժեքային համակարգը, սերը դեպի հայրենիքը, ակնածանքն ազգը բարձրացնող նշանավոր մարդկանց հանդեպ: Այդպիսի «համեմունքներով» հարուստ դասախոսություններն ուսանողներին տրամադրում էին ոչ միայն սովորելու, այլև համակողմանի զարգանալու, ուսումնասիրելու սկզբնաղբյուրներ՝ Կ. Մարքս, Ա. Սմիթ...

Գ. Ի. Վարդանյան - Հիշում եմ, որ առաջին կուրսում քաղաքատնտեսության քննության այնքան էլ լավ պատրաստված չէի: Քննության ընթացքում Գ. Ղարիբյանն անընդհատ փորձում էր ուղղորդել, բացահայտել, թե տրամաբանորեն կկարողանամ, արդյո՞ք, պատասխանել հարցերին: Հետո իր յուրահատուկ ժպիտով ու ցածր ձայնով ասաց. «Բուռնազյանը (Ղարիբյանի կինը) ասել է, որ սեմինարների ժամանակ ակտիվ ես եղել: Ինչու այս հարցին լիարժեք չպատասխանեցիր»: Ես պատճառաբանեցի, թե մինչև ընդունվելը մի քանի ամիս աշխատել եմ՝ ստաժի համար ու հնարավոր է՝ գերհոգնած եմ: Քաղաքատնտեսությունը երրորդ քննությունն էր: Ես արդեն հասցրել էի երկու «բավարար» ստանալ մյուս քննություններից: Այն ժամանակ որոշ դասախոսներ սովորություն ունեին նախքան բարձր գնահատական նշանակելը նայել, թե ինչ ես ստացել նախորդ քննություններից. թեկուզ մեկ «երեքի» պարագայում դժվար թե «հինգ» նշանակեին: Բայց Ղարիբյանն այդպիսի դասախոսներից չէր, և ես ստացա իմ առաջին «հինգը» համալսարանում, ինչը հոգեբանական առումով դրական ազդեցություն ունեցավ հետագայում: Ու քանի որ այդ «հինգի» մեջ իր ներդրումն ուներ լուսահոգի ընկեր Բուռնազյանը, ապա կցանկանայի մի երկու խոսք ասել նրա մասին: Գայանե Սողոմոնի Բուռնազյանը վարում էր քաղաքատնտեսության սեմինարները: Նա հայ կնոջ կատարյալ կերպար էր. համեստ ու առաքինի, ներքին ինչ-որ խորհրդավորությամբ ու խոր ներաշխարհով: Նա կարողանում էր ուսանողներին գրավել իր ուշադիր վերաբերմունքով, տրամադրում էր սովորելու՝ առանց պարտադրանքի: Ղարիբյան-Բուռնազյան զույգը ներդաշնակ, սիրո հենքով ձևավորված հայկական ընտանիքի օրինակ էր:

Արգասաբեր ուղի է անցել Գրիգոր Ղարիբյանը, կրթել տնտեսագետների մի քանի սերունդ ու այսօր էլ շարունակում է իր փառավոր ուղին՝ սեփական գիտելիքներն ու կյանքի հարուստ փորձը փոխանցելով իր ուսանողներին և կրտսեր գործընկերներին:

Պրոֆեսոր Գրիգոր Ալեքսանի Ղարիբյանի ուսանողներ՝

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Կ. Լ. Աթոյան,**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Գ. Ի. Վարդանյան:**

ԳՐԻԳՈՐ ԱԼԵՔՍԱՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ - 80. ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԾ ԿՅԱՆՔ

Այս տարի լոսցավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ գիտության վաստակավա գործիչ Գրիգոր Ալեքսանի Ղարիբյանի ծննդյան 80-ամյակը: Ի դեպ, կյանքի - 55 տարիների ընթացքում նա աշխատում է Երևանի պետական համալսաանում:

Պքոֆեսոր Գ. Ղարիբյանը նախնառաջ **համալսարանական դասախոս է:** Նրա դասախոսություններն առանձնանում են գիտական խորությամբ և գրավչությամբ: 1971 թ.-ին պրոֆ. Զ. Բաշինջաղյանի և դոց. Վ. Գաբուչյանի հետ հեղինակել է «Մինչմոնոպոլիստական կապիտալիզմ» ուսումնական ձեռնարկը: Նրա համահեղինակությամբ 2004 թ.-ին հրատարակվել են «Մարդկային զարգացման հիմունքներ» ուսումնական ձեռնարկը (մագիստրանտների համար) և «Տնտեսագիտություն» դպրոցական դասագիրքը:

Պրոֆ. Գ. Ղարիբյանը միաժամանակ **գիտնական-հետազոտող է:** Ասպիրանտական տարիներին նա սովորել է Մոսկվայի տնտեսագիտական դպրոցի ավանդույթներով: 1966-76 թվականներին համատեղությամբ ղեկավարել է ՀԽՍՀ պետպլանի գիտահետազոտական ինստիտուտի սոցիալ-տնտեսական հետազոտությունների բաժնի աշխատանքները: 1960-ական թվականներից մինչև այժմ պրոֆ. Գ. Ղարիբյանն արդյունավետ գիտահետազոտական աշխատանքներ է կատարում այնպիսի կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են բնակչաթյան կենսամակարդակի բարձրացման պրոբլեմները: Համընդհանուր ճանաչման է արժանացել տնտեսագիտաթյան մեջ կատարած նրա այն ներդրումը, որ վերը նշված հիմնախնդիրները հետազոտվել են անհրաժեշտ արդյունքի տեսական հիմքերի, ռեգիոնալ առանձնահատկությունների և մեր հանրապետության համար գործնական առնչությունների համակարգում: Այդ խնդիրների վերաբերյալ նա հրատարակել է 80-ից ավելի գիտական աշխատանքներ, որոնցից վեցը՝ Մոսկվայում: Նրա գիտական հետազոտությունները բարձր են գնահատվել ոչ միայն Հայաստանամ, այլև նրա սահմաններից դուրս: Այսպես՝ նրա «Բնակչության կենսամակարդակի պրոբլեմները....» (ռասերեն, 16 մամուլ, 1977 թ.) մենագրության գրախոսականում՝ տպագրված «Экономические науки» ամսագրում, պրոֆ. Բ. Ռակիտսկին աշխատաթյունը բնորոշել է որպես ռեգիոնալ աս-

պեկտների կտրվածքով միանգամայն նոր մոտեցումների և ինքնատիպ լուծումների օրինակ:

Պրոֆ. Ղարիբյանը պրոֆ. Ա. Կարապետյանի հետ Հայաստանում ստեղծեցին բնակչության կենսամակարդակի սոցիալական պրոբլեմների հետազոտման որոշակի գիտական ուղղություն-դպրոց: Այդ պրոբլեմների շուրջ նրա ղեկավարությամբ ատենախոսություններ են պաշտպանել 40 ասպիրանտ և հայցորդ: Շուրջ 20 տարի է, ինչ վաստակաշատ գիտնականը ԵՊՀ տնտեսագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է:

Պրոֆ. Գ. Ղարիբյանը մեծ ավանդ ունի **նաև համալսարանի և Տնտեսագիտության ֆակուլտետի ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման գործում:** 1976-78 թվականներին նա եղել է ԵՊՀ կուսակցական կոմիտեի երկրորդ քարտուղարը՝ բազմաթիվ կնճռոտ հարցերի արդարացի լուծման գործում դրսևորելով սկզբունքային ու հայեցի մոտեցում: 1987 թ.-ից մինչև 1991 թ.-ը պրոֆ. Ղարիբյանը եղել է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ իր մասնակցությունն ունենալով Փիլիսոփայության և Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետների կայացման և մի շարք նոր մասնագիտությունների ու ամբիոնների բացման գործում:

Նրա գործուն և հետևողական ջանքերի շնորհիվ 1984 թ.-ին Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտից տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը տեղափոխվեց համալսարան, և հետագայում նա, որպես այդ ֆակուլտետի ղեկան, ամեն ինչ արեց՝ այն դարձնելու միջազգային ժամանակակից ամենաբարձր պահանջները բավարարող էլիտար ֆակուլտետ:

Պրոֆ. Ղարիբյանն իր երկարամյա բարեխիղճ աշխատանքով, իր մարդկային բարի ու համեստ խառնվածքով վայելում է համալսարանականների և ընդհանրապես հանրապետության մտավորականների մեծ հարգանքը:

Բարձր են գնահատվել նրա գործունեությունը և աշխատանքը: 2000 թ.-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: ԵՊՀ 80-ամյա հոբելյանի կապակցությամբ պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով, իսկ ֆակուլտետի վերաբացման 20-ամյակի առթիվ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրով, իր ծննդյան 70-ամյակի առթիվ էլ՝ ԵՊՀ ոսկե հուշամեդալով, իսկ ԵՊՀ 90-ամյակի կապակցությամբ՝ ՀՀ վարչապետի շնորհակալագրով:

80 տարի ճիշտ ապրած և 55 տարի համալսարանին անմնացորդ նվիրված մանկավարժ-գիտնականն այսօր էլ լի է իր ժողովրդին և հարազատ կրթօջախին ծառայելու ավյունով:

Շնորհավորում ենք հարգարժան մարդուն, վաստակաշատ մանկավարժին և գիտնականին՝ նրան մաղթելով քաջ առողջություն:

Հ. Լ. Սարգսյան
ԵՊՀ տնտեսագիտության
ֆակուլտետի դեկան

Վ. Հարությունյան
ՀՀ ԳԱԱ Քոչարյանի անվան
ինստիտուտի տնօրեն

Այս տարի՝ մայիսի 25-ին, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Գրիգոր Ալեքսանի Ղարիբյանի ծննդյան 80-ամյակը նշվեց Մայր բուհում՝ ԵՊՀ ռեկտորատի և ՀՀ ԳԱԱ նախագահության միացյալ նիստում: ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և անձամբ իր անունից պրոֆեսորին շնորհավորեց ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը: Վաստակավոր համալսարանականին շնորհավորելու էին եկել նաև ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, ակադեմիկոս Ս. Համբարձումյանը, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վ. Գաբրիելյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Յ. Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ա. Թռչունյանը Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ա. Դարբինյանը, «Սյունիք» հայրենակցական միության վարչության անդամ, պրոֆ. Փ. Միրզոյանը, Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտի տնօրեն, պրոֆ. Ա. Դարբիյանը: Ծննդյան 80-ամյանի կապակցությամբ պրոֆեսորի պարգևների թիվը մի քանիսով էլ աճեց. Գրիգոր Ղարիբյանը ստացավ ԵՊՀ երկրորդ ոսկե մեդալը, պարգևատրվեց ԵՊՏՀ-ի, ՀՀ կենտրոնական բանկի ոսկյա հուշամեդալներով: Նիստի ավարտին իր շնորհակալական խոսքով կյանքի 55 տարին համալսարանին նվիրած պրոֆեսորը շեշտեց. «ՀՀ ԳԱԱ մեծարգո նախագահ, ԵՊՀ-ի մեծարգո ռեկտոր, հարգարժան հյուրեր, ընդունեք իմ խորին երախտագիտությունը և շնորհակալությունը մեծարման այս երջանիկ օրն ինձ նվիրելու համար: Մասնավորապես շնորհակալ եմ Երևանի պետական համալսարանին՝ 60 տարի առաջ ինձ որպես ուսանող ընդունելու և հաջորդ 55 տարիները դասախոսելու և մի շարք պատասխանատու պաշտոններ վստահելու համար: Համալսարանի նկատմամբ իմ պարտքը լրիվ հատուցած չեմ համարում: Առաջիկայում ուժերիս ներածի չափ կշարունակեմ ևս նվիրումով ծառայել նրան: Նորից շնորհակալություն բոլորիդ»:

«Երևանի համալսարան»
Դեկտեմբեր 2010 թ.

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԲ-Ի ԵՎ ԵՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՊԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՆ

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը եղել է և մնում է ՀՀ բանկային համակարգի, այդ թվում՝ ՀՀ ԿԲ-ի կադրերի համալրման կենտրոն: Ֆակուլտետի և ԿԲ-ի համագործակցության շատ կարևոր ուղղություն է համատեղ գիտահետազոտական գործունեությունը, որը նոր երևույթ է: Մասնավորապես, մասնակցելով ԿԲ-ի կողմից մի շարք թեմաների գծով հայտարարված մրցույթին, տնտեսագիտության տեսության ամբիոնը շահեց «ՀՀ աշխատուժի շուկայի վերլուծությունը» թեմայով մրցույթը (գիտահետազոտական խմբում ներգրավված են ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Ղարիբյանը (ղեկավար), դոցենտներ Գ. Եգանյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Խառատյանը, Մ. Եղիազարյանը, Ա. Մարտիրոսյանը, Գ. Սիրոյանը և դասախոս Հ. Մկրտչյանը):

Գիտահետազոտական աշխատանքի ավարտից հետո, ամփոփելով արդյունքները՝ ԿԲ-ն, ի դեմս փոխնախագահ Վաչե Գաբրիելյանի, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանին ուղղված նամակում գոհունակություն հայտնեց ԵՊՀ աշխատանքային խմբի հետ եռամյա արդյունավետ համագործակցության կապակցությամբ: Եվ, հատկապես, աշխատանքային խմբի ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ Գրիգոր Ղարիբյանի կառուցողական և գիտաստեղծագործական մոտեցման առթիվ:

ՀՀ ԿԲ-ի կողմից մրցույթի համար ընտրված «ՀՀ աշխատուժի շուկայի վերլուծությունը» թեման իմաստավորված է: Սակավ ռեսուրսներ ունեցող Հայաստանը հարուստ է հիմնականում մարդկային կապիտալային ռեսուրսով, բարձր որակավորման աշխատուժով, որն ունի գիտելիքների զարգացման և կուտակման անսահմանափակ հնարավորություններ:

Հետազոտությունը «ՀՀ աշխատուժի շուկայի վերլուծությունը» վերնագրով, 200 էջ ծավալով, առանձին գրքով 2010 թ.-ին տպագրվել է:

ՀՀ կենտրոնական բանկի պատվերով, պրոֆ. Գ. Ա. Ղարիբյանի գիտական ղեկավարությամբ, ԵՊՀ-ի տնտեսագիտության ֆակուլտետի տարբեր ամբիոնների հինգ դասախոսների մասնակցությամբ (դոցենտներ՝ Գ. Եգանյան, Ա. Համբարձումյան, Կ. Ավետիսյան, Մ. Եղիազարյան և դասախոս՝ Հ. Մկրտչյան) հետազոտվեց «ՀՀ մարդկային

կապիտալը և նրա կորուստների կանխման հիմնախնդիրները» թեման, որը 2013թ. հուվարին ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրական գնահատականով ընդունվել է:

ՀՀ կենտրոնական բանկի թեմատիկայով և պատվերներով չեն սահմանափակվում Գ. Ղարիբյանի գիտական հետազոտությունները: Այսպես, տնտեսագիտության տեսության ամբիոնի բազայի վրա, մյուս ամբիոնների դասախոսների մասնակցությամբ (պրոֆ. Հ. Սարգսյան, պրոֆ. Հ. Մարզպանյան, դոցենտներ՝ Ա. Խառատյան, Ա. Համբարձումյան, Մ. Եղիազարյան, Ն. Քոչինյան, դասախոս Հ. Մկրտչյան) պրոֆ. Գ. Ա. Ղարիբյանի գիտական ղեկավարությամբ, պրոֆ. Հ. Լ. Սարգսյանի գիտական խորհրդատվությամբ, պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվեց «Հարստության և եկամուտների բևեռացման առանձնահատկությունները և կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում» թեման, որը 2013 թ. առանձին գրքույկով հրատարակվել է:

Ավելին, 2011թ. ֆակուլտետի դոցենտ Ա. Հակոբջանյանի հեղինակցությամբ, պրոֆ. Գ. Ղարիբյանը հրատարակել է «Բաշխման և վերաբաշխման հարաբերությունները ՀՀ անցումային տնտեսությունում» ուսումնասիրությունը (140 էջ): Չեմ ուզում թվարկել հրատարակված նրա հոդվածները և իր ղեկավարությամբ պաշտպանված ատենախոսությունները: Տարբեր ամբիոնների համատեղ ուժերով գիտական հետազոտությունները ավելի արդյունավետ են, նպաստում են դասախոսների գիտական մակարդակի բարձրացմանը, լրացուցիչ վարձատրությանը և ԵՊՀ-ի եկամուտների, թեկուզ փոքր, ավելացմանը:

Ահա 85-ամյա մեր հոբելյարի վերջին 7-8 տարիների գիտական հետազոտությունների արդյունքները, որոնք նրա հաշվետվությունն ու արդյունավետ աշխատանքի վկայությունն են:

Ա. Հ. Առաքելյան
Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

Տե՛ս՝ «**Հայաստանի հանրապետություն**»
2009 թ., ապրիլի 23

ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԸ ԼԱՎ ԱՌԻԹ ԵՆ, ՈՐ....

Ասում են հոբելյանները լավ առիթ են, հոբելյարի անցած ճանապարհն արժևորելու, գնահատելու, իմաստավորելու համար:

Մեր հայրենակից ՀԳ ԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ-ի տնտեսագիտությա տնտեսության ամբիոնի պատվավոր վարիչ, «Մովսես Խորենացի» մեդալակիր, ՀՀ վարչապետի և ՀՀ նախագահի շնորհակալագրերի արժանացած Գրիգոր Ալեքսանի Ղարիբյանի ծննդյան 80-ամյակի նմանօրինակ լավ առիթներից էր նաև հայրենի եզերքում նրան մեծարելու, գիտության ու կրթության մեծ երախտավորի անցած ճանապարհն արժևորելու և նրա մեծարման հանդիսությունը Սիսիանի հիմնանորոգված մշակույթի տան դռնբացեքին հաճելիորեն զուգակցելու:

Երկու հոգևոր իրադարձություն՝ մեկը մյուսին լրացնող, մեկը մյուսով արժևորվող, մեկը մյուսով խորհրդանշական:

Թեև նշանավոր գիտնականի ծննդյան 80-ամյակը հավուր պատշաճի նշվել է ԵՊՀ-ում, ուր կյանքի և աշխատանքային գործունեության 55 տարին է անցկացրել գիտնականը, բայց, ինչպես գիտնականին և մեծ մարդուն է յուրահատուկ, նա անկեղծորեն խոստովանեց, որ կյանքի 80 տարիների մեջ առաջին անգամն է իր ծննդյան օրը նշվում այսքան շատ սիսիանցիների հետ, սիսիանցիների մեջ ու սիսիանցիների կողքին, ինչից նաև մարդկայնորեն շոյվել և հուզվել էր:

Միայն այն փաստը, որ մեծ գիտնականի 80-ամյակը նրա հետ հայրենի եզերքում նշելու էր եկել սիսիանյան ծագման գիտնականների, մշակույթի, արվեստի, հասարակական կյանքի հանրահայտ գործիչների պատվարժան ու ներկայանալի մի բանակ, վերստին վկայում էր Գրիշա Ղարիբյանի մեծ հեղինակության, մեծերով շրջապատվածության, գնահատված լինելու մասին:

Շնորհավորանքի և ողջերթի իրենց խոսքերում գրեթե բոլոր ելույթ ունեցողները հիմնանորոգված մշակույթի տան բացման և մեծ գիտնականի մեծարման հանդիսության համադրումը գնահատեցին որպես գիտության և մշակույթի նորօրյա արժևորում, հույս հայտնելով, որ այն շարունակություն ունեցող նախադեպ ու առօրյա կդառնա ոչ միայն սիսիանյան հանրային կյանքում:

Քաղաքի երաժշտական դպրոցի ուսմասվար Գայանե Վարդանյանը նշեց, որ «Աշխարհի ամենագունեղ կապերը ստեղծում է մշակույթը, նրա համար չկա ո՛չ լեզու ո՛չ հայրենիք», իսկ նմանօրինակ հանդիսությունները հատկապես իրենց՝ մշակույթի աշխատողների համար համարեց կրկնակի տոն, նորաբաց մշակույթի տան բեմահարթակը՝ դեպի ավելի մեծ բեմեր տանող ուղի:

Տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Յուրի Սուվարյանը, ով ավելի քան 50 տարի ճանաչում է Գրիշա Ղարիբյանին, նշեց որ «Այս իմաստուն մարդը, որ ավելի քան 100 գիտական աշխատանքների հեղինակ է, որ կյանքում շատ պարգևների է արժանացել, բազում ձեռքբերումների ու նվաճումների համար է հուզվել, երբեք այսքան հուզված ու խռովված չի եղել, որովհետև երբ խոսում է Սիսիանի մասին, հուզվում է մեծին վայել հուզմունքով»:

Իր ողջույնի և շնորհավորանքի խոսքը Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը համեմեց իր մանկության անմոռաց հիշողություններով, երբ 50 տարի առաջ այս նույն մշակույթի տուն էին գալիս՝ գտնելու մանկության ոսկե հեքիաթը: Կարևորելով մշակույթի դերը, ամենից առաջ նա կարևորեց ստեղծագործ մարդուն, նրա կատարած լավ գործերը՝ մասնավորաբար հիշելով մեր մեկ ուրիշ հայրենակցին՝ Զաքար Խաչատրյանին, ով Գրիշա Ղարիբյանի հետ միասին սովորել է գեղանկարչություն՝ Թերլեմեզյանի անվան ուսումնարանում:

ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, որ 25 տարուց ավելի աշխատում է Գրիշա Ղարիբյանի հետ, նրան ներկայացրեց ոչ միայն որպես ուսուցիչ և դասախոս, ոչ միայն որպես մեծանուն գիտնական, այլև՝ զարմանալի մարդ, ով քայլել գիտի ժամանակի հետ: Նրա նկարագրի մեծագույն ու յուրատիպ բնորոշիչ համարեց այն, որ երբ այն տարիներին շատերը հանապազօրյա հացի խնդիրն էին լուծում, Գրիշա Ղարիբյանը պատկառելի տարիքում, աշակերտի և ուսանողի խանդավառությամբ ու ջերմ եռանդով Հայաստանի ամերիկյան համալսարանում աշխարհի առաջադեմ գիտնականներին ու փիլիսոփաներին էր ուսումնասիրում՝ ոչ միայ ժամանակից ետ չմնալու, այլև ժամանակին համընթաց քայլելու համար:

Այսպես մեծարվելու ծննդյան 80-ամյակը այս շուքով ու հանդիսավորությամբ նշելու, իր մեծ բարեկամ Համո Սահյանի անունը կրող մշակույթի տան դռնբացեքն իր ծննդյան 80-ամյակով պատվելու արարողությունից խորապես հուզված գիտնականի շնորհակալական խոսքը սոսկ

երախտապարտի ու հոբելյարի խոսք չէր, այլ՝ գիտնականի, մտավորականի, երկրի, ազգի, Սիսիանի ճակատագրով մտահոգ, դրա համար տագնապող, իմաստուն ու մտածող մարդու խոսք:

Հոտաղից մաճկալ դարձած, մաճկալից՝ գյուղի ամենասիրված երեխան, որովհետև ինքը լավ էր սովորում, իսկ գյուղում սիրում էին լավ սովորողին, բորիսովկացի Ալեքսանի տղայի հանրապետության ամենաճանաչված գիտնականներից մեկի՝ նրա անցած ճանապարհը իմաստության բացառիկ մի դաս է, ու իր դասախոսություններից բացի նրա ապրած կյանքը նույնպես ուսուցանող է, դաստիարակող, վարակող ու ներշնչող: Գիտնականի և գիտության երախտավորի մտահոգությամբ Գրիշա Ղարիբյանը նշեց, որ եկել է ոչ թե դժգոհելու, այլ ահազանգելու, որ աշխարհն այսօր գիտության աշխարհ է, մարդկային կապիտալի ամենաուժեղ պաշարը գիտությունն է և Սիսիանը, որ հռչակավոր շատ մարդիկ է տվել հայ ազգին, իրավունք չունի ետ մնալ: «Սիսիանի համար ուժեղ դպրոցը և ուժեղ աշակերտը հրամայական պահանջ է». ահազանգեց նա, միաժամանակ մտահոգություն հայտնելով, որ վերջին տարիներին ԵՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետում նվազել է սիսիանցի ուսանողների թիվը, ինչն իրեն խորապես տխրեցնում է:

Ծննդյան 80-ամյակի առիթով Երևանում մեծ գիտնականի հետ մեր հանդիպման ժամանակ Գրիշա Ղարիբյանն այլևայլ հարցերի շարքում նշեց, որ պետություն չունենալու պարագայում մեր ազգի հազարամյա գոյության հիմքը եղել է ավանդական հայ գյուղը և հայ ընտանիքը, հայ մշակույթը, ու ցավ հայտնեց, որ այսօր այս երեքն էլ խաթարվում են, բայց գիտնականի և իմաստուն մարդու լավատեսությամբ հավելեց, որ ազգի գենն առողջ է և հայ տեսակի ոսկե երակը չի ամլանա:

Կյանքում շատ բան տեսած և շատ դժվարություններ հաղթահարած, մեծ գիտնականին հարիր գրեթե բոլոր պարգևներին արժանացած ու վաստակած Գրշա Ղարիբյանը ամենածանր ու ցավալի դառնությունը կյանքում համարեց ապերախտությունը և 80-ամյա իր բարձրունքից հորդորեց ապերախտ չլինել՝ իր կենսափիլիսոփայությունը բանաձևելով իր մեծ բարեկամ և մտերիմ Համո Սահյանի բանաստեղծական կենսափիլիսոփայությամբ:

Հ.Գ.: Հանդիսությունից հետո մեզ մոտեցավ գեղեցկադեմ մի հայուհի՝ Արգինե Սահակյանը, և բավականին հուզված ասաց, որ մեծ գիտնականի ծննդավայր Բորիսովկա – Ծղուկից նույնպես պատվիրակություն էր

եկել մեծ հայրենակցին շնորհավորելու և իրենց ուղերձն էր բերել ասելու, որ որքան Գրիշա Ղարիբյանն է իր բոլոր հաջողությունների հիմքը համարում իր ծննդավայր Բորիսովկան և նրա մաքուր ակունքները, նույնքան էլ Ծղուկն է հպարտ նման հայրենակից ունենալու համար, և թախանձագին խնդրեց իրենց ուղերձը մեծ հայրենակցին հաղորդել գոնե թերթի միջոցով:

Արևհատ Ամիրյան
«Որոտան»
28/12/2010թ.
№ 13(130)

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՋԵՐՄՈՒԹՅԱՄԲ....

Ի խորոց սրտի և ամենայն ջերմությամբ ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետն իր շնորհավորանքներն է հղում տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Ա. Ղարիբյանին նրա ծննդյան 85–ամյակի առթիվ:

Հարգարժա՛ն պրոֆեսոր,

1954 թվականին Ձեր աշխատանքային գործունեությունը սկսելով Երևանի պետական համալսարանում՝ անցել եք ամենատարբեր իրադարձություններով լեցուն երկար ու ձիգ ճանապարհ: Դա ճանապարհ էր՝ հագեցած տքնաջան աշխատանքով, մասնագիտական ու գիտական մեծ ձեռքբերումներով և անսահման ու անդավաճան նվիրումով համալսարանական կրթության կարևոր ու պատվաբեր գործին:

Սիրելի՛ պրոֆեսոր,

Երիտասարդական ավյունով լի ուսուցչի ու գործընկերոջ, խորհրդատուի ու բարեկամի Ձեր մարդկային նկարագիրը մշտապես ընկալվել և այսօր էլ ընդունվում է որպես բազմամյա մասնագիտական հմտություններով օժտված, բազմահարուստ կենսափորձ ունեցող, բացառիկ եռանդի տեր, իմաստուն ու նրբանկատ անձնավորության կերպար, ով օրինակելի է և արժանի բարձր գնահատանքի:

Ձեր ջանքներն ապարդյուն չանցան Երևանի պետական համալսարանում տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացման գործում: Քանի, քանի սերունդներ կրթեցիք ու դաստիարակեցիք՝ ուսանողների ու ասպիրանտների մի ամբողջ բանակ, քառասունից ավելի գիտության թեկնածուներ, որոնց, հիրավի, կյանքի ուղեգիր տվեցիք: Ձեր սաներն այսօր բազմաբեղուն գործունեություն են իրականացնում հանրապետության տարբեր ձեռնարկություններում, նախարարություններում, բարձրագույն կրթության ոլորտում, արտերկրի տարբեր համալսարաններում՝ արժանանալով բարձր գնահատականի: Մասնագիտական գիտելիքների հետ մեկտեղ Դուք նրանց սովորեցրել եք չընկրկել, միշտ առաջ նայել բարի ու գեղեցիկ նպատակներին հետամուտ: Դուք նրանց փոխանցել եք նաև կյանքը սահյանական տողերի իմաստավորմամբ ընկալելու փիլիսոփայությունը, և նրանք երախտապարտ են Ձեզ:

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետն առանձնա-

հատուկ երախտագիտությամբ է հիշում Ձեր գործունեության 1990-1991 թվականների փուլը, երբ ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտորի Ձեր՝ հեռուն նայող բարձունքից կարողացանք կանխորոշել գիտակրթական, հասարակական ու մշակութային գործընթացների համաշխարհային զարգացումների այսօրվա հանգրվանը, կարևորեցիք օտար լեզուների դերը ոչ միայն մեր երկրի ներքին կյանքում, այլև միջազգային գործընթացներում նրա տեղն ու դերը ապահովելու հարցում: Լեզուների իմացությունը կարևորելու Ձեր վճռականությամբ տոգորված Դուք անվարան կանգնեցիք համալսարանի պատվելի ռեկտոր, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի կողքին, և համոզմունքների ու բարի կամքի միավորումը տվեց իր ցանկալի արդյունքը: 1991 թվականի հունիսին Բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների բաժնի հիմքի վրա ստեղծվեց Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը, որն այսօր ոչ միայն համալսարանի ամենամեծ ու ընդգրկուն ուսումնական ու գիտական կառույցներից է, այլև նշանակալի համարում ունի ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Դուք ուժ ու եռանդ չխնայեցիք ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի՝ որպես համալսարանական ինքնուրույն ուսումնագիտական կառույցի հիմնադրման, նաև մի շարք այլ մասնագիտությունների ոլորտում օտար լեզուները կարևորելու գործում:

Մեր բանկագի՛ն պրոֆեսոր,

Ձեր բազմահարուստ կենսափորձը, Ձեր իմաստնությունը, Ձեր մտքի սթափությունը, հումորի բացառիկ զգացումն ու կենսասեր խառնվածքը Ձեզ սիրելի են դարձնում բոլոր սերունդների համար և թույլ են տալիս մաղթելու Ձեզ երկար տարիների անխռով կյանք, քաջառողջություն ու գիտական նորանոր ձեռքբերումներ, քանզի կարող ուժը միշտ նոր ակնկալիքների է հուսադրում: Եվ թող տանտիրոջ զգացումը Երևանի պետական համալսարանում երբեք ու երբեք չլքի Ձեզ:

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ
Դեկան պ.գ.թ., դոցենտ Ս. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Առաջին դեկան մ.գ.թ., դոցենտ Կ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ՝
բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ՝ Ս. Ք. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻՇԱՆ

Երբ առիթ է լինում Սիսիանում թվարկել մեր անվանի հայրենակիցներին, առաջիններից մեկը հիշում են նրան՝ մեր Ղարիբյան Գրիշային... Հիշում են ոչ միայն քիչ թե շատ ծանոթ լինելով նրա անցած բեղմնավոր ուղուն, ծանրակշիռ գիտական ժառանգությանը, մանկավարժական գործունեությանը, այլև գիտենալով հոգու ամբողջ թելերով հայրենի եզերքին կապված ու նվիրյալ նրա մարդկային էությունը, մարդ, որի կրծքի տակ մինչ օրս մանուկ հոտաղի պարզությունն ու մաքրությունն է, հայրենի սար ու ձորի վեհությունն ու տիեզերական անչափելի խորությունը...

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, 60 տարուց ավելի Երևանի պետական համալսարանում մի շարք պատասխանատու պաշտոններ վարած մեր հայրենակից Գրիգորի Ալեքսանդրի Ղարիբյանն այս տարվա մայիսի 25-ին դառնում է 85 տարեկան:

Չնայած 1946 թ. Գրիգորի Ալեքսանդրովիչը սովորել, ապրում ու աշխատում է Երևանում, սակայն մինչ օրս անբաժան է Սիսիանից: Սյունիքն իր կյանքով, ուրախություններով ու դժվարություններով արտացոլված է նրա հոդվածներում և գրքերում: Նրա սիրտն իսկապես տրոփում է հայրենի եզերքին ու մարդկանց ճանաչելի դարձնելու, իր երկրամասի յուրաքանչյուր մեծ ու փոքր իրադարձությունը բոլորի սեփականությունը դարձնելու պարտավորվածությամբ, որի մասին են վկայում անվանի գիտնականի բազմաթիվ հրապարակումները: Այսպես, դեռևս 1974 թ. «Երևանի համալսարան» շաբաթաթերթի մարտի 2-ի համարում լույս տեսավ պրոֆ. Ղարիբյանի «Խոշորագույն գիտնականը և քաղաքացին» ծավալուն հոդվածը՝ նվիրված մեր հայրենակից ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, հասարակական-քաղաքական գործիչ Անուշավան Աղաֆոնի Արզումանյանի ծննդյան 70-ամյակին: 1987 թ. «Սիսիան-տեղեկատու-ուղեցույց» Հ. Առաքելյանի հեղինակած գրքում Հրանտ Մաթևոսյանի, Համո Սահյանի, Սոս Սարգսյանի և Վահագն Դավթյանի «խոսքերի» շարքում, տեղ գտավ նաև Գրիգորի Ալեքսանդրովիչի խոսքը «Իմ Սիսական աշխարհը» խորագրով: «Ազգ» թերթի 2010 թ. մայիսի 15-ի համարում, ակադեմիկոս Յու. Սուվարյանի հեղինակությամբ, լույս տեսավ ականավոր գիտնական և հասարակական-քաղաքական գործիչ Մ. Ադոնցի ծննդյան 100-ամյակին նվիրված ծավալուն հոդված, իսկ «Հայաստանի Հանրապետություն» թերթի 2010 թ.-ի հոկ-

տեմբերի 13-ի համարում «Ամեն գույնը մի զինվոր» հոդվածը նվիրված էր մեր հայրենակից, ՀՀ ժողովրդական նկարիչ Ջ. Խաչատրյանի ՀՀ Ազգային պատկերասրահում բացված նկարների հոբելյանական ցուցահանդեսին: «Ազգ» թերթի 2012 թ. սեպտեմբերի 12-ի համարում լույս տեսավ «Սյունիքի զարգացման մասին» քննական-վերլուծական հոդվածը: Չլինելով գրականագետ, բայց հոգով ու սրտով կլանած լինելով Համո Սահյանի սքանչելի պոեզիան, մեծանուն բանաստեղծի 100-ամյակին «Սյունաց երկիր» թերթի 2014 թ. ապրիլի 8-ի համարում տպագրվեց «Ինչ որ գրել է՝ անկեղծ է գրել, սրտով է գրել» հրաշալի հոդվածը, իսկ 2007 թ. «Հայաստանի Հանրապետություն» թերթի ապրիլի 18-ի համարում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանի հեղինակությամբ «Նորոր յա ոսկեձեռնիկ» հոդվածը՝ նվիրված մեր հայրենակից, տաղանդաշատ ճարտարապետ Բաղդասար Արզումանյանին: Վերջապես՝ «Սյունաց երկիր» թերթի 2011թ. դեկտեմբերի 14-ի համարում տպագրվեց «Մեծարենք մեր մեծերից յուրաքանչյուրին» հոդվածը՝ նվիրված մեծանուն պատմաբան և բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի 140-ամյակին:

Թվարկված հրապարակումները և ընդհանրապես նրա մշտական ուշադրությունն իր հայրենակիցների նկատմամբ վկա են այն բանին, որ Սյունիքն իր բովանդակ կյանքով, ձեռքբերումներով և չլուծված խնդիրներով անբաժան է նրա կյանքից: Չնայած իր պատկառելի տարիքին, Գրիգորի Ղարիբյանն ամեն կերպ ձգտում է անմասն չմնալ հայրենի Սիսիանում կազմակերպվող կարևոր միջոցառումներից, շատ հաճախ ինքը դառնում դրա նախաձեռնողը՝ իր հետ Սիսիան բերելով հարազատ եզերքի հոգսերով ապրող իր հայրենակիցներին, հանրապետության գիտության, մշակույթի երևելիներին: Սյունիքն էլ այդ մեծ նվիրումը և ուշադրությունը երախտագիտությամբ վերադարձնում է Մեծարգո պրոֆեսորին: 2010 թ. նոյեմբերի 27-ին Սիսիան քաղաքի Համո Սահյանի անվան վերաբացված կենտրոնում մեծ շուքով նշվեց անվանի գիտնականի 80-ամյակը: Ավելացնեմ, որ այդ օրը Սյունիքի մարզպետը Գրիգորի Ղարիբյանին շնորհեց «Պատվավոր Սյունեցի» բարձր կոչումը, իսկ Սիսիանի քաղաքապետարանը նրան արժանացրեց պատվոգրի:

Սիսիանը միշտ սիրում և սպասում է իր արժանավոր զավակին՝ Գրիգորի Ղարիբյանին:

Ա. Մ. Հակոբջանյան
Սիսիան քաղաքի քաղաքապետ

ՍԻՐՎԱԾ ԸՆԿԵՐ

Մեր ընկերը, սյունեցին ու մեծանուն գիտնականը՝ Գրիգոր Ղարիբյանը, Ծղուկի միջնադարյան համբավի ոսկեշղթայի մի հիասքանչ օղակն է մերօրյա կյանքում:

Հայրենասերն ու տնտեսագետը, նվիրյալն ու հավատավորը տարիներ ի վեր ապրում է իր երկրի, իր գյուղի, քաղաքի, հարազատի ու անծանոթի հոգսով ու տխրությամբ, հույսով ու ձեռքբերումներով:

Այդօրինակ ապրումներն ու ստեղծագործական աշխատանքը բնորոշ է եղել նաև իր հայրենակիցներին՝ ճարտարագետ Բաղդասար Արզումանյանին, քանդակագործ Արտաշես Հովսեփյանին, գեղանկարիչ Զաքար Խաչատրյանին և այլոց:

Համենայնդեպս, մեր ճանաչյալներից չի գտնվի որևէ մեկն, ով ձգտել է գիտության ու կրթության, որ արժանացած չլինի Գրիգոր Ղարիբյանի ուշադրությանն ու աջակցությանը:

Դեռ անցյալ դարի 70-ականներից իր և համախոհների ուժերն ուղղել է մասնավորապես Սյունիքի տնտեսության հեռանկարներին ու զարգացման խնդիրներին, տնտեսագիտական իր ողջ հմտությունն է փոխանցել հետևողներին՝ նոր սերնդի գիտնականներին:

Իսկ ինչպիսի՜ սեղանապետ է, մեր ավանդույթների փայլուն գիտակ ու հացերեց, լեզվի ու մշակույթի պահպանման հավատավոր:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ մեր Գրիգոր Ղարբյանն ավանդապաշտ հայ է, մեր ազգագրության ու ամենայն հնավանդի համբերատար փոխանցող:

Գրիգոր Ղարիբյանի հետ ճանապարհ անցնելը մի ակնթարթ է, խաչմերուկների անբաժան հրապույր, որով և խաչակնքվում է մեր վաղեմի ընկերությունն ու բարեկամությունը, մեր հարգանքն ու սերը միմյանց նկատմամբ:

Քիչ է լավ խոսքեր գրելը Գրիգորի մասին, Ղարիբյանի հետ պետք է կյանք ապրել, շարունակվել նրա ընկերության բարեշնորհումով ու հավատալ, որ նրա ամեն մի իմաստնացած օրը հավասարապես բաշխվում է թե՛ սյունյաց աշխարհի լուսաբացներին, և թե՛ մեզ՝ իր լավ ու վատ օրերի անբաժան ընկերներին:

Յուրի Ջավադյան
Փարավոն Միրզոյան
Գագիկ Ոսկանյան

ՕՐՀՆՎԱԾ, ՍՈՒՐԲ ԸՆՏԱՆԻՔ

Գրիշա Ղարիբյանին մանկուց որդեգրած նրա հոր հորեղբայրներ Ալեքսան հայրիկը և եղբայրը մահանում են մինչև նրա համալսարանը ավարտելը: Գյուղը համոզված էր, որ նրա տարեց մայրիկները կմնան գյուղում անօգնական և առանց խնամքի: Սակայն համալսարանն ավարտած և նոր ընտանիք կազմած Գրիգորի Ալեքսանդրովիչը, չնայած բնակարանային և նյութական ոչ բավարար պայմաններին, ի զարմանս բոլորի և ի պատիվ իրեն, և հատկապես Երևանում ծնված ու բարեկեցիկ կյանքով ապրած լուսահոգի չքնաղ Գայանե Սողոմոնովնայի, մայրիկներին բերեցին Երևան, երկար տարիներ իրենց խաղաղ տանը պահեցին և արժանավայել պատվով հանձնեցին մայր հողին: Եթե ուրիշ ոչինչ արած չլիներ, այդքանը բավարար էր, որ այդ ընտանիքը դառնար մեզ համար պաշտամունք:

Գ. Ղարիբյանի նախաձեռնությամբ, իր մտերիմ բարեկամ, անվանի ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի նախագծով գյուղում կառուցվեց Բորիսովկայից Հայրենական պատերազմում զոհված 70 զինվորների հուշարձան-կոթողը, որի վրա փորագրված են նաև նրա երկու եղբայրների անունները: Ամեն տարի Գրիգորի Ալեքսանդրովիչն ընտանիքով այցելում է ծնողների շիրիմներին և զոհված զինվորների հուշարձանին՝ հիշատակի և հարգանքի տուրք է մատուցում՝ օրինակ ծառայելով շատերին:

Սյունիքը և հատկապես Բորիսովկա (Ծղուկ) գյուղը հպարտ է մարդկային բարձր որակներ ունեցող իր հայրենակցի համար և մաղթում է նրան երկար ու երկար տարիների կյանք:

Ալբերտ Գևորգյան, մանկության ընկեր,
ՀՀ արդարադատության խորհրդական

ՀԱՐԳՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ

ՍՍՀՄ մինիստրների սովետին առընթեր բարձրագույն ատեստավորման հանձնաժողովը հաստատեց համալսարանի տնտեսագիտական գիտությունների գծով գիտական աստիճաններ շնորհող խորհրդի որոշումը՝ համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի դոցենտ Գրիշա Ալեքսանի Ղարիբյանին տնտեսագիտական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհելու մասին: Այսպիսով, ըստ արժանվույն գնահատվեց շնորհալի գիտնականի երկար տարիների քրտնաջան աշխատանքը:

Գ. Ղարիբյանը ծնվել է 1930 թվականն: 1954-ին գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի քաղաքատնտեսության բաժինը: 1960-1962 թթ. նա սովորել է Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրայում և դասախոսների որակավորման բարձրացման ինստիտուտում:

1963-ից տնտեսագիտական գիտությունների թեկնածու է, իսկ 1966 -ից դոցենտ: Աշխատելով համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնում, Գ. Ղարիբյանը 1966 թ.-ից համատեղությամբ գլխավորում է ՀՍՍՀ Պետպլանի սոցիալ-տնտեսական հետազոտությունների սեկտորը, մանկավարժական աշխատանքը հմտորեն զուգակցելով գիտահետազոտական ուսումնասիրությունների հետ, որոնք արտացոլվել են հանրապետության միութենական գիտական պարբերականներում տպագրված 45 գիտական հոդվածներում և մենագրություններում («Անհրաժեշտ և հավելյալ արդյունքը սոցիալիստական հասարակարգում», «Բնակչության կենսամակարդակը և նրա բարձրացումը Սովետական Հայաստանում», «Բաշխման կոմունիստական սկզբունքը»): Մոտ օրերս ռուսերենով լույս կտեսնի նրա «Բնակչության կենսամակարդակի բարձրացման պրոբլեմները սոցիալիստական հասարկարգում» մեծածավալ մենագրությունը:

Երկար տարիների նպատակասլաց և արդյունավետ գիտական հետազոտությունների արդյունք հանդիսացավ «Անհրաժեշտ արդյունքը և բնակչության կենսամակարդակի բարձրացման պրոբլեմները սոցիալիստական հասարակարգում» թեմայով դոկտորական դիսերտացիան, որը Գ. Ղարիբյանը պաշտպանեց 1973 թվականին: Նշված պրոբլեմների շուրջը կատարած նրա գիտական ուսումնասիրությունները բարձր գնահատականի են արժանացել սովետական մի շարք անվանի գիտնականների կողմից, որոնք դրանք համարել են որոշակի ներդրում սոցիալիզմի

քաղաքատնտեսության մեջ:

Դա վերաբերում է մասնավորապես սոցիալիզմի պայմաններում անհրաժեշտ արդյունքի տեսության և բնակչության կենսամակարդակի բարձրացման պրոբլեմների ամբողջական և կոմպլեքսային ուսումնասիրությանը՝ հատկապես դրանց ռեգիոնալ առանձնահատկություններով:

Գ. Ղարիբյանի գիտական հետաքրքրությունները չեն սահմանափակվում միայն նշված պրոբլեմներով: Նա մեր հանրապետության գիտնականների կողմից մայրենի լեզվով գրված քաղաքատնտեսության ձեռնարկի հեղինակներից մեկն է, նրա դասախոսությունները և գիտական զեկուցումները միշտ աչքի են ընկնում խորը գիտականությամբ, նոր հարցադրումներով և լսվում են մեծ հետաքրքրությամբ:

Գ. Ղարիբյանը նաև մեր ուսանողների կողմից հարգված մանկավարժներից է: Նա հաջողությամբ ղեկավարում է մի շարք ասպիրանտների և դիսերտանտների աշխատանքը թեկնածուական դիսերտացիաների վրա: Գ. Ղարիբյանը օժտված է նաև կազմակերպչական մեծ ընդունակություններով: Նա հանդիսանում է ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության քաղաքատնտեսության գիտամեթոդական սեկցիայի նախագահը, ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերության Երևանի քաղաքային վարչության տնտեսագիտական կոորդինացիոն խորհրդի նախագահը, Մարքսիզմ-Լենինիզմի երեկոյան համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի վարիչը, ակտիվ մասնակցություն ունենալով նաև համալսարանի հասարակական կյանքին: Նա եղել է Տնտեսագիտական ֆակուլտետի սկզբնական կուսակցական կազմակերպության քարտուղար, իսկ այժմ՝ համալսարանի կուսակցական կոմիտեի անդամ է:

Սրտանց շնորհավորում ենք մեծ աշխատասիրության, անսպառ եռանդի, պրպտուն մտքի տեր մարդուն՝ Գրիշա Ղարիբյանին գիտությունների դոկտորի աստիճան շնորհելու կապակցությամբ, ցանկանում ենք նրան հետագա նորանոր հաջողություններ, երկար տարիների բեղմնավոր գիտամանկավարժական գործունեություն:

Հ. Ներսիսյան
Քաղաքատնտեսության ամբիոնի դոցենտ

«Երևանի համալսարան»
17/04/1976թ.
№15(1083)

ԵՊՀ-Ն ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԸ

Արցախյան ազատագրական շարժումը մեր ժողովրդի նորագույն պատմության մեջ առանձնակի տեղ և նշանակություն ունի: Այդ շարժումը մեր ժողովրդի ֆիզիկական և հոգեկան ուժերի ու կարողությունների համախմբման ամենաբարձր դրսևորումն էր, որ ավարտվեց Արցախի ազատագրումով: Արցախյան գոյամարտը, կարելի է ասել, հիմնովին փոխեց մեր ժողովրդի հոգեբանությունը ու կենսափիլիսոփայությունը, ստիպելով մեզ հավատալ և ապավինել սեփական ուժերին, հավատարիմ մնալ մեր ազգային գիտակցությանն ու ազգային արժանապատվությանը: Այս առումով, Արցախյան գոյամարտը պատմական բացառիկ նշանակություն է ձեռք բերում մեր ժողովրդի կյանքում՝ սերունդներին ներարկելով ոգի և ավյուն, ուժ և եռանդ, խորունկ հայրենասիրություն և ազգային շահի բարձր գիտակցություն:

Վերջին տասնամյակների մեր հասարակական-քաղաքական կյանքի ճակատագրական իրադարձությունների մեջ իր վճռորոշ դերն է խաղացել Հայաստանի մայր բուհը՝ Երևանի պետական համալսարանը, որը միշտ էլ եղել է հասարակական գիտակցության և ազգային մտածողության ձևավորման, սերունդներին հայրենասիրական ոգի փոխանցելու, երկրի արժանապատիվ քաղաքացիներ պատրաստելու կենտրոն: Առանձնապես մեծ է Երևանի պետական համալսարանի դերը Արցախի ազատագրական պայքարի նորօրյա պատմության մեջ: 2011թ. հունիսի 24-ին ԵՊՀ-ի գիտական խորհրդի նիստերի դահլիճում 90-ամյա համալսարանը մեկ անգամ ևս խոնարհվեց Արցախյան հերոսամարտում զոհված ուսանողների և դասախոսների հիշատակի առաջ: Ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը ընդգծեց, որ Արցախյան գոյամարտում ԵՊՀ-ն յուրատեսակ կենտրոն էր, որը և՛ պայքարել գիտեր, և՛ պայքարը ղեկավարել: ԵՊՀ-ն հաստատապես իր ուրույն դերն ունեցավ մեր նորանկախ պետության ստեղծման գործում: Հիշատակի այդ օրվա կապակցությամբ «artcakthoday.com» կայքը արձանագրում է «Այն գերլարված օրերին բուհի ռեկտոր, ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր Ս. Ա. Համբարձումյանը Մոսկվայում մեր մյուս հայ պատգամավորների հետ պաշտպանում էր Փոքր Սիների պես ըմբոստացած Արցախի իրավունքները: **Բուհի փաստացի ղեկավարը պրոռեկտոր Գրիգոր Ղարիբյանն էր, որն իր մարդկային և պրոֆեսիոնալ բարձր որակներով նպաստել է համալսարանի եռացող կյանքի կայուն ընթացքին»: Այո՛, պրոռեկտոր Գ. Ղարիբյանը 1989-1990**

թթ. ԵՊՀ-ի ռեկտորին փոխարինողն էր: Նրա ստորագրություններով են Մոսկվա՝ կուսակցական և պետական մարմիններին ուղարկվել Երևանի պետական համալսարանի՝ Արցախի անկախացումը պահանջող բազմաթիվ որոշումները, նամակները և հեռագրերը:

Բայց կյանքը ցույց տվեց, որ խորհրդային միությունում ստեղծված քաղաքական իրավիճակի և կառավարող շրջանների փաստորեն ձևական-մերժողական վերաբերմունքի պայմաններում հեռագրերով և նամակներով անկարելի էր լուծեր իր լարումին հասած քաղաքական հարցը:

Պարզ դարձավ, և հայ ժողովրդի մղած տասնամյակների քաղաքական պայքարի փորձը ցույց տվեց ու հաստատեց դա, որ Արցախը հնարավոր է ազատագրել միայն զինված պայքարի միջոցով, սեփական ուժերով, կազմակերպված ազգային բանակով և անձնազոհության, անմնացորդ նվիրումի գնով: Ինքնին հասկանալի է, որ այսպիսի ուժեր չկային, այդպիսի բանակ չուներ ո՛չ Արցախը և ո՛չ էլ Հայաստանը: Այդպիսի բանակի ստեղծումը մեր ժողովրդի համար դարձավ օրվա հրամայական պահանջ և գերխնդիր: Ազգային բանակի ստեղծման ու ձևավորման գործին իր նվիրումը բերեց նաև Երևանի պետական համալսարանը: **Այդ նպատակով ռեկտոր Սերգեյ Համբարձումյանի գլխավորությամբ ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի նախագահի տեղակալ նշանակվեց պրոռեկտոր Գրիգոր Ղարիբյանը,** հանձնաժողովի անդամներ դարձան համալսարանի կուսկոմիտեի քարտուղար Յուրի Մկրտումյանը, հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը, արիկոմիտեի նախագահ Հովհաննես Մկրտչյանը, պրոֆեսոր Գարեգին Փանոսյանը, դոցենտներ Ֆրիկ Մելիք-Ադամյանը, Նորայր Գալստյանը: Ֆիզիկայի ֆակուլտետի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի լաբորատորիայի վարիչ Միսակ Մարտիրոսյանը, ազատամարտիկների համար հայթայթել էր 5000-ից ավելի զինվորական անձրևանոց և ձուլել էր գնդակներ:

Արցախի ազատագրության պայքարին մասնակցել է համալսարանի, կարելի է ասել, պրոֆեսորադասախոսական ողջ կազմը և ամբողջ ուսանողությունը: Տողերիս հեղինակն, օրինակ, երկար ու ձիգ տարիներ պաշտպանության բանակի հրամանատարի տեղակալն էր արտաքին կապերի գծով և կարողացավ հայթայթել և Արցախ տեղափոխել ռադիոկապի խիստ անհրաժեշտ միջոցներ, ինչպես նաև զրահաբաճկոններ, հանդերձանք ու այլ պարագաներ: Ղեկավարությունն ամեն ինչ արել է համալսարանականների գործունեությունը կազմակերպելու, նրանց ուժն

ու ջանքերը միավորելու և ուղղորդելու համար: Օրինակներն ու փաստերը շատ-շատ են, անկարելի է մանրամասնությամբ ներկայացնել այսօր համալսարանականների կատարած գործերի ողջ պատմությունը: Եվ, այնուամենայնիվ ցանկանում եմ ներկայացնել մի քանի կարևոր դրվագներ:

1989 թվականին, մեր քաղաքական դիմակայության ծանր մի ժամանակում, ստեղծվեց «Անկախություն» մարտական ջոկատը, որի հրամանատարն էր ԵՊՀ գիտական աշխատող Լեոնիդ Ազգալդյանը, մի բացառիկ պայծառ, անձնուրաց և խորապես հայրենասեր անձնավորություն: Եվ, երբ մի օր քաղաքական ինչ-ինչ ուժեր հրաժարվեցին ջոկատի ծառայություններից, **համալսարանի հատուկ հանձնաժողովը ստանձնեց մարտական ջոկատի շեֆությունը՝** ապահովելով սննդամթերքով, հագուստով, սատարելով նրան զենքի ու զինամթերքի հայթայթման ու ձեռք բերման հարցերում:

Հենց այդ ջոկատն էլ հետագայում դարձավ մեր ազգային բանակի հիմնակորիզը: Լեոնիդ Ազգալդյանը մասնագիտությամբ ֆիզիկոս էր, չուներ ռազմական կրթություն: Սակայն նա ի ծնե օժտված էր անուրանալի ռազմական ձիրքով ու տաղանդով, մարդկանց կազմակերպելու, իմի բերելու, մարտական շունչ և ոգի ներարկելու զարմանալի կարողությամբ:

Լեոնիդ Ազգալդյանին հաջողվում էր հասնել գրեթե անկարելիին: 1991 թվականին նա մի քանի համախոհների և համակիրների հետ միասին (Վլադիմիր Բալայան, Հովսեփ Հովսեփյան և ուրիշներ) ստեղծեց «Ազատագրական բանակը», որին վիճակված էր նշանակալից դեր խաղալ Արցախյան պատերազմում: Նրան հաջողվեց հայդուկային խումբը, ֆիդայական ջոկատը վերածել ֆիզիկական և մարտական բարձր պատրաստվածություն ունեցող, չափազանց կարգապահ ու մարտունակ բանակի, դրանով փաստորեն դնելով Հայոց պետական բանակի հիմքերը: Լեոնիդ Ազգալդյանի ղեկավարած «Ազատագրական բանակը» մարտակերտի շրջանում ազատագրեց 27 բնակավայր, իսկ հրամանատարի մահից հետո եղավ Քելբաջարն ազատագրողների առաջին շարքերում:

Համալսարանի հատուկ հանձնաժողովը զգալի աշխատանք է կատարել «Ազատագրական բանակը» հանդերձավորելու և զինելու առումով: Եթե մեկ առ մեկ թվարկեմ, թե հանձնաժողովը որքան հագուստ և սննդամթերք է հայթայթել բանակի համար, որքան գնդակ ու կոտորակ, տարբեր տրամաչափի քանի հարյուր արկ, քանի տասնյակ հազար փամփուշտ, որքան հակատանկային նռնակ և ռազմական ինչ տեխնիկա է ձեռք բե-

րել, կստացվի մի վիթխարի ցուցակ:

Այնուամենայնիվ, մեկ երկու փաստ կուզեի հրապարակել: Այսպես, հայտնի էր դարձել, որ Կարմիր խաչի կենտրոնական գրասենյակը ստացել էր բանակի համար արժեքավոր ճապոնական «Honda» մակնիշի գեներատորներ, սակայն չէր հաջողվում դրանք ձեռք բերել: Միայն ռեկտորի միջամտությամբ, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Յուրի Խոջամիրյանի միջոցով լուծվեց հարցը, և 75 գեներատոր հասավ Արցախ: Մեկ այլ օրինակ. Ստեփանակերտի հիվանդանոցին շատ անհրաժեշտ էին բժշկական որոշ գործիքներ: Համալսարանի ֆիզիկոսները պարզել էին, որ դրանք հանրապետության բուժմիավորումներից մեկում կան, սակայն ձեռք բերելու համար անհրաժեշտ էր 20.000 ռուբլի փոխանցել: Հարցը լուծվեց Մոսկվայում գտնվող ռեկտոր Ս. Համբարձումյանի համաձայնությամբ:

Համալսարանի գիտական պոտենցիալի և լաբորատորիաների ջանքերով մեծ ծավալի աշխատանք էր կատարվում զենքի նոր տեսակների արտադրության ուղղությամբ: Այսպես, «Ալազանի» հակակարկտային գլխիկը փոխարինվեց մարտական գլխիկով և դրա **փորձարկումը տեղի ունեցավ Սիսիանի Ծղուկ գյուղի ձորում՝** դրական արդյունքներով:

Ես ականատես ու վկան եմ եղել, ինչպես նաև նախաձեռնողն այն մասնակցության, որն ունեցել է Արևելագիտության ֆակուլտետը Արցախի ազատագրական պայքարի գործին: Մեր ուսանողները հազարավոր գուլպա ու գլխարկ են գործել մեր ազատամարտիկների համար:

Տողերիս հեղինակն էլ իր համեստ լուման է բերել Արցախի ազատագրությանը՝ հայթայթելով մարտիկների համար կապի խիստ կարևոր, գերժամանակակից միջոցներ, որպիսիք այդ ժամանակ չուներ հակառակորդը:

Ազատագրական պատերազմին համալսարանականների անձնուրաց մասնակցությունը, անմնացորդ նվիրումի հազարավոր փաստերը, վերը հիշված դրվագները (իսկ դրանց թիվը շատ-շատ է) առանձնակի հպարտությամբ են լցնում համալսարանականների սրտերը՝ նրանց տալով պատվախնդրության զգացում:

Գուրգեն Մելիքյան
ԵՊՀ արևելագիտության
ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր

«Հայաստանի Հանրապետություն»
02/10/2014

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆԻ 85-ԱՄՅԱ ԿՅԱՆՔԻ ՉԳՐՎԱԾ ԷՋԵՐԻՑ

Իմ բարեկամ Գրիգոր Ղարիբյանի մասին շատ է գրվել ու էլի կգրվի: Սակայն ոչինչ չի գրվել նրա գեղանկարչական շնորհքի մասին:

Գ. Ղարիբյանը մեր գյուղի դպրոցի գերազանցիկ աշակերտներից էր: Նա օժտված էր նաև լավ նկարելու ունակությամբ: Քանի որ սովորում էինք Հայրենական պատերազմի տարիներին, դպրոցներում աշակերտներին հայրենասեր դաստիարակելու նպատակով ցուցադրվում էին նշանավոր զորավարների՝ հատկապես հայ հերոս գեներալների դիմանկարներ, որոնք սիրով նկարում էր Գրիգորը: Հենց դա էլ հիմք դարձավ նրա ուսման շարունակմանը Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանում: Սակայն ավարտական 3-րդ կուրսում, կառավորության որոշմամբ, ուսումնարանում ուսման տևողությունը երեքից դարձավ հինգ տարի, ինչը Գրիգորի համար նյութական բնույթի լուրջ խնդիրներ ստեղծեց, և նա 1948 թ. կեսերից զուգահեռ սովորեց ու ավարտեց Երևանի կայարանի երեկոյան բաներիտ միջնակարգ դպրոցը՝ նպատակ ունենալով կրթությունը շարունակել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում «Ճարտարապետություն» մասնագիտությամբ: Սակայն հանգամանքների բերումով Գ. Ղարիբյանն ընդունվեց Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ, որը ոչ մի առնչություն չուներ գեղանկարչության հետ, և նա շուրջ 65 տարի չզբաղվեց իր սիրած նկարչությամբ:

Իր մտերիմ ընկեր, ՀՀ ժողովրդական նկարիչ Զաքար Ավագի Խաչատրյանի հորդորներով՝ 2013 թ. Գրիգոր Ղարիբյանը նկարեց երկու նկար՝ «Դաշտային ծաղիկներ», որոնք վերատպված են սույն գրքում: Արդյունքում, Զաքար Ավագովիչը և ես զարմացած ու գոհ էինք, որ 65 տարիների ընդմիջումից հետո մեր ընկերը նկարելը չի մոռացել: Մնում է ցանկանալ, որ Գրիգորն առաջիկայում ավելի շատ զբաղվի գեղանկարչությամբ:

Գևորգ Բաղդասարյան
ԽՍՀՄ նկարիչների
միության անդամ, պրոֆեսոր,
ՀՀ Գեղարվեստի պետական ակադեմիայի
քանդակի ամբիոնի վարիչ

50 лет знакомства

Отрывок из рассказа ‘’О моих коллегах’’, вошедшого в сборник воспоминаний С. Л. Кантарджяна ‘’Я выбираю Вас’’, Ер. Айагитак. 2005г.

‘’С Григорием Александровичем Гарибяном я знаком более сорока лет. За годы нашего знакомства он успел стать доктором экономических наук, профессором, член-корреспондентом АН Республики Армения. Ныне Григорий Александрович заведует кафедрой ‘’Теоретической экономики’’ экономического факультета ЕГУ. Наше знакомство обросло таким количеством связей, что я затрудняюсь отдать предпочтение какой-нибудь из них. Например, когда Григорий Александрович заболел и попал в больницу, сведения о его здоровье поступали ко мне от Аиды Рафаэловны Мурадян, чудесной женщины, прекрасного специалиста, которая за последные годы практически ежедневно общалась с членами моей семьи. Сын Гарибяна женат на племяннице Аиды Рафаэловны. И, вообще, если хорошо покопаться, то пол Еревана окажутся в родственных связах.

Я никогда не забуду тот день, когда летом 1987 года обратился к нему с просьбой посодействовать моей племянице, которая будучи медалисткой, оказалась в безнадежной ситуации на вступительных экзаменах в ЕГУ. Тогда Григорий Александрович занимал пост проректора по учебной работе и без всяких колебаний решил ее проблему. Ежедневно общаясь с ним, я открываю для себя очень привлекательные черты характера, которые свидетельствуют о неукротимом стремлении этого человека быть полезным своим студентам, аспирантам, членам своей кафедры. Особенно трогательна любовь Григория Александровича к своей супруге, у которой он прилюдно попросил извинения за грехи молодости на своем юбилейном заседании. О ее здоровье можно догадаться по настроению Григория Александровича: если он улыбается и шутит, значит все в порядке, если у нее возникли проблемы со здоровьем, лучше к нему не подходить.’’

«Երևանի համալսարան»
հուլիս 2000 թ.

Ամեն ինչ՝ հանուն ուսանողի

Ուսումնառության չորս տարիների ընթացքում մենք շատ ուսանելի բաներ տեսանք և սովորեցինք Ձեզնից, ամեն ինչ՝ հանուն ուսանողի, մեր մեծարգո դեկան և սիրելի դասախոս: Մեծ է Ձեր դերը ֆակուլտետի նորովի կայացման գործում, որով մեզ հնարավորություն տրվեց ստանալու այնպիսի բարձր մակարդակի տնտեսագիտական կրթություն, որ մեր վկայագիրը հարգի է անգամ Լոնդոնի տնտեսագիտության բարձրագույն դպրոցում: Ձեզ երախտապարտ ենք այն բարենպաստ միջավայրի համար, որ Ձեր կողմից ստեղծված է ֆակուլտետում:

Բայց այսօր մենք ուզում են Ձեզ շնորհակալություն հայտնել ոչ միայն այդ բոլորի համար, այլև մենք Ձեզ երախտապարտ ենք այն արդարացի հովանավորության համար, որ միշտ ցուցաբերել եք մեր հանդեպ, ամեն ինչ արել եք՝ հօգուտ և հանուն ուսանողի: Դուք ֆակուլտետում լավ ավանդույթներ եք հիմնել, որոնք, հուսով ենք, կպահպանվեն:

Նիկողայոս Վարդապետյան
Տնտեսագիտության ֆակուլտետի
2000թ. գերազանցիկ շրջանավարտ

Երևանի համալսարան
մայիս 2005 թ.

Մեծ ուսուցչապետ

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում է իր կյանքի գլխավոր՝ գիտության ուղին սկսել պրոֆեսոր Գ. Ղարիբյանը, ով ոչ միայն անվանի դասախոս է, այլև մեծ ուսուցչապետ: Բազմավաստակ պրոֆեսորը թեև տարիքով ամենաավագն է ֆակուլտետում, սակայն վստահորեն կարող եմ ասել՝ հոգով ամենաերիտասարդը:

Որպես տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող՝ ցանկանում եմ հայտնել Ձեզ իմ երախտագիտությունը ոչ միայն ստացած գիտելիքների, այլև առաջին կուրսում քաղած «մեծ դասի» համար, այն է՝ «երբեք մի կորցրու գիտելիքներ ստանալու քեզ ընձեռնված հնարավորությունը, այն կարող է միակը լինել ...»:

Մագդա Մարկոսյան
Տնտեսագիտության ֆակուլտետի
ՈՒԽ նախագահ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍԻՐԵԼԻ ԳԻՏՆԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Պրոֆ. Զ. Գ. Բաշինջյանը, 1965 թ., ԵՊՀ քաղաքաշինության ամբիոնի վարիչ

Հասարակությանը նվիրված մարդկանց յուրաքանչյուր անցած տարին լրացնում է նրանց կյանքը՝ բովանդակությամբ, իմաստությամբ և ճանաչողությամբ: Նրանք առավել սիրելի են դառնում, երբ տարիների ճանապարհով ձեռք բերածը նվիրաբերում են իրենց ժողովրդին, առավել՝ աճող սերնդին:

Այդպիսիններին, երախտագիտության զգացումով արժանվույն է գնահատում հասարակությունը՝ նշելով նրա տարիների բեղմնավոր վաստակը:

Այդ արժանավայել մարդկանցից է Երևանի պետական համալսարանի քաղաքատընտեսության ամբիոնի վարիչ, գիտության վաստակավոր գործիչ Զաքար Բաշինջաղյանը, ում ծննդյան 70-ամյակը լրանում է վաղը: Նա ծնվել է 1895 թ. մայիսի 26-ին, Թիֆլիսում, հայ տաղանդավոր նկարիչ ու հասարակական գործիչ Գևորգ Բաշինջաղյանի ընտանիքում: Ավարտելով Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլետը, 1923 թ-ին ընդունվում է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակագիտական ֆակուլտետ: Նորից ուսման անհանգստացնող ծարավ: 1933 թ. Զաքար Բաշինջաղյանը ավարտում է նաև Մոսկվայի կարմիր պրոֆեսուրայի տնտեսագիտական ինստիտուտը: Սակայն նրա համար մի յուրօրինակ համալսարան էր նաև իրենց՝ Բաշինջաղյանների ընտանիքը: Մեծ նկարիչի նշանավոր հարկի տակ հաճախ են հյուրընկալվել, իրենց պայծառ մտքերն արտահայտել, հուզվել ու ուրախացել այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Պետրոս Ադամյանը, Հովհաննես Թումանյանը, Ղազարոս Աղայանը, Շիրվանզադեն, Ավետիք Իսահակյանը, Կարա-Մուրզան, Հովի. Աբելյանը և շատ ուրիշներ:

Պետերբուրգը, Մոսկվան, Թիֆլիսը՝ իրենց ուսումնական հաստատություններով, և հայրական տունը՝ իր բարձր կուլտուրայով, հանդիսացել են իմաստությամբ բոցկլտացող այն օջախները, որոնց մեջ ձևավորվել է

մեր հարգարժան հոբելյարը:

Մոտ 40 տարի է, ինչ պրոֆեսոր Բաշինջաղյանը ավանդում է քաղաքատնտեսություն, իսկ 1936-ից մինչև այժմ նա ղեկավարում է Երևանի պետական համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնը: Սիրելի պրոֆեսորի գրչին են պատկանում շուրջ 100 աշխատություն, որոնք նվիրված են տնտեսագիտության կարևորագույն խնդիրներին և տեսական այլ հարցերի: Հատկապես մեծ է հոբելյարի երախտիքը տնտեսագիտության ասպարեզում կադրեր պատրաստելու գործում: Նրա անմիջական ղեկավարությամբ հաջողությամբ թեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել մոտ 20 երիտասարդ ասպիրանտներ և գիտական աշխատողներ:

Պրոֆեսոր Բաշինջաղյանը պետական համալսարանի գիտական ընդհանուր խորհրդի անդամ է, տնտեսագիտական ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ, համալսարանին առընթեր, տնտեսագիտության գծով գիտական աստիճան շնորհող միացյալ խորհրդի նախագահի տեղակալ, Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ:

Անհանգիստ գիտնականը՝ լինելով նաև Հայկական ԽՍՀ «Գիտելիք» ընկերության վարչության նախագահի տեղակալը, արդեն 13 տարի է ղեկավարում է նույն ընկերության քաղաքատնտեսության սեկցիան: Նա «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», «Экономические науки» (Մոսկվա) ամսագրերի կոլեգիայի անդամ է:

Պրոֆեսորի բարձր կոչմանը նա արժանացել է 1937 թ.-ին: Մեծ է նրա գիտական վաստակը և այդ վաստակը անտես չմնաց. 1958 թվականին Հայկական ԽՍՀ Գերագույն սովետի նախագահությունը նրան շնորհեց գիտության վաղտակավոր գործչի պատվավոր կոչումը: Շատ չանցած նա պարգևատրվեց Լենինի շքանշանով: Բաշինջաղյանն այն եզակի գիտնականներից է, որոնք գիտական բարդ խնդիրներն ուսանողությանը, և, ընդհանրապես, ունկնդիրներին հրամցնում են շատ պարզ, հասկանալի, միևնույն ժամանակ հետաքրքիր ձևով: Ուսանողը միշտ էլ մեծ սիրով լսել ու կլանվել է նրա հիանալի դասախոսություններով:

Պրոֆեսորը մեր մտավորականությանը հայտնի է ոչ միայն իբրև անվանի տնտեսագետ, այլ նաև որպես արվեստի ու գրականության հարցերի գիտակ: Նա հաճախակի է իր սեփական խոսքն ասում գրականության, երաժշտության և հատկապես գեղանկարչության կարևոր խնդիրների շուրջ:

Գիտական լայն մտահորիզոնը, մեծ էրուդիցիան, բարձր կուլտուրան ու նուրբ ճաշակը Զաքար Բաշինջաղյանին հաղորդել են մարդկային հոգու ամենավսեմ հատկանիշներ ու արժանիքներ: Նրա բնավորության անբաժանելի գծերից են բարձր պատասխանատվությունը, աշխատասիրությունը, կարգապահությունը, ազնվությունը: Իբրև ամբիոնի վարիչ՝ նա բոլոր աշխատակիցներին և ընդհանրապես որևէ հարցով իրեն դիմող մարդկանց, անկախ նրանց դիրքից ու գիտական աստիճանից միշտ պատասխանում է միևնույն հարգալից տոնով:

Թող միշտ առողջ լինի մեր անչափ սիրելի հոբելյարը՝ պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Զաքար Գևորգի Բաշինջաղյանը, թող երկար ու երկար տարիներ մեզ հետ լինի նա ու միշտ շրջապատահին հաղորդի իր փայլն ու հմայքը:

Գ. Ա. Ղարիբյան
Տնտեսագիտական
գիտությունների թեկնածու

«Երեկոյան Երևան»
25/05/1965թ. №121

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 90-ԱՄՅԱ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

60 տարի Երևանի պետական համալսարանում եմ՝ ուսանողական տարիներից մինչև այսօր: Բացի դասախոսի ամենահարգված աշխատանքից, ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի ռեկտորության օրոք եղել եմ կուսկոմիտեի 2-րդ քարտուղար, ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյանի ռեկտորության ժամանակ՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մ. Մարտիրոսյանի ղեկավարած տարիներին՝ դեկան և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Հ. Սրմոնյանի օրոք՝ ամբիոնի վարիչ: Ուստի անդրադարձս ընդգրկում է համալսարանի այդ տարիների ուշադրության արժանի զարգացումները:

Առաջինը, որ պետք է նշեմ, դա ԵՊՀ պատմության ֆակուլտետի պրոֆ. Խ. Բաղալյանի կողմից ՀԽՍՀ Գրողների միության նախագահ Վ. Պետրոսյանին և մեծանուն բանաստեղծ Պ. Սևակին «ժողովրդի թշնամիներ» պիտակով մեղադրանքներն էին, որոնք նա ներկայացրել էր կուսակցական վերադաս մարմիններին: Պահանջվեց, որպեսզի համալսարանն այդ նյութերը քննության առնի և տա գնահատական: Ընդ որում, Խ. Բաղալյանը մենակ չէր: Ստեղծվեց հանձնաժողով: Երեք ամիս քննարկվեցին «վերևից» անընդհատ համալսարան ուղարկվող «նուբերը»: Ամփոփվեցին հանձնաժողովի եռամսյա քննարկումները և արժանի գնահատական տրվեց: Որպես հանձնաժողովի նախագահ պետք է առանձնակի նշեմ հանձնաժողովի անդամներ ակադեմիկոս Վ. Սարգսյանի, լուսահոգի ակադեմիկոս Լ. Խուրշուդյանի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Անանյանի, արիմկոմիտեի նախագահ Հ. Մկրտչյանի ազնիվ ու սկզբունքային դիրքորոշումները: Այդ շրջանում համալսարանական կյանքը շատ էին պղտորում անանուն նամակներով զրպարտությունները: Ռեկտորի պարտականություններին անցնելուց հետո ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյանը արգելեց անանուն նամակներին ընթացք տալը, և դա էապես նպաստեց համալսարանական կյանքի բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավմանը:

1980-ական թվականներին ԵՊՀ ռեկտորի ուշադրությանն արժանի զարգացումներից էին կրթության և ընդհանրապես համալսարանական կյանքի հումանիզացիան, հումանիտար առաջատար ուղղություններով ուսումնառության կազմակերպումը, նոր մասնագիտություններ, ամբիոն-

ներ և ֆակուլտետներ բացելը և, որ շատ կարևոր է, հայագիտությունն ամենուրեք զարգացնելը: Հատկապես արժևորվում էր հումանիտար նոր ֆակուլտետների բացումը: Դրանցից առաջինը վերաբերում է Փիլիսոփայության ֆակուլտետին: Չնայած փիլիսոփայությունը որպես գիտություն առանձնակի կարևորվել է դեռևս միջնադարյան Հայաստանի համալսարանների կրթահամակարգում, բայց ԵՊՀ-ում փիլիսոփայության ֆակուլտետը բացվեց մայր բուհի հիմնադրումից բավականին ուշ:

Համալսարան հրավիրված, Գերմանիայում փայլուն կրթություն ստացած պրոֆ. Հայկ Գյուլիքեխվյանը 1923 թ. ԵՊՀ-ում ստեղծեց Փիլիսոփայության ամբիոն: 1964 թ. Պատմության ֆակուլտետում բացվեց փիլիսոփայություն մասնագիտությամբ ուսումնառաթյուն: 1968 թ. կազմավորվեց փիլիսոփայության գծով գիտական աստիճաններ շնուրհող խորհուրդ: Նա մեծապես նպաստեց փիլիսոփայության զարգացմանը, բարձր գիտական կոչումներով կադրերի պատրաստմանը և փիլիսոփայության նոր ամբիոնների կայացմանը: Վերջիններս տարբեր տարիներին գլխավորել են դոկտոր-պրոֆեսոր Հ. Գաբիելյանը, ակադեմիկոս Գ. Բրուտյանը, պրոֆեսորներ Մ. Մելիքյանը, Հ. Շաքարյանը, Ա. Հովսեփյանը և Հ. Միրզոյանը: Հատկապես մեծ է ակադեմիկոս Գ. Բրուտյանի դերը ԵՊՀ-ում և ընդհանրապես հանրապետությունում փիլիսոփայական կրթության և գիտության համակողմանի զարգացման գործում: Այնուհանդերձ, մինչև 1982 թ. ԵՊՀ-ն փիլիսոփայական ֆակուլտետ չուներ: ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությունը այդ իրավունքը վերապահել էր միայն Մոսկվայի, Լենինգրադի և Կիևի համալսարաններին: Այդ պայմաններում, ռեկտոր Ս. Ա. Համբարձումյանը գտավ հարցի լուծման միակ հնարավոր տարբերակը՝ ԵՊՀ-ում բացել ոչ թե փիլիսոփայության, այլ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետ: ԵՊՀ խորհուրդը ընդունեց համապատասխան որոշում և ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությունը թույլատրեց համալսարանում բացել Փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետ: Դա մեծ երևույթ էր, քանի որ այդ հիմքի վրա 2004 թ. ԵՊՀ-ում բացվեց նաև առանձին Սոցիոլոգիայի ֆակուլտետը (հիմնադիր դեկան ընտրվեց պրոֆ. Լ. Հարությունյանը): Դա ԵՊՀ կրթական համակարգի և ընդհանուր կյանքի հումանիզացիայի լուրջ փուլ էր, կարևոր պայման հանրապետությունում՝ Փիլիսոփայության և սոցիոլոգիայի գծով բարձր որակավորման մասնագետներ պատրաստելու,

հումանիտար մեծ մշակույթի համակողմանի զարգացման համար:

ԵՊՀ-ի գոյության բոլոր տարիներին միշտ էլ մեծ է եղել լեզուների իմացության դերը: Այն հատկապես կարևորվում է մեր դարում՝ աշխարհի և կյանքի, այդ թվում նաև կրթության և գիտության համընդհանուր գլոբալացման պայմաններում: Մինչև 90-ական թվականները ԵՊՀ-ում օտար լեզուների ուսումնասիրությունն իրականացվում էր Բանասիրության ֆակուլտետում, որտեղ դեռևս 1935 թ. գործում էր օտար լեզուների ամբիոնը: 1980-ական թվականներից ռեկտորատը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ օտար լեզուների ուսումնառությունը դուրս բերելու Բանասիրության ֆակուլտետից և ստեղծելու առանձին Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ: Դա դյուրին գործ չէր, քանի որ Բանասիրության ֆակուլտետը դրան դեմ էր: Երբ Բանասիրական ֆակուլտետի դեկան ընտրվեց լուսահոգի պրոֆ. Գ. Անանյանը, ճիշտ գահատվեց ռեկտորատի մոտեցումը, և 1991 թ. ԵՊՀ-ում ստեղծվեց նոր՝ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ (դեկան ընտրվեց դոց. Կ. Կարապետյանը):

Ռեկտորատի ուշադրության կենտրոնում էր նաև Ռուսական բանասիրական ֆակուլտետի արդյունավետ գործունեությունը, որը գլխավորում էր երջանկահիշատակ ակադեմիկոս, մեծ հայրենասեր և մտավորական Լևոն Մկրտչյանը: Ընդգծվում էր այն միտքը, որ առանց Պուշկինի, Տոլստոյի և Դոստոևսկու լեզուն գիտենալու չենք կարող դառնալ մեծ մշակույթի և բարձր քաղաքակրթության ազգ: Այստեղից էլ ռեկտորատի դիրքորոշումը՝ մեծ տեղ տալ նաև ռուսաց լեզվի ուսումնառության արդյունավետ իրականացմանը, հայ-ռուսական գրական և մշակութային կապերի ուսումնասիրությանն ու լուսաբանմանը: Դրանով է բացատրվում, որ 90-ականների վերափոխումների ծանր տարիներին ԵՊՀ խորհուրդը մերժեց ռուսաց լեզվի ուսուցումը համալսարանի կրթահամալիրում դադարեցնելու որոշ մարդկանց խավարամիտ առաջարկները:

Ռեկտոր Ս. Ա. Համբարձումյանը անգնահատելի աշխատանք կատարեց ԵՊՀ-ում տնտեսագիտության ֆակուլտետը վերաբացելու հարցում: 1975 թ. համալսարանի տնտեսագիտության երկու ֆակուլտետները կանխամտածված փակվեցին և դրանց հիմքի վրա ստեղծվեց Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: 1983 թ. առաջացավ ԵՊՀ-ում տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացման խնդիրը, որի ակտիվ նախաձեռնողը տողերիս հեղինակն էր, որին միացավ լուսահոգի պրոֆ. Յու. Մովսիսյանը: Հարցի լուծման դիմադրությունը տարբեր ատյաններ-

ռում բավականին մեծ էր: Միայն ռեկտորի գրեթե մեկտարյա հետևողական քաղաքականության շնորհիվ հաջողվեց Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի տնտեսագիտական կիբեռնետիկա ֆակուլտետը տեղափոխել Երևանի պետական համալսարան (առաջին դեկան ընտրվեց պրոֆ. Յու. Մովսիսյանը): Ռեկտորատը արմատական բարելավումներ իրականացրեց վերաբացված ֆակուլտետի որակական լուրջ զարգացումների համար: 1990-1991 ուստարվանից ընդունելություն կազմակերպվեց նոր՝ միջազգային տնտեսական հարաբերություններ մասնագիտությամբ, իսկ 1992 թ. ստեղծվեց նոր՝ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը: Ընդունելության քննություններից աշխարհագրության առարկան փոխարինվեց օտար լեզուներով, ինչն էապես նպաստեց օտար լեզուների յուրացմանը: Տնտեսագիտական առարկաների դասավանդումը համակարգված ձևով տեղափոխվեց արևմտյան մոդելի շուկայական տնտեսագիտության հիմքերի վրա: Շատ չանցած, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը ձեռք բերեց մեծ հեղինակություն:

Համալսարանական կյանքի հումանիտարացումը տեղի էր ունենում ոչ միայն նոր, հումանիտար ֆակուլտետներ ու մասնագիտություններ բացելով, այլև գործող համակարգում որակական փոփոխություններ մտցնելով: Դրանցից արժանի է հիշատակման ռեկտորատի որոշմամբ 1980 թ. Հայոց պատմության դասավանդման կազմակերպումը ԵՊՀ բոլոր ֆակուլտետներում, ինչպես նաև աթեիզմի պատմության և տեսության ամբիոնի 1991 թվականից վերանվանումը կրոնների պատմության ու տեսության ամիոնի, որն արմատապես փոխեց այդ առարկայի դասավանդման ուղղվածությունը և իմաստը:

Երևանի պետական համալսարանի կյանքի կարևոր ոլորտներից է հրատարակչությունը, որի զարգացմանը մեծապես նպաստեց ռեկտոր, լուսահոգի Մ. Գ. Ներսիսյանը: Նրան հաջորդած ռեկտոր Ս.Ա. Համբարձումյանի օրոք այն ավելի զարգացավ: Միաժամանակ բարձրացվեց հրատարակչության արդյունավետ գործունեության մակարդակը: Մասնավորապես, միայն 1987-1991 թթ. համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց ավելի քան 1000 աշխատություն: Դրանց կեսից ավելին վերաբերում է հայագիտության և ընդհանրապես հումանիտար գիտություններին: Այդ տարիներին հրատարակվել են այնպիսի արժեքավոր կապիտալ աշխատություններ, ինչպիսիք են Մ. Չամչյանի «Պատմություն Հայոց»-ի երեք հատորները, «Նոր բառագիրք հայկազյան լեզվի» (երկու

հատոր), Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսությունը», Գ. Տեր- Մկրտչյանի «Հայագիտական ուսումնասիրություններ», Ա. Մեյեի «Հայագիտական հետազոտությունները», Խրիմյան Հայրիկի «Երկերը», Ն. Ադոնցի «Հայկական հարցի լուծման շուրջ», Ա. Այտնյանի «Քննական քերականություն արդի հայերեն լեզվի», Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» (երեք հատորով), մեր ժամանակակիցներից Թ. Հակոբյանի, Ս. Մելիք-Բախշյանի և Հ. Բարսեղյանի «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը», ակադեմիկոսներ Գ. Ջահուկյանի, Գ. Բրուտյանի, Էդ. Աղայանի, Էդ Ջրբաշյանի, Հր. Թամրազյանի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Մ. Մկրյանի, Գ.Անանյանի, պրոֆեսորներ Հ. Թութունջյանի, Հր. Միրզոյանի, Հ. Էդոյանի. Ս. Մուրադյանի, Ժ. Քալանթարյանի, Վ. Գաբիելյանի և շատ ուրիշների աշխատությունները: Հրատարակված գիտական աշխատությունները ոչ միայն նոր աստիճանի հասցրեցին հայագիտությունը, այլև մեծապես նպաստեցին հայ ժողովրդի ազգային ոգու և արժանապատվության բարձրացմանը:

ԵՊՀ 90-ամյա տարեգրությունում չափազանց կարևոր տեղ ունեն Ղարաբաղյան շարժմանը և Արցախի ազատագրմանը վերաբերող զարգացումները: ԵՊՀ-ն Ղարաբաղյան շարժման կենտրոնն էր, ոչ միայն այն պատճառով, որ շարժման ղեկավարները հիմնականում համալսարանականներ էին, այլև բոլոր առումներով (բարոյահոգեբանական, գիտական, քաղաքական) համալսարանը ամենուրեք նպաստում էր Արցախի ազատագրական պայքարին: Ավելին, երբ Հայաստանի և Ադրբեջանի սահմանամերձ շրջաններում սկսվեցին ընդհարումները, կրակոցները, որոնք հետագայում վերաճեցին Արցախյան ազատագրական պատերազմի, ԵՊՀ-ն ամեն միջոցներով սատար կանգնեց դրան: Պատմության ֆակուլտետի ուսանող Թաթուլ Կրպեյանը դարձավ ազգային հերոս: Շատ համալսարանականներ, հատկապես ուսանողները իրենց կյանքը զոհաբերեցին այդ պայքարին: Արցախյան ազատագրական պայքարին ցույց տրվող օգնությունն առավել արդյունավետ դարձնելու համար ԵՊՀ-ում ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի նախագահը ռեկտոր Ս. Համբարձումյանն էր, անդամներ՝ կուս. կոմիտեի առաջին քարտուղար, դոց. լուսահոգի Յու. Մկրտումյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Ղարիբյանը, լուսահոգի ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը արհմկոմիտեի նախագահ Հ. Մկրտչանը, պրոֆ. Գ. Փանոսյանը, դեցեցնտ Ն. Գալստյանը և լուսահոգի Ֆ. Մելիք-Ադամյանը: Այդ օգնությունը հիմնա-

կանում և արդյունավետ կազմակերպում ու իրականացնում էին դոցենտներ Ն. Գալստյանը, Ֆ. Մելիք-Ադամյանը: Համալսարանը բոլոր հնարավոր միջոցներով զգալի օգնություն ցույց տվեց հատկապես հերոսաբար մարտնչող Մարտակերտի շրջանի տասնյակ բնակավայրեր ազատագրած Լեոնիդ Ազգալդյանի հրամանատարությամբ գործող զորամիավորումներին: Հետագայում Արցախյան ազատագրական պայքարին մեծ նպաստ բերեց արևելագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ. Մելիքյանը, որը արժանացավ կառավարական մի շարք պարգևների:

Արցախյան ազատագրական պատերազմի հաղթանակը չի կոփվել միայն պատերազմի դաշտում: Դրան նախորդել են ազգին բարոյահոգեբանորեն նախապատրաստելու, ժողովրդի մեջ ազգային ոգի արթնացնելու և պահպանելու լուրջ աշխատանքներ, որոնց անմնացորդ լծված էր նաև ԵՊՀ-ն: Ավելին, 80-ական թվականների վերջերին «Ղարաբաղյան հակամարտությունը» տեղափոխվեց Մոսկվա՝ ԽՍՀՄ գերագույն խորհրդի նստաշրջան, որտեղ լարված մեծ աշխատանք կատարեցին ակադեմիկոսներ Վ. Համբարձումյանը և Ս. Համբարձումյանը, գրողներ Ս. Խանզատյանը և Վ. Պետրոսյանը, պրոֆ. Լ. Հարությունյանը, արվեստաբան Հ. Իգիթյանը, հրապարակախոս Զ. Բալայանը և ուրիշներ: Մոսկվայում ընթացող դաժան պայքարում մեր պատվիրակներին համապատասխան պատմական, իրավական ու քաղաքական գաղափարներով ու տեղեկատվությամբ օգնում էին հատուկ Մոսկվա մեկնած համալսարանականներ պրոֆ. Բ. Հարությունյանը, դոց. Վ. Հովհաննիսյանը և ուրիշներ: Դա գաղափարական և քաղաքական դաշտում ոչ պակաս դաժան գոտեմարտ էր, որի գագաթնակետը դարձավ ղարաբաղյան հիմնախնդիրներին նվիրված ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության և ԽՍՄԿ քաղբյուրոյի համատեղ պատմական նիստը, այդ նիստում հատկապես քաղբյուրոյի նախագահ Մ. Գորբաչովի և ԵՊՀ ռեկտոր Ս. Համբարձումյանի արձակատումը՝ համալսարանի ռեկտորի փայլուն հաղթանակով: Հանրապետության հեղինակավոր և հայրենասեր ներկայացուցիչների արժանապատիվ պահվածքը և բարոյահոգեբանական աշխատանքն ու ջանքերը մեծապես նպաստեցին Արցախյան ազատագրական պայքարի պատմական հաղթանակին:

Այսօր Երևանի պետական համալսարանն իր 90-ամյա հոբելյանը տոնում է մեծ շուքով, ավելի հզորացած: Ռեկտորատը, դեկանատները և ամբիոնները ամեն ինչ անում են բարեհաջող ավարտելու մի քանի տարի

առաջ սկսված համալսարանական կյանքը նոր՝ ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ իրականացվող բարեփոխումները:

Գ. Ա. Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
ԵՊՀ տնտեսագիտության
տեսության ամբիոնի
պատվավոր վարիչ

«Ազգ»
29/09/2009թ
№174 (4316)

ՆԱ ԾԱՌԱՅԵՑ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԵՎ ԱՐԱՐԵՑ ԲԱՐԻՆ
(Ստեփան Սիտարյանի պայծառ հիշատակին)

Ակադեմիկոս Ս. Սիտարյանը մոր՝ Մարիա Մարտիրոսովնայի հետ

Քառասուն օր է ինչ չկա Ստեփան Արամաիսի Սիտարյանը՝ հայ և ռուս ժողովուրդների փառապանծ զավակը, համաշխարհային մակարդակի խոշոր գիտնականը, Ռուսաստանի ԳԱ ակադեմիկոսը և Հայաստանի ԳԱԱ արտասահմանյան անդամը:

Այդ առթիվ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը խոր ցավակցություն հայտնեց հանգուցյալի ընտանիքին:

Ռուսաստանի նախկին վարչապետ, ակադեմիկոս Ե. Պրիմակովը գրեց. «Սիտարյանի մահն անփոխարինելի կորուստ է երկրի համար... Ռուսաստանը կորցրեց իր արժանավոր զավակներից մեկին՝ պայծառ մարդուն»:

Ստեփան Սիտարյանի մահն այդ նույն չափանիշներով մեծ կորուստ է նաև հայ ժողովրդի համար:

Նրա ողջ կյանքը եղել է բարեփոխումներին նվիրված մաքառում: Այն եղել է նույնքան դժվարին ու բազմազան, ինչպես իր իսկ ապրած տասնամյակները: Նրա անձը՝ իբրև բարձր արհեստավարժի, մարնավորում է վերափոխումների անհրաժեշտության պատմական օբյեկտիվիզմը ու պետական մոտեցումը այդ նույն վերափոխումների նկատմամբ: Նման համադրությունը Ս. Ա. Սիտարյանին տարբերում էր թե՛ ուղղափառ պահպանողականներից և թե՛ 70-80-ականների խորհրդային մակնիշի արևմտամետներից :

Նրա կենսագրությունը Մարդ-խորհրդանիշի վերելքի ու տառապանքների վավերագրությունն է: Ս. Ա. Սիտարյանը ծնվել է 1930 թ. սեպտեմբերի 27-ին Ալավերդի քաղաքում, ծառայողի ընտանիքում: Այնուհետև ընտանիքը տեղափոխվում է Երևան: Հայրն աշխատում է իբրև գլխավոր հաշվապահ Հայաստանի արդյունաբերության առաջատարում՝ «Կաուչուկ» գործարանում: Մայրը մանկապարտեզի վարիչ էր: Ընտանեկան կյանքը ընդհանում էր հայ մտավորականության առաջադեմ ավանդույթներով, որը ներառում է Հայաստանի և Ռուսաստանի մշակութային լավագույն ժառանգությունը: Պատահական չէ, որ Ս. Սիտարյանը սովո-

ռում էր Ձերժինսկու անվան ռուսական դպրոցում, որն ավարտում է արծաթե մեդալով: Որպես «ժողովրդի թշնամու»՝ 1937 թ. հոր ձերբակալությունը արմատապես փոխում է ընտանիքի կյանքի ռեժիմը: Ստացվում է հոր մահվան լուրը: Մայրը երկրորդ անգամ է ամուսնանում:

Գիտելիքների նկատմամբ բուռն ձգտումը պատկառելի ակադեմիական կրթության, «աշխարհը ճանաչելու» և գիտության ու մշակույթի գործիչների շրջապատում լինելու ցանկությունը օժտված պատանուն տանում են Մոսկվա: 1948 թ. Ս. Սիտարյանը ընդունվում է Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Ըստ երևույթի մասնագիտության ընտրության հարցում որոշակի դեր է խաղում նրա երկրորդ հայրը՝ ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի ապագա վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Բաղալյանը:

1953 թ. Սիտարյանը գերազանցությամբ ավարտում է ՄՊՀ-ն, իսկ 1956-ին՝ ասպիրանտուրան: Նրան անմիջապես հրավիրում են աշխատելու ԽՍՀՄ տնտեսագիտական առաջատար հիմնարկներից մեկում՝ ֆինանսական գիտահետազոտական ինստիտուտում: Երիտասարդ գիտնականի առաջին իսկ ուսումնասիրությունները, որոնք նվիրված էին ազգային եկամուտի ձևավորման, բաշխման և օգտագործման, ինչպես նաև հանրային արտադրության արդյունավետության կնճռոտ հիմնահարցերին, այնքան ուշագրավ էին, որ գրավեցին ժամանակի ԽՍՀՄ ֆինանսների նախագահ Ա.Գ. Զվերևի ուշադրությունը: Նա անձամբ հանձնարարում է Սիտարյանին մշակել միության և հանրապետությունների փոխհարաբերությունների մոդելը՝ ազգային եկամուտի ձևավորման և բաշխման հարցում:

60-ական թվականների կեսերին «կոսիգինյան» հանրահայտ բարեփոխումների ժամանակ, չգտնվեց Սիտարյանից ավելի հարմար թեկնածու ֆինանսների նախարարության կողմից կառավարական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար: Երիտասարդ գիտնականը քանիցս հանդիպում է Ա.Ն. Կոսիգինի հետ և առաջին անգամ առնչվում է մեծ քաղաքականությանը: Տարիներ անց այդ մասին Ստեփան Սիտարյանն ասում էր. «Ինչ էլ որ ասեն այսօր երիտբարեհորոգիչները, փաստը մնում է փաստ, որ այդ տարիներին Խորհրդային միության պլանային տնտեսությունում ստեղծվում էր շուկայական տնտեսության առաջին տարբերակը, դրվում էր նրա շուկայական հիմքը, մշակվում էր գաղափարախոսությունը, ինչպես նաև ապրանքադրամային հարաբերությունների ներդրման նորմատիվ ակտերի համալիր մեթոդիկան: Բայց այդ նա-

խագծին վիճակված չէր իրականանալ, դրան դաժան հարված հասցրին 1968 թ. Չեխական իրադարձությունները, որոնք ԽՍՀՄ ղեկավարության համար դարձան պլանավորման մեջ ամեն ինչի խստացման և ժողտնտեսության մեջ պահպանողական տարրերի ամրապնդման ազդակ»:

1966 թ. Ս. Սիտարյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը, շարունակում է աշխատել որպես քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր և դասավանդում է ՄՊՀ-ի բնագիտական ֆակուլտետներում: Տնտեսական բարեփոխումների ներդրումներն ու ձախողումները կատարվում էին նրա աչքի առաջ՝ իբրև դրանց անմիջական մասնակից, ապա՝ ֆինանսների ԳՀԻ-ի փոխտնօրեն, իսկ 1970-ից՝ տնօրեն: Ա.Ն. Կոսիգինի հանձնաժողովում ձեռք բերած աշխատանքային փորձը, գործնական կապերը նրա և բարեփոխումների մյուս գաղափարախոսների հետ խաղացին իրենց դերը: 1974 թ. Սիտարյանը նշանակվում է ֆինանսների փոխնախարար, ուր նրան հանձնարարվում է ուղղորդել արդյունաբերությունը, շինարարությունը, հաշվապահական հաշվառումը և, առհասարակ տնտեսական բարեփոխումները: Գործնականում աշխատելով ԽՍՀՄ ֆինանսների նախարարությունում նա պատասխանատու էր տնտեսական բարեփոխումների ողջ ընթացքի համար՝ իր հակասությունների շարժով, որ երբեմն կատարվում էր «մի քայլ առաջ, երկու քայլ հետ» սկզբունքով:

1983 թ., Անդրոպովի կարճաժամկետ գահակալության շրջանում, կուսակցության ղեկավարությունը խնդիր է դնում երկրի գլխավոր տնտեսական շտաբն ամրապնդել արհեստավարժ տնտեսագետներով: Սիտարյանը դառնում է ԽՍՀՄ Պետպլանի փոխնախագահ (ընդ որում միակ տնտեսագետը 15 տեղակալների մեջ): Ֆինանսական և սոցիալական պլանավորման բարձրագույն խնդիրները, տնտեսական մեխանիզմների կատարելագործումը իրականացվում էին նրա անմիջական ղեկավարությամբ:

Նրա առաջին առաքելությունը Պետպլանում, որքան էլ տարօրինակ թվա, կապված է Լեհաստանի հետ: Այդ շրջանում Լեհական իրադարձությունները մտել էին տնտեսական քաղաքականության ազատականացման փուլ: Մասնագետների խումբը Սիտարյանի գլխավորությամբ գործուղվել էր Լեհաստան՝ վերլուծելու նրանց ղեկավարության գործունեությունը և մշակելու հանձնարարականներ Վ. Յարուզելսկու ու ԽՍՀՄ Քաղբյուրոյի համար: Լեհաստանում հանձնաժողովն անվանում էին «Սիտարյանի դեսանտ»: Մեկամսյա լարված աշխատանքի ընթաց-

քում հանձնաժողովը գտնվում է Մոսկվայի ավանդական ճնշման տակ՝ չտրվել ազատական ազդեցություններին և չնահանջել սոցիալիզմի քաղաքական սկզբունքներից: Աշխատանքի ավարտին հանձնաժողովը կատարեց արմատական եզրակացություններ, որոնց էությունը հանգում էր հետևյալին, Յարուզելսկուն անհրաժեշտ է սեփականացնել «Սոլիդարնոստի» կարգախոսնը և գլխավորել բարեփոխումները: Լեհաստանի ղեկավարի հետ ունեցած երկարատև զրույցներից հետո նա ասաց, թե այժմ սկսեց ավելի լավ ըմբռնել իր իսկ երկրում կատարվող անցուդարձը: Հանձնաժողովի եզրահանգումները, սակայն, այնքան էլ լավատեսորեն չընդունվեցին Մոսկվայում:

1983 թ. Սիտարյանի հեղինակությունը իբրև գիտնականի, մի նոր հաստատում է ստանում. նա ընտրվում է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ: Գալիս է 1985 թվականը: Սկսվում են «գորչբաչովյան» ժամանակները: Գլխավոր քարտուղար ընտրվելու հաջորդ օրն իսկ Մ. Գորբաչովը Սիտարյանին առաջարկում է դառնալ իր օգնականը և օգնել ձևավորելու և իրականացնելու լայնամասշտաբ «վերակառուցման» աշխատանքները: Սիտարյանը գլխավոր քարտուղարի առաջարկին բացասաբար է պատասխանում՝ հիմնավորելով, որ ինքը պետական ծառայության մեջ ավելի օգտակար կարող է լինել:

Ն. Ի. Ռիժկովի՝ նախարարների խորհրդի նախագահ նշանակելուց հետո Սիտարյանի առջև բացվում են նոր հորիզոններ: Նա շարունակում է աշխատել ԽՍՀՄ-ի Պետպլանում իբրև առաջին փոխնախագահ և միաժամանակ նշանակվում տնտեսական մեխանիզմների կատարելագործման միջգերատեսչական կոմիտեի առաջին փոխնախագահ: Ըստ էության, գործնականում նրա վրա էր դրված կոմիտեի ղեկավարությունը: 1986-89 թթ. կոմիտեի կողմից պատրաստվել և ընդունվել են մեծաքանակ նորմատիվ ակտեր, որոնք հետևողականորեն երկիրը տանում էին դեպի շուկայական տնտեսություն: «Նոր ժամանակների» հեռավորությունից գնահատելով այդ փաստաթղթերը՝ ակադեմիկոսներ Լ. Ի. Աբալկինը, Դ. Ս. Լվովը, Ն. Պ. Շմելյովը և ուրիշներ ընդգծում են, որ Սիտարյանական օրենսդրական ակտերն առնչվում էին ոչ թե պարզապես տնտեսավարման նոր տարրերի ձևավորմանը, այլ գործող պետական կարգի քաղաքական հիմնադրույթներին, որոնք տասնամյակներով անփոփոխ մնալով՝ սկսել էին խանգարել տնտեսության զարգացմանը, հասարակական առաջընթացին: Այդ շրջանի գլխավոր, գուցե և սոցիալիստական պետության կառավարմանն առընչվող առավել արմատական օրենքը կոոպե-

ռացիայի օրենքն էր: Սիտարյանը որպես ղեկավար պատասխանատու էր օրենքի նախագծի գաղափարախոսության համար: Նա այդ օրենքը զեկուցում է Քաղբյուրոյում, և նրա վրա էր ընկնում ամբողջ պատասխանատվությունը, քանի որ Քաղբյուրոյի որոշ ազդեցիկ անդամներ չէին ուզում ներդնել կոպերատիվ հիմունքները երկրի տնտեսական կյանքում՝ չցանկանալով հրաժարվել պետական սեփականության ղեկավարման լծակներից: Այդ նույն տարիներին Սիտարյանի ղեկավարությամբ մշակվեց փոքր ձեռնարկությունների զարգացման մասին առաջին օրենքը:

1989 թ. Սիտարյանը նշանակվում է ԽՍՀՄ նախարարների խորհրդի փոխնախագահ – արտաքին տնտեսական կապերի հանձնաժողովի նախագահ: Պետական կառավարման համակարգում նրա գրաված վերջին պաշտոնը միջհանրապետական արժութային կոմիտեի փոխնախագահն էր:

ԽՍՀՄ փլուզումից հետո Սիտարյանը վերադառնում է հետազոտական և մանկավարժական աժխատանքի: Արդեն ակադեմիկոսի կոչումով (ընտրվել է 1987 թ.) նա հիմնադրում և ղեկավարում է ՌԳԱ Արտաքին տնտեսական հետազոտությունների ինստիտուտը (1988-ից՝ Արտաքին տնտեսական հետազոտությունների կենտրոնը), նաև դասախոսում պետական կառավարման և սոցիալական հետազոտությունների ինստիտուտում: 90-ականների սկզբում, երբ շուրջ բոլորը ամեն ինչ փլուզվում էր և անհետանում էր ինքը՝ տնտեսությունը, Սիտարյանը որոշում է կանխագծել Ռուսական բիզնեսի զարգացման հնարավոր սցենարները: Հարկ էր ունենալ համարձակություն գիտնականի և բարձրակարգ պրակտիկ գործչի ինտուիցիա այդ խառն ու անկախատեսելի շրջանում նման քայլի դիմելու համար: Բայց նա այն գործիչներից չէր, ովքեր հորինում են հայեցողական տեսություններ: Նրա կանխատեսումները իրապես օգտակար էին. օգտակար՝ երկրի, գիտաշխատողների, ուսանողների և նույնիսկ լրագրողների համար:

Սիտարյանը մեծ և արդյունավետ աշխատանք է կատարել Տնտեսագետների միջազգային միության շրջանակներում: Արգենտինայի, Իսրայելի, Չինաստանի և այլ երկրների գիտնականները բազմիցս նշել են նրա տեսական աշխատանքների բացառիկ դերը համաշխարհային տնտեսագիտական մտքի և հատկապես զարգացող տնտեսությունների մեջ: Դրանցից են Սիտարյանի դրույթները՝ երկրի ղեկավարման մեջ գաղափարականից տնտեսականի վրա սևեռելու, տնտեսության որոշ ենթաբաժիններում սեփականության իրավունքը տնտեսավարման

իրավունքից առանձնացնելու, պլանային ցուցանիշներում պետական ծանրաբեռնվածության մասշտաբների կրճատման, տնտեսական բարեփոխումների համալիր և ոչ թե աստիճանական անցկացման անհրաժեշտության, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար ներքին շուկայի համապարփակ օգտագործման և այլ գաղափարներ: Սոցիալիստական երկրներում կապիտալիստական տարրերի զարգացման գործում կոպերացիայի դերը լայնորեն կիրառվեց հատկապես Չինաստանում:

Լինելով եռանդուն և նպատակասլաց մարդ՝ Սիտարյանը 1996 թ. Տնտեսագետների միջազգային միության շրջանակներում ստեղծեց մենեջմենթի միջազգային ակադեմիա և մինչև կյանքի վերջ ղեկավարեց իբրև նախագահ: Ծնորհիվ նրա կազմակերպչական տաղանդի և փայլուն գիտնականի հեղինակության Մենեջմենթի ակադեմիան վերածվեց լրջագույն կազմակերպության՝ իր մեջ միավորելով բազմաթիվ գիտնականների ու պրակտիկ գործիչների, որոնք ունեն որոշակի սոցիալական դիրք և հանրային ճանաչում:

Սիտարյանը հեղինակ է բազմաթիվ աշխատությունների քաղաքատնտեսության, ֆինանսավարկային համակարգի, կառավարման, տնտհաշվարկի, ինքնաֆինանսավորման, գնագոյացման, տնտեսական խթանման և արտաքին տնտեսական կապերի գծով: Հրապարակել է մի քանի մենագրություններ, այդ թվում՝ «Զուտ եկամուտ և բյուջե», «Տնտեսական բարեփոխումներ և բյուջե», «Բաշխման հարաբերություններ և արտադրության արդյունավետություն», «Միութենական հանրապետությունների ազգային եկամուտը», «Կառավարում և շահույթ», «Ռուսաստանի արտաքին տնտեսական կապերի զարգացման հիմնահարցերը շուկայական վերափոխումների փուլում»:

Սիտարյանը մեծապես ծառայել է նաև Հայաստանին: Նա մշտապես իր խորհուրդներով օգնում էր հանրապետության ղեկավարներին՝ լուծելու երկրի առջև ծառացած հրատապ խնդիրները սոցիալ-տնտեսական զարգացման, ընթացիկ և հեռանկարային պլանավորման, արտադրողական ուժերի տեղաբաշխման հարցերում: Նա հատուկ ուշադրություն էր դարձնում հանրապետությունում տնտեսական մեխանիզմների համալիր ներդրմանը, նրա գիտական և մշակութային ներուժի զարգացման դինամիկային: Նա գործուն մասնակցություն է ունեցել Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացմանն ուղղված մեծամասշտաբ միջոցառումներում: Ն. Ի. Ռիժկովի հանձնարարությամբ նա էր կոորդինացնում

և ղեկավարում այդ աշխատանքները: Ակադեմիկոսներ Ա. Աղանբեկյանի և Ս. Գրիգորյանի հետ կազմակերպել է Հայաստանի վերծննդի ֆոնդ: Նա ամենայն բծախնդրությամբ հիմնավորում էր, թե զարգացման տվյալ փուլում մրցակցային ինչ առավելություններ կամ թերություններ ունի Հայաստանը՝ համաշխարհային գործընթացներին ինտեգրվելու առումով:

Ստեփան Սիտարյանը զարմանալիորեն իր մեջ խտացնում էր մարդկային առաքինությունների ողջ գամման: Համախոհները, գործընկերները և բարեկամները նրան գիտեին որպես իմաստուն և սկզբունքային, ներհուն և հստակ մտածողի և քննադատական գնահատականներից չվախեցող անձնավորության, որը հարաբերությունների մեջ ոչ մի կեղծիք չէր հանդուրժում: Շրջապատողները արժանին էին հատուցում նրա ազնվությանը, առաքինությանն ու բարոյական բարձր հատկանիշներին, լայն էրուդիցիային և բացառիկ համեստությանը:

Ով եղել է նրա տանը, գիտի, թե նա ինչ հյուրասեր տան տեր էր, զվարճախոս ու հետաքրքիր մարդ, ով կարողանում էր ոգի հաղորդել առօրյա սեղանին: Նրա սերն ու հարգանքը ծնողների, կնոջ ու երեխաների նկատմամբ, անսահման նվիրվածությունը ընտանեկան ու բարոյական արժեքներին ու ավանդույթներին մշտապես հիացնում էին բոլորին: Սիտարյանը շրջապատված էր բազմաթիվ ընկերներով, բարեկամներով ու համակիրներով: Ընդ որում, նրանք ընդգրկում էին մարդկային գործունեության ողջ ներկապնակը: Առանձնապես հոգեհարազատ մտերմություն էր հաստատվել նրա և ակադեմիկոսներ Ե. Պրիմակովի, Ա. Բունիաթյանի և շախմատի աշխարհի չեմպիոն Տ. Պետրոսյանի միջև:

Պատմությունը պետք է միշտ հիշվի, իսկ այն գոյանում է կոնկրետ մարդկանց գործունեությունից: Ս. Սիտարյանը անբաժան մասն է ԽՍՀՄ-ի, Ռուսաստանի և Հայաստանի պատմության ու այնտեղ կմնա հավետ:

Թող լույս իջնի նրա շիրիմին...

Ռ. Մ. Մարտիրոսյան
ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս
Ֆ. Տ. Սարգսյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
ՀՀ վարչապետի խորհրդական
Գ. Ա. Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ
«Ազգ»
03/04/2010

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ «100 ՔԱՅԼ» ԾՐԱԳՐԻՆ

Հայ ազգային կոնգրեսի հրապարակած «100 քայլ»-ը տնտեսագիտության դոկտոր, նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի գիտական ղեկավարությամբ կազմված ծրագիր է, որը, ըստ հեղինակների, նպատակ ունի զանգվածային համաժողովրդական շարժմամբ, գործող տնտեսական համակարգի արմատական վերափոխմամբ երկիրը դուրս բերել ծանր վիճակից և ստեղծել կայուն զարգացող տնտեսություն:

Երկիրը ինչպես հայտնվեց սոցիալ-տնտեսական կաթվածահար վիճակում:

Մեծ երկրաշարժից, տնտեսական շրջափակումից և ղարաբաղյան հակամարտությունից խոցված երկրում աններելի էր կանգնեցնել «Նաիրիտ» հզոր ձեռնարկությունը, Հայաստանին զրկելով Ռուսաստանի հետ շահավետ տնտեսական համագործակցության այդ շատ կարևոր օղակից, իսկ բնակչությանը՝ հազարավոր աշխատատեղերից: Հարյուրավոր ձեռնարկություններ դադարեցին աշխատելուց և հազարավոր աշխատողներ դարձան գործազուրկ: Շուկայական տնտեսական համակարգին անցնելու ոչ արդյունավետ վերափոխումների հետևանքով 1990-1997 թթ. հանրապետության ներքին արդյունքը կրճատվեց 40%-ով, իսկ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը՝ շուրջ 54%-ով:

Աղետի գոտու վերականգնման հսկայական տեխնիկական պարկը հանրապետության ձեռնարկությունների և կառույցների մետաղյա կոնստրուցիաների ու հաճախ գործող հաստոցների հետ՝ իբրև մետաղյա ջարդոն, չնչին գներով իրացվեց Իրանին:

Սեփականաշնորհումն իրականացվեց հին և նոր սերտաճած նոմենկլատուրայի օգտին, իսկ բնակչության ստացած ոչ մեծ չափերի վաուչերները փոքր և միջին ձեռնարկատիրության համար հնարավոր չեղավ օգտագործել, քանի որ ժողովրդի շուրջ 11 մլրդ դոլարի հասնող ավանդները սառեցվեցին: Վրա հասավ աղքատությունը, որը 1996 թվականին կազմեց բնակչության 54 %-ը: Ահավոր չափեր ընդունեց բնակչության եկամուտների և ընդհանրապես հարստության բևեռացումը:

Հայաստանի գյուղը մինչև հողի մասնավորեցումը և «վերափոխումները», իր բոլոր թերություններով հանդերձ, պահպանել է իր ավանդական նկարագիրը: Հանրապետությունում գործում էին 860 գյուղացիական խոշոր տնտեսություններ, որոնց գերակշռող մասը բարձր ապրանքային

տնտեսություններ էին (հատկապես անասնապահությունը): Աշխատանքների զգալի մասը մեքենայացված էր, մատաղ սերունդը ստանում էր նորմալ նախադպրոցական և միջնակարգ կրթություն և ուսումը շարունակում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Այդ բոլորից հետո, անհասկանալի էր՝ ինչու ԱՊՀ երկրներում առաջիններից մենք սկսեցինք մասնավորեցնել հողը և «վերափոխել» գյուղը: Գոյացան 321 հազար մասնավոր մանր տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին միջին հաշվով հասնում էր 1.3 հեկտար հողաբաժին, այն էլ միջինը չորս տարբեր հողատարածքներում, ինչը բացառում էր ինդուստրացված արդյունավետ գյուղատնտեսությունը: Գյուղացին մնաց ձեռքի անարտադրողական աշխատանքի հույսին, իսկ տնտեսությունը ապրանքայինից դարձավ փակ՝ նատուրալ տնտեսություն: Այդ ամենից գյուղը, հատկապես բարձր լեռնային և սահմանամերձ շրջաններում ընկավ ծանր վիճակի մեջ: Երիտասարդները հեռանում էին, ծննդաբերությունը նվազում էր, կրճատվում էր դպրոցներում սովորողների թիվը և այլն: Շուրջ մեկ միլիոն մարդ հանրապետությունից արտագաղթեց: Ո՞վ է հաշվել մարդկային այդ կապիտալի իրական արժեքը: Ահա այդ իրավիճակում Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, պաշտոնը հանձնեց այն ժամանակվա վարչապետ Ռոբերտ Քոչարյանին, որը ստեղծված իրավիճակի, մասնավորապես ստվերային տնտեսության և կոռուպցիոն մթնոլորտի մասին քաղաքական գնահատական չտվեց, և մեծ մեղավորները չպատժվեցին: Չնայած, 1998 թ. սկսած երկրի տնտեսական զարգացումը կայունացավ, իսկ 2000-ից սկսեց աճել, աղքատությունը որոշ չափով կրճատվեց, իսկ արտագաղթը մեղմացավ, սակայն ստվերային տնտեսությունը և հատկապես մեծ կոռուպցիան չկրճատվեցին: Ընդ որում, գնալով վատթարացավ գյուղի, հատկապես բարձր լեռնային և սահմանամերձ գյուղերի վիճակը: Ահա այն՝ ոչ մխիթարական ժառանգությունը, որ ստացավ Հայաստանի Հանրապետության երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը:

Հանրապետության երրորդ նախագահի համար շարունակվում են չլուծված մնալ աղքատության (30 %) հաղթահարման, գյուղը և գյուղատնտեսությունը ծանր վիճակից փրկելու, մեծ կոռուպցիան, հարուստների և աղքատների սպառնացող շերտավորումը հաղթահարելու և բարձր որակավորմամբ աշխատուժի արտահոսքը կասեցնելու, ինչպես նաև լուծելու սրված արտաքին քաղաքական խնդիրները: Դրանք բոլորն էլ ազ-

գային անվտանգության խնդիրներ են, որոնց լուծումը ժամանակակից համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ավելի դժվարացավ: Սակայն պետք է նշել, որ նախագահը ինչպես արտաքին քաղաքական խնդիրների, այնպես էլ ներքին, հատկապես երկրի ազգային անվտանգության խնդիրների լուծման ուղղությամբ հետևողական արդյունավետ աշխատանք կատարում է: Հայաստանի ԿԲ-ի նախկին տնօրեն պարոն Տիգրան Սարգսյանին վարչապետի պաշտոնում նշանակելը հնարավոր դարձրեց երկրի սոցիալ-տնտեսական կյանքը, նրա ողջ համակարգը, կառավարել պատշաճ մակարդակով ու մեծ պատասխանատվությամբ:

Ազգային կոնգրեսի «100 քայլ» ծրագրի մասին:

Ազգային կոնգրեսի «100 քայլ» ծրագրի փաստն ամբողջությամբ վերցրած դրական երևույթ է, որի առանձին եզրակացությունների, առաջարկությունների ճիշտ կիրառումը կարող է նպաստել հանրապետության սոցիալ-տնտեսական խնդիրների արդյունավետ լուծմանը: Սակայն երկրի սոցիալ-տնտեսական կյանքի արմատական վերափոխման ավարտուն համապարփակ ծրագիր չէ:

Առաջարկվող քայլերը ճիշտ արժեքավորելու և գնահատելու նպատակով, ըստ բաժինների հանգամանորեն քննարկել ենք համապատասխան գիտակ և կոնկրետ մասնագետների հետ և հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

«Քայլ 1»-ով հարկային և մաքսային քաղաքականության բաժնում առաջարկվում է հարկային բեռի վերաբաշխում միջին և փոքր բիզնեսից դեպի խոշոր բիզնես:

Սոցիալական առումով, հարստության մեծ բևեռացման կրճատման և անապահով խավի օգտին եկամուտները վերաբաշխելու առումով հարցադրումը ճիշտ է, սակայն հարկի չափերը մեր կարծիքով քննարկելու և ճշգրտելու կարիք ունեն:

«Քայլ 4»-ով առաջարկվում է նվազագույն աշխատավարձի չափերի մոտեցում միջին աշխատավարձին: Նվազագույն աշխատավարձի բարձրացումը ՀՀ Կառավարության գործունեության ուղղություններից է: Բայց որ այն պետք է մոտենա միջին աշխատավարձին իրատեսական չէ, քանի որ ճիշտ տնտեսվարման դեպքում միջին աշխատավարձը չի կարող տեղում դոփել, այն ևս պետք է բարձրանա:

«Քայլ 8»-ով առաջարկվում է եկամուտների և գույքի համընդհանուր հայտագրում: Հայտագրման գործընթացը մեկնարկվել է դեռևս 2002

թվականից: Կառավարության կողմից նախաձեռնվել է հարկատուների շրջանակի աստիճանական ընդլայնման օրենսդրական փաթեթի մշակումը:

«Քայլ 11»-ով առաջարկվում է մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների խրախուսում: Կառավարության կողմից ներկայումս իրականացվում են կենսաթոշակային համակարգի արմատական վերափոխմանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես կուտակային համակարգի ներդրման մասով:

«Քայլ 12»-ով առաջարկվում է ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) կրճատում, շրջանառության հարկի կիրառում: Աննպատակահարմար է ԱԱՀ-ին զուգահեռ շրջանառության հարկի կիրառումը: ԱԱՀ-ն հանդիսանում է բյուջեի հարկային ամենամեծ մուտքեր ապահովող հարկատեսակը:

«Քայլ 14»-ով առաջարկվում է գյուղմթերքների թափոնների պետական հաշվառում: Դա հարկային մարմինների գործը չէ: Հարկային մարմիններն իրականացնում են միայն հսկողության գործառույթ:

«Քայլ 18»-ով առաջարկվում է խոշոր գույքի հարկի բարձրացում: «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված է բնակելի նշանակության շինությունների հարկման պրոգրեսիվ դրույքաչափեր: Ընդ որում, մինչև 3 մլն դրամ արժեքով շինությունների համար գույքահարկի պարտավորություն չի առաջանում:

«Քայլ 26»-ով առաջարկվում է հարկային արտոնությունների բացառում: Հարկային արտոնությունների կրճատումը կիրառվում է, որը կհանգեցնի հավասար մրցակցային դաշտի ձևավորմանը:

Բանկային ոլորտ, վարկային կազմակերպություններ, ներդրումային հիմնադրամներ, արժեթղթերի շուկա հատվածներում նույն վիճակն է: Մեր կարծիքով կիրառելի չեն հետևյալ առաջարկությունները:

«Քայլ 41»-ով առաջարկվում է ԿԲ-ի քաղաքականության խորհրդարանական վերահսկում: Նախ, ԿԲ-ի նպատակները սահմանվում են օրենքով, իսկ գնաճի թիրախը հաստատում է Ազգային ժողովը: Ավելի մանրամասն հսկողությունը նշանակում է ԿԲ-ի գործունեության անկախության սահմանափակում: Սակայն առանց դրա հնարավոր չէ արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրականացումը:

«Քայլ 43»-ով առաջարկվում է բանկերի գրանցման պահանջների մեղմացում: Ըստ միջազգային գնահատականների, ՀՀ-ում բանկերի քանակի պակաս չկա: Խնդիրը բանկերի կապիտալի մեծացումն է: ԿԲ-ը

կողմնակից է խոշոր կապիտալ ունեցող բանկերի թվի ավելացմանը, ինչը դրականորեն կազդի երկրի ֆինանսական կայունության վրա և հնարավորություն կտա իրականացնել մեծածավալ ծրագրեր:

«Քայլ 53»-ով առաջարկվում է «բանկային ակտիվների խրախուսում և 2012 թ. դրանք 12 մլրդ դոլարի հասցնելու խնդիր»: Հաշվարկները ցույց են տալիս, որ առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները 2012 թ. 12 մլրդ դոլարի հասցնելը իրատեսական չէ:

«Քայլ 56»-ով առաջարկվում է արժեթղթերի շուկան դուրս բերել ՀՀ ԿԲ-ի գործառնություններից: Ամբողջ աշխարհում միտում է նկատվում ողջ ֆինանսական հատվածը կենտրոնացնել միասնական ֆինանսական վերահսկողության մարմինների ներքո, որոնք միաժամանակ նաև անկախ են: Հայաստանում այդ չափանիշներին բավարարող միակ կառույցը հենց ՀՀ ԿԲ-ն է:

Կան նաև ոչ կիրառելի, ինչպես նաև դժվար կիրառելի այլ քայլեր, որոնք բոլորը մեկ հոդվածում թվարկելը և վերլուծելը հնարավոր չէ:

42, 44, 48, 50, 54, 55, 58 քայլերով առաջարկությունների գաղափարները, վերլուծություններն ու դիտողությունները հայտնի են իշխանություններին և կիրառելի են, կամ արդեն կիրառվում են:

Ինչ վերաբերում է 49-րդ քայլին՝«բանկերի կողմից ներդրումների դադարեցում, ազգային արժույթի ուժեղացում», այն նախատեսվում է իրականացնել, մասնավորապես ՀՀ ԿԲ-ի և կառավարության համատեղ մշակված և քննարկումների փուլում գտնվող ապադոլարայնացման միջոցառումների կարգավիճակով:

«100 քայլ»-երի մի բաժինը (10 քայլ) վերաբերում է գյուղատնտեսությանը: Դրանք իրոք ուշադրության արժանի են, սակայն այդ առաջարկություններն արդեն կառավարության համապատասխան օղակներում համակարգված ծրագրավորվել են և իրականացման փուլում են գտնվում: 2009-2010 թվականներին Հանրային խորհուրդը գյուղարտադրողների, մարզերի արտադրական, սոցիալական ենթակառուցվածքների և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպել է քննարկումներ, մշակել է միջոցառումներ հանրապետության գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացման մասին և կազմել է համապատասխան առաջարկություններ: Մասնավորապես որոշվել է, իրականացնել գյուղացիական տնտեսությունների հորիզոնական և ուղղահայաց կոոպերացիայի բազմապրոֆիլ և բազմաշերտ համակարգում վերամիավորում, բոլոր առումներով ուժեղացնելով պետության աջակցությունը՝ լու-

ծելու վարկավորման, աշխատանքների մեքենայացման, արտադրանքի իրացման, կադրերի պատրաստման և վերապատրաստման և այլ կարևոր խնդիրներ: Շուտով կնդունվի ՀՀ գյուղատնտեսության և գյուղի կայուն զարգացման ռազմավարությունը 2010-2020 թվականների համար:

Ինչ վերաբերում է սոցիալական ոլորտի առաջարկություններին (70-80 քայլեր), ապա եկամուտների մեծ բևեռացման կրճատումը, աղքատության հաղթահարումը, եկամուտների՝ հատկապես կենսաթոշակների էական բարձրացումը վաղուց է ինչ հասարակության քննարկումներից չեն հանվում և այդ ուղղությամբ վերլուծությունները անպայման ուշադրության արժանի են և կառավարական համապատասխան մարմինները պետք է դրանց վրա ուշադրություն դարձնեն:

Միևնույն ժամանակ, ոչ բոլոր առաջարկություններն են ճիշտ: Օրինակ, 84-րդ քայլում նշվում է. «Գիտությունն ամբողջությամբ պետք է տեղափոխել համալսարաններ»: Որ համալսարանները պետք է գիտությամբ զբաղվեն, դա նորություն չէ: Սակայն գիտությունն ամբողջությամբ համալսարաններ տեղափոխելու ենթատեքստն ուղղված է Գիտությունների ազգային ակադեմիայի դեմ: Դա արդեն ընդունելի չէ, որ 1943 թ. պատերազմի ծանր տարիներին ստեղծված և աշխարհում մեծ հեղինակություն նվաճած Ազգային ակադեմիան ցանկանում են ոչնչացնել: Ուշադրության արժանի այլ ընդունելի կամ ոչ ընդունելի վերլուծություններ, առաջարկություններ ու դատողություններ կան նաև գործարարության և մրցակցության հարցերի, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման, ինչպես նաև սեփականաշնորհման խնդիրների շուրջ:

Խնդիրը Հայ ազգային կոնգրեսի ներկայացրած ծրագրի փիլիսոփայության ամբողջական գնահատումն է: Այսօրվա մեր ազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերների պայմաններում հրամայական է դարձել ազգային համերաշխությունն ու միասնությունը և ոչ թե Հայ ազգային կոնգրեսի ծրագրի և գործող իշխանությունների առճակատումը: 1920-ական թվականների հայ-թուրքական պատերազմի ծանր օրերին, երբ Մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը գերդաստանով պատերազմի դաշտում էր, Թիֆլիսի մեծահարուստ հայերի մեծ մասի անհոգությունից և անտարբերությունից հիասթափված, դառնացած ու զայրացած, Վենետիկում գտնվող Ավետիք Իսահակյանին գրում է. «Սիրելի Ավո, ստիպված եմ կսկիծով ասել, որ այդպես էլ ազգ չդարձանք, մնացինք խալխ»: Որպես մեկ միասնական ազգ միավորվելը Մեծ բանաստեղծը համարում էր այն ժամանակների անելանելի վիճակից փր-

կության միակ պայմանը: Այն այդպիսին է նաև այսօր: Այո, Հայ ազգային կոնգրեսի ծրագիրը պետք է լինի ոչ թե առճակատման, այլ միավորման, իսկապես հայ ազգային միասնական փիլիսոփայություն:

Գ. Ա. Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր, Երևանի պետական
համալսարանի տնտեսագիտության
տեսության ամբիոնի
պատվավոր վարիչ

«Ազգ»
03/04/2010

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի վերարտադրության առումով անհանգստացնող է նախ բնակչության ծնելիության մակարդակի նվազման միտումը: Այսպես, վերջին 20 տարիներում ծնունդների թիվը 1000 կնոջ հաշվով 209-ից իջել է 28-ի, կրճատվել է 7,5 անգամ: Եթե ծնելիության գումարային գործակիցը մինչև 1990 թ. ապահովում էր Հայաստանի Հանրապետության բնակչության ընդլայնված վերարտադրությունը և տատանվում էր 2,2-2,3 շրջանակներում, ապա 1995-2011 թվականներին հայտնվեց 1,2-1,6 սահմաններում, որը չի ապահովում անգամ բնակչության պարզ վերարտադրությունը: Հարցումները և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծնելիության մակարդակի անկման վրա, բացի բնակչության զանգվածային աղքատությունից, սոցիալ-հոգեբանական ծանր վիճակից, ազդել են նաև արտագաղթի (միգրացիայի) հետևանքով ընտանիքում տեղի ունեցող ժողովրդագրական և բարոյահոգեբանական նեգատիվ փոփոխությունները: Պատահական չէ, որ հենց 1990-ական թվականներից հետո հանրապետությունում գրանցվեցին 3 անգամ ավելի քիչ ամուսնություններ և 6 անգամ ավելի ամուսնալուծություն: Տեղի ունեցող ժողովրդագրական զարգացումների հետազոտողները հաշվարկել են, որ այդ միտումները շարունակվելու դեպքում, եթե պահպանվեն տարբեր ձևերով արտագաղթի ժամանակակից ծավալները, 20 տարի հետո հանրապետության բնակչությունը կկազմի ընդամենը 1 միլիոն 200 հազար մարդ: Դա արդեն երկրի համար աղետ է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ցածր են բնակչության վերարտադրության, և նրա առողջապահությանն ուղղված պետական հատկացումները: 2005 թ. դրանք կազմել են ՀՆԱ-ի ընդամենը 1,5%-ը, երբ ցածր ու միջին եկամուտ ունեցող երկրներում այն հասել է 4–8%-ի: Դրանով է բացատրվում, որ հանրապետությունում առողջապահության ոլորտի աշխատողների միջին ամսական աշխատավարձը ամենացածրերից է: Դրա հետևանքով շարունակում են մեծ լինել կոռուպցիոն ռիսկերը և անարդյունավետ մնալ պետական կամ մասնավոր ապահովագրությամբ բուժումը:

Մարդկային կապիտալի կորուստներն աճում են հատկապես սիրտանոթային և չարորակ նորագոյացությունների արագ զարգացումների հետևանքով: Ցավալի է, որ այդ հիվանդությունների տարիքը երիտասարդանալու միտում ունի: Դրան նպաստել են նաև պահանջվող առողջապահական ծառայությունների համար մեր աղքատ բնակչության վճարունակ ցածր հնարավորությունները: Տնային տնտեսությունների հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին նվազել են ընտանիքների կողմից բժշկական ծառայությունների դիմաց կատարվող վճարումները: Այսպես, 2011թ. տնային տնտեսությունների կողմից բժշկական ծառայությունների համար կատարած վճարումները կազմել են ընտանիքի ամբողջական ծախսերի 7,6%-ը՝ 2009 թ.-ի 11,2%-ի դիմաց: Վիճակը հատկապես վատ է գյուղերում: Գյուղում բնակիչը մեկ ամսում առողջապահության վրա ծախսում է ընդամենը 537 դրամ: Մյուս կողմից, եթե տնային տնտեսությունը բուժման համար հարկադրված մեծ ծախսեր է կատարում, ընտանիքը կարող է հայտնվել աղքատության գծից ներքև: Տնային տնտեսությունների հետազոտություններից պարզվել է, որ հանրապետության տնային տնտեսությունների 6%-ն աղքատ է դարձել առողջության վերականգնման համար ընտանիքի բյուջեից վճարումներ կատարելու հետևանքով:

Վերջին 20 տարիներում մարդկային կապիտալի վերարտադրության ընդհանուր համակարգում մեծ կորուստներ ունեցավ նաև կրթական համակարգը, կրթական կապիտալը: Հիշենք, որ 1920 թ. սկսած Խորհրդային Հայաստանում կրթությունը, այդ թվում նաև նախադպրոցական կրթությունը, մեծ զարգացում ստացավ: Մարդկային զարգացման ընդհանուր ինդեքսում, կրթության ինդեքսով Հայաստանը առաջավոր տեղ գրավեց: Հայաստանը հայտնվեց Սովետական Միության ամենաառաջնակարգ տեղերում: Ավելին, ձևավորվեց բարոյաքաղաքական և հայրենասիրական մեծ արժեքներով օժտված մարդկային կապիտալ, որը հայրենական մեծ պատերազմում և Արցախի ազատագրման գոյամարտում հերոսության փայլուն էջեր գրեց:

1990-ական թվականներին մեծ հարված հասցվեց նաև կրթությանը: Հիմնովին կործանվեց նախադպրոցական կրթությունը: Ներկայումս հանրապետության 400-ից ավելի համայնքներում ընդհանրապես չկան նախադպրոցական հաստատություններ (մսուր/մանկապարտեզներ), իսկ 2004 թ. երեխաների ընդհանուր ընդգրկվածությունը դրանցում կազ-

մել էր ընդամենը 20% (27,4% քաղաքում, 8,7% գյուղում), 2011թ. 26%, երբ աշխարհի առաջավոր երկրները (Ճապոնիան) հասել են 90% ընդգրկվածության:

Հայաստանի կառավարությունը 2008 թ. հաստատեց «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008–2015 թ. ռազմավարության ծրագիր», որով նախատեսվում է մինչև 2015 թ. ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկաններ) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%: Եղած փաստական, աճի ցածր տեմպերով դա իրականանալ չի կարող:

Հանրապետությունում մտահոգող խնդիր է նաև երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական դպրոցներում: Ըստ պաշտոնական վիճակագրական ծառայության աղբյուրների 2002-2004 թվականներին դպրոց չհաճախող երեխաների թիվը կազմել է համապատասխանաբար 1531, 4823 և 7630 հոգի: Անգրագիտությունը ոչ թե վերացման, այլ աճի միտում ունի: 2011թ. մարդահամարի արդյունքներում մոտ 108169 տղամարդիկ չունեն տարրական կրթություն, իսկ 9864-ը տառաճանաչ չեն: Ընդ որում, կրթական մակարդակով, 2011թ. գյուղական համայնքները շուրջ երեք անգամ զիջում են քաղաքայինին: Անգամ 2011թ. երկրում հազարավոր մարդիկ ուղղակի անգրագետ էին, որը անհամատեղելի է 21-րդ դարի մարտահրավերներին: Այդ բոլորի հետևանքով Հայաստանն այսօր կրթության որակի ցուցանիշով գրավում է 105-րդ տեղը:

Մարդկային կապիտալի կորուստներից են գործազրկությունը, աշխատունակ բնակչության թերզբաղվածությունը և ոչ մասնագիտությամբ աշխատելը: 1990-ական թվականների խոր ճգնաժամը հանգեցրեց աշխատունակ բնակչության զանգվածային գործազրկության: 1998 թ. հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկությունը 9,4% էր, իսկ ոչ պաշտոնական հետազոտության արդյունքներով իրական գործազրկությունը՝ 27,3%: 2007-2008 թթ. մեր հետազոտության նյութերով հիմնական աշխատանքում զբաղվածների 71,4%-ն աշխատել է լրիվ աշխատօրով, իսկ 14.4%-ը՝ ոչ լրիվ աշխատօրով: Ընդ որում, ոչ լրիվ աշխատաշաբաթով աշխատողների տեսակարար կշիռն ամենաբարձրը Սյունիքի մարզում էր (72,1%), Լոռու մարզում (64,3%) և Տավուշի մարզում (62,9%): Գործազրկությունը բարձր է հատկապես երիտասարդների շրջանում: Համաձայն Հայաստանի երիտասարդների ազգային զեկույցի՝ զբաղված երիտասարդների 56%-ը չի աշխատում իր մասնագիտու-

թյամբ, ինչը մարդկային կապիտալի որակական մեծ կորուստ է: Զբաղվածությունը ցածր է հատկապես բարձր լեռնային գյուղերում: Հանրապետությունում այժմ կա շուրջ 200.000 գործազուրկ, իսկ աշխատողների մի զգալի մասը իր մասնագիտությամբ չի աշխատում: Հենց դրանք են բնութագրում մարդկային կապիտալի հսկայական կորուստները:

Արտագաղթը մարդկային կապիտալի բացահայտ կորուստ է: Արտագաղթը մեր պատմության անբաժան մասն է: Այն զանգվածային բնույթ ընդունեց 1915 թ. Ցեղասպանության տարիներին: Հայաստանը փոքրացավ, բնակչության մի մասը տեղում կոտորվեց, մյուս մասը անապատներում: Հայ մեծ պատմաբան Նիկողայոս Ադոնցը դառնացած գրեց. «Աշխարհը, այդ թվում և Խորհրդային Ռուսաստանը, անտարբեր մնաց այդ բոլորին, և Մեծ Հայաստանի փոխարեն «երազների բոցավառ խարույկից մնաց միայն մի աղքատ ճրագ, որ առկայծում է Արագածի ստորոտին, ավաղ այնքան թույլ, որ նրա շողերը հազիվ են հասնում մինչև Արաքսի ջրերը և անզոր են լուսավորելու Մասիսի մռայլ ճակատը»: Ձևավորվեց հայրենիքից դուրս հայկական Սփյուռքը, որում այսօր ապրում է աշխարհի 10 միլիոն հայերից շուրջ 7 միլիոնը: Ահա մեր ժողովրդագրական այսօրվա տխուր պատկերը: Ճիշտ է, 1921 թ. մինչև 1973 թ. Հայաստան ներգաղթեցին 200 հազարից ավելի մարդիկ, բայց հայրենաղարձությունը հետագա զարգացումներ չունեցավ: Ընդհակառակը, 1988 թ. երկրաշարժով և ԽՍՀՄ փլուզումով նորից զարգացան հակառակ միտումները: Երկրաշարժից 25.000 մարդ զոհվեց, իսկ 50.000-ը արտագաղթեցին: Դա արտագաղթ էր բնական աղետից: Դրան հաջորդեց ղարաբաղյան հակամարտությունով և պատերազմով պայմանավորված արտագաղթը:

Արտագաղթի ծավալները մեծ չափերի հասան հատկապես 1992-1994 թվականներին: Երկրաշարժի ավերածություններին գումարվեց ատոմակայանի և «Նաիրիտ» արտադրական միավորման հանցավոր փակումը: Դա կաթվածահար արեց երկրի տնտեսությունը. փակվեցին հարյուրավոր ձեռնարկություններ, հազարավոր մարդիկ դարձան գործազուրկ, ապրելով առանց աշխատանքի՝ ցրտի և մթի պայմաններում: Հայաստանի բնակչության համար սոցիալ-հոգեբանական մեծ աղետ էր շուրջ 11 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք ընտանիքների ավանդների սառեցումը: Այդ ամենի հետևանքով Հայաստանում միջին դաս, փոքր և միջին ձեռնարկատիրություն չկայացավ: Բնակչության հարստության և եկամուտների բևեռացումը ահռելի չափեր ընդունեց: Ըստ 1998-1999 թվականնե-

ի ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գնահատումների՝ 20% ամենաշատ և 20% ամենաքիչ ապահովված բնակչության եկամուտների տարբերությունը հասավ 32 անգամի (Ռուսաստանի Դաշնությունում 16 անգամի դիմաց): Այդ բոլորի հետևանքով բնակչության 56%-ը դարձավ աղքատ, և ընդամենը երեք տարում շուրջ մեկ միլիոն մարդ երկրից արտագաղթեց: Վերադարձավ միայն 370 հազարը: 610 հազարը չվերադարձավ: Դա ազգային աղետ էր՝ մարդկային կապիտալի մեծ կորուստ:

Մեր և վերջին տարիներին մի շարք հետազոտություններով պարզ դարձավ, որ արտագաղթ կամ միգրացիա ծնող պատճառները շատացել են: Բացի աղքատությունից, աշխատատեղերի բացակայությունից միգրացիայի լուրջ պատճառներ են դարձել աշխատավարձի ցածր մակարդակը, ապագայի նկատմամբ անվստահությունը կամ անորոշությունը, կոռուպցիան, սոցիալական ընդգծված անարդարությունը և անպատժելիությունը, օրենքի բացակայությունը, հարստության ու եկամուտների գնալով աճող բևեռացումը և այլն:

Որո՞նք են միգրացիոն հոսքերի ժամանակակից միտումները: Մինչև 2000-ական թվականները միգրացիան հիմնականում կարճաժամկետ էր, ընտանիքի մեկ կամ երկու անդամով՝ վերադառնալու ակնկալիքով: Ընտանիքի մայրը, որպես կանոն, արտերկիր չէր մեկնում, մնում էր տանը:

Ժամանակակից միգրացիան դառնում է երկարաժամկետ, ամբողջ ընտանիքով և անվերադարձ ակնկալիքով: Դրանք հիմնականում գնացած և վերադարձած միգրանտներն են, որոնց շուրջ 43%-ը նորից աշխատանք չի գտնում և ընտանիքի հետ անվերադարձ հեռանում է: Դա սոսկալի է, և շարունակվելու դեպքում կարող է հայաթափել Հայաստանը:

Մասնավորապես ակտիվացել է դեպի արտերկիր երիտասարդության միգրացիոն վարքագիծը: Պրոբլեմի հետազոտողները ուսումնասիրել են մարդկանց երկրից դուրս մղող գործոնները, արտերկրի գրավիչ գործոնները և վերջապես Հայաստանում մնալու և ապրելու գրավիչ գործոնները: Պարզվել է, որ մարդկանց երկրից դուրս մղող գործոններն են աղքատությունը, գործազրկությունը, ցածր աշխատավարձը, հարստության ու եկամուտների ահռելի բևեռացումը, համընդհանուր կոռուպցիան, օրենքով ապրելու վստահ համակարգի բացակայությունը, Ադրբեջանի բանակի հզորացումը, ապագայի նկատմամբ անվստահությունը:

Արտերկրի գրավիչ գործոններն են. աշխատատեղերի առկայությունը և բարձր աշխատավարձը, օրենքի գերակայությունը և սոցիալական

արդար մթնոլորտը, որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը, հզորացած սփյուռքը:

Հայաստանում մնալու և ապրելու ռեալ ու միակ գործոնը հայրենիքն է. Հայաստան աշխարհը, մեր մշակույթն ու պատմությունը, մեր նախնիների սուրբ գերեզմանները: Այդ գործոնները դժբախտաբար տարբեր պատճառներով շատ թուլացած են դրսևորվում և այսօր վճռող չեն:

Ժամանակակից միգրացիան շատացել է հատկապես սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերից: Դրանով մենք կորցնում ենք դարեր շարունակ մեր ժողովրդի գոյության հուսալի հենարանը՝ ավանդական գյուղը և ավանդական ընտանիքը:

Ժամանակակից միգրացիայի անցանկալի առանձնահատկություններից է նաև այն, որ հատկապես արտերկիր են ձգտում մեկնել բարձր որակավորման մասնագետները, գիտնականները՝ ակնկալելով այնտեղ ստանալ շատ բարձր աշխատավարձ: Կրթության մեծ ծախսերը կատարում է մեր պետությունը և ընտանիքը, իսկ դրանց բերած մեծ հատույցը ստանում է արտերկիրը:

Որո՞նք են արտագաղթը կանխելու ուղիները:

Հարկային և մաքսային բարեփոխումներով փոքր և միջին ձեռնարկատիրության համակողմանի զարգացումը:

Պետական օգնությամբ սահմանամերձ ու բարձրլեռնային բնակավայրերին հարկերից ազատելը, հայ գյուղի և նահապետական ընտանիքի ավանդույթների վերակենդանացումը:

Բարձր աշխատավարձի միջոցով «ուղեղների արտահոսքի» կանխումը:

Կոռուպցիայի հաղթահարման միջոցով-պետության հեղինակության բարձրացումը և նրա հումանիստական քաղաքականությունը:

Բանակի մարտունակության մշտական բարձրացումը համընդհանուր խնայողության և շռայլ ծախսերը կրճատելու միջոցով: Հզոր բանակը ապագայի նկատմամբ ժողովրդի վստահության հիմնական երաշխիքն է:

Բնակչության հարստության և եկամուտների ահռելի բևեռացման կրճատումը և արդարացի բաշխման հաստատումը:

Լրատվության բոլոր միջոցներով, մշակույթով և արվեստով, կրթական ողջ համակարգով Հայաստանը սիրելու արդյունավետ ու նպատակասլաց քարոզչության իրականացումը:

Արտագաղթի հաղթահարումը ողջ ժողովրդի, ՀՀ Ազգային ժողովի,

քաղաքական բոլոր կուսակցությունների, իշխանական բոլոր օղակների, հարգարժան վարչապետի սրբազան ու անհետաձգելի գործն է՝ Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահի անմիջական գլխավորությամբ:

Գ.Ա.Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր, Երևանի պետական
համալսարանի տնտեսագիտության
տեսության ամբիոնի
պատվավոր վարիչ

«Ազգ» օրաթերթ №194.
11.09.2013

ՍՅՈՒՆԻՔ - ՍՅՈՒՆԵՑԻՆԵՐ

ԻՄ ՍԻՍԻԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ամեն մի մարդու ծննդավայրը իր բնաշխարհով, մարդկանցով, ապրելակերպով ու կյանքի ընդհանուր մթնոլորտով նրա համար միշտ մնում է որպես հեքիաթ և անկրկնելի հրաշք: Այդպիսին է ինձ համար սիսիական աշխարհը, իսկ այնտեղ՝ Որոտանի լեռնանցքի եզրին, բուն Որոտանի ափին փռված իմ ծննդավայրը՝ Բորիսովկա գյուղը: Այդ փոքր գյուղը, որտեղ անցել են իմ մանկությունն ու ուսումնառության առաջին յոթ տարիները, իր մեջ խտացնում էր մարդկային լավագույն այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, համեստությունը, հյուրասիրությունը և անսահման բարությունը: Այն մի մեծ ընտանիք էր իր մարդկային մարդկանցով: Աշխատում, ուրախանում և տխրում էին միասին: Հիշում եմ, որ հարսանիքներին ամեն մեկն ուներ իր երգը, իր պարը: Ոչ ոք իրեն մենակ չէր զգում: Բոլորը միմյանց հոգեհարազատ էին ու նեցուկ: Աշխատանքը կատարյալ կենսական պահանջ էր: Այն ոչ միայն նրանց բարեկեցության հիմքն էր, այլ նաև պատանիների և երիտասարդների դաստիարակության հուսալի և արդյունավետ պայման: Մաճկալի մոտ աշխատած հոտաղը չէր կարող աշխատասեր, համբերատար, ամեն մի դժվարություն հաղթահարող, համեստ ու մարդկային չլիներ: Ահա մարդկային հարաբերությունների այդ հեքիաթային մթնոլորտը հատուկ է սիսիական աշխարհի բոլոր գյուղերին և իրեն՝ Սիսիան քաղաքին:

Երբ փորձում եմ գտնել իմ համեստ հաջողությունների աղբյուրը, հասնում եմ իմ պատանեկան տարիների միջավայրում ստացած դաստիարակությանը, այնտեղ ձևավորված հոգեբանությանը, որի համար միշտ երախտապարտ ու շնորհակալ եմ:

Ես սիրում եմ իր Սիսական աշխարհի անկրկնելի բնությունը, նրա զարդը կազմող Որոտանը: Հպարտանում եմ նրա համեստ, հողին ու հայրենիքին նվիրված մարդկանցով, հպարտանում եմ, որ սիսիանցին քաջությամբ պաշտպանել գիտի իր լեռնաշխարհը և համեստաբար ու խոնարհաբար կառուցում ու շենացնում է իր երկիրը: Ասում են, որ բարձրանալու համար պետք է աշխատել Սիսիանում, որովհետև Սիսիանը մասնագետի և ղեկավար աշխատողի երբեք չի կործանել, ընդհակառակը, բոլորին առաջ է մղել:

Իմ Սիսական աշխարհն այսօր մեծ վերելքի ճանապարհին է: Թող այդ ճանապարհը միշտ կանաչ լինի:

Գ. Ղարիբյան (Հ.Մ. Առաքելյան,
«Սիսական, տեղեկատու-ուղեցույց», 1987թ.)
«Որոտան»
06-06-2015 թ.
Թիվ.9(126)

ՍՅՈՒՆԻՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2012 թ. մայիսի 28-ին Սիսիանի Ազատամարտի պուրակում տեղի ունեցավ Քելբաջարի և Լաչինի ազատագրման մարտերում հերոսաբար զոհված հրամանատար Վուրգ Ոսկանյանի արձանի բացումը: Արձանի հեղինակ, անվանի քանդակագործ Գետիկ Բաղդասարյանը հերոսին կերտել է հայրենի աշխարհի բազալտից՝ 3,5 մետր բարձրությամբ, որպես խաչված անառիկ ժայռ, կրծքից գնդակով խոցված, բայց կանգուն…

Հերոսի արձանը, և ընդհանրապես, արարողությունը շատ հուզիչ և տպավորիչ էին: Մարզպետ Ս. Խաչատրյանը, քաղաքապետ Ա. Հակոբջանյանը, մարտական ընկերներն ու մերձավորները ընդգծեցին Վուրգի հերոսական կերպարը և նրա մեծ դերը Արցախի ազատագրման գոյամարտում: Արարողությանը ներկա մեծ բազմությունը հուզված, հպարտ լռությամբ, կարծես թե հոգով վանկարկում էր. «Մենք բոլորս Վուրգ ենք, մենք բոլորս զինվոր ենք»:

Պատմականորեն Սյունիքի ժողովուրդը միշտ հերոս զինվոր է եղել, միշտ հավաքական ֆիդայի է եղել, և դրանով էին պայմանավորված Սյունիքի առանձին թագավորությունը, Դավիթ-Բեկի իշխանությունը, 1920 թ. դեկտեմբերի 25-ին հռչակված «ինքնուրույն Սյունիքը» և 1921 թ. «Լեռնահայաստանի պետությունը»: Սյունիքը հերոսաբար մասնակցեց նաև Արցախի ազատագրմանը՝ զոհաբերելով 565 հերոսների:

Սյունիքի հերոսական նկարագիրն արժանի կերպով գնահատվել և արտացոլվել է Ռաֆֆու «Դավիթ-Բեկ» պատմավեպում, ինչպես նաև Տիգրանյանի համանուն օպերայում և Համո Բեկնազարյանի «Դավիթ-Բեկ» կինոնկարում: Մեր ժամանակներում, սակայն, անհասկանալի պատճառով այդ ամենը կարծես թե մոռացվել և ստվերում է մնացել: Թող անհատ ֆիդայիններին հաճախ հիշեն և մեծարեն, քանի որ նրանք դրան արժանի են, սակայն չպետք է մոռանալ Սյունիքի հերոս ժողովրդին: Հասարակական քաղաքական գործիչ, լուսահոգի **Ալեքսան Կիրակոսյանը** հեռուստատեսային իր վերջին ելույթներից մեկում նշեց, որ «Սյունիքը Հայաստանի կրծքավանդակն է», և հորդորեց իշխանություններին ու

հասարակությանը՝ մշտական ուշադրության կենտրոնում պահել նրա հերոսական ժողովրդին, նպաստել նրա հիմնախնդիրների լուծմանը:

Այժմ մի քանի նկատառում Սյունիքի ժամանակակից զարգացումների և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների մասին: Հանրապետության մարզերի հիմնախնդիրները գտնվում են տարածքային կառավարման զարգացման ծրագրերում (Սյունիքինը՝ 2009 թ. 782 ծրագիր): Հայաստանի Հանրապետության մարզերը, մասնավորապես Սյունիքը, ունեն երկրի ընդհանուր հիմնախնդիրների առանձնահատուկ դրսևորումներ՝ իրենց լուծման բարդություններով և պահանջներով: Ինչպես ողջ Հայաստանի, այնպես էլ Սյունիքի համար այսօրվա հիմնական գերխնդիրը արտագաղթի կանխումն է, հատկապես սահմանամերձ տարածքներից և գյուղերից: Ադրբեջանի հետ Սյունիքն ունի 382 կմ սահման, լեռնային 32 և բարձր լեռնային 12 գյուղական համայնքներ: Արտագաղթը ոչ միայն նվազագույնի է հասցնում առանց այն էլ մեր ունեցած սակավ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, քայքայում դարերից եկող հայապահպանման ավանդույթները, այլև թուլացնում է մեր պաշտպանվածությունը:

Սյունիքի բնակչությունը միատարր չէ: Կապանում և Մեղրիում գերակշռում է քաղաքային բնակչությունը (2008 թ.՝ 67,7 տոկոս), Գորիսում և Սիսիանում գյուղական և քաղաքային բնակչությունը բաշխվում է գրեթե հավասարաչափ (50,1 տոկոսի սահմաններում): Կապանը և մասամբ Մեղրին գերազանցապես արդյունաբերական զարգացումներ ունեն: Սյունիքի արդյունաբերությունը բնութագրվում է մետաղական օգտակար հանածոների մեծ պաշարներով: Սյունիքում են գտնվում Քաջարանի պղնձամոլիբդենային խոշորագույն հանքավայրը, նույն կազմավորման Ագարակի, Հանքասարի և Դաստակերտի բազմամետաղների տարբեր այլ հանքավայրեր: Ըստ երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր Հ. Ավագյանի գնահատումների Սյունիքի բոլոր հանքավայրերը շահագործվում են շատ ցածր արդյունավետությամբ, թողարկվում են պղնձի և մոլիբդենի խտանյութեր, որոնք իրացվում են արտասահմանում շատ ցածր գներով: Քաջարանի հանքավայրերում պղնձից ու մոլիբդենից բացի կան տասից ավելի օգտակար տարրեր, որոնց մի մասը բոլորովին չի կորզվում և կուտակվում է պոչամբարներում՝ թունավորելով շրջակա միջավայրը: Ըստ հավաստի աղբյուրների՝ հուսադրող է, որ նախատեսվում է առաջիկայում հայկական և ռուսական համատեղ ներդրումներով Սյունիքում կառուցել ժամանակակից, նորագույն տեխնոլոգիաներով արդյունաբերական մեծ համալիր, որը ոչ միայն նշ-

ված պոչամբարների արժեքավոր տարրերը կկորզի, այլև էապես կառողջացնի Սյունիքի էկոլոգիան: Մասնագետները գտնում են, որ Սյունիքի հանքավայրերի արդյունավետ օգտագործման ուղին ոչ թե խտանյութեր կորզելն ու վաճառելն է, այլ պատրաստի արտադրանք ստանալն ու վաճառելը, քանի որ խտանյութերից ստացված հասույթը կազմում է պատրաստի արտադրանքի վաճառքի հասույթի 25 տոկոսը միայն:

Ինչ վերաբերում է փոքր և միջին ձեռնարկատիրությանը, ինչպես ամբողջ ՀՀ-ում, այնպես էլ Սյունիքում զարգացում չստացավ: Ավելին, քանի որ Սյունիքը հեռու է սպառողական հիմնական շուկաներից, բացակայում է էժան տրանսպորտը՝ երկաթգիծը, մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման սահմանափակումները ավելի ընդգծված են դրսևորվում: Այսպես, 2008 թ. մարզի արդյունաբերության համախառն արտադրանքի կառուցվածքում նրա տեսակարար կշիռը ընդհամենը 6,3 տոկոս էր: Մինչև այսօր էլ այն մնում է շատ ցածր: Այստեղից էլ՝ զանգվածային գործազրկությունը, աղքատությունը և արտագաղթը:

Գյուղական համայնքների զգալի մասը գտնվում է սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային գոտիներում, իրացման շուկաներից հեռու: Այդ պատճառով էլ արդյունավետ գյուղատնտեսության մասին խոսք լինել չի կարող: Ավելին, ներկայումն Սյունիքի մարզում վարելահողերի շուրջ 37 տոկոսը չի մշակվում: Այն կազմում է մոտ 20 հազար հեկտար:

Այսօր գյուղատնտեսությունը, գյուղը կործանումից փրկելու գիտական միավորումների և կառավարության ուղիներն եմ համարում.

ա) կամավոր հիմունքներով գյուղացիական տնտեսությունների միավորման ճանապարհով գյուղացիական կոոպերատիվների ստեղծումը՝ պահպանելով իրենց մասնավոր սեփականության իրավունքը:

բ) արդյունավետ և մշտական պետական աջակցությունը (անվճար կամ արտոնյալ պայմաններում տեխնիկայի ապահովում, առաջնահերթ սուբսիդավորում, մատչելի վարկերի տրամադրում, բարձրորակ սերմերի մատակարարում, աջակցություն կոոպերատորներին արտադրանքի վերամշակման և իրացման հարցերում, ինչպես օրինակ՝ Ճամբ, Ծղուկ համայնքներում, Կապան, Գորիս քաղաքներում: Կարևոր է նաև տեղական, համայնքային նախաձեռնությունը և դրա խրախուսումը պետության կողմից:

Գյուղերում համապատասխան մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման պահանջներին պետական խրախուսումը և աջակցությունը պետք է դառնան գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման, աշխատատեղերի ավելացման և գյուղացիների կյանքի մակարդակի բարձ-

ռացման, աղքատության հաղթահարման և արտագաղթի կանխման գլխավոր քաղաքականությունը:

Գյուղական համայնքներում աղքատությունը հաղթահարելու և արտագաղթը կանխելու կարևոր ուղիներից են ճանապարհների կառուցումը և խմելու ջրի ապահովումը, ինչպես նաև դպրոցների, մանկապարտեզների, գրադարանների և մշակույթի վերականգնումը ու նոր օջախների ստեղծումը: Պետք է ամեն ինչ անել, որ Սյունիքի դպրոցը հզորանա ու դառնա դպրոցականների բուհական կրթություն ստանալու հիմնական երաշխիքը: Ուստի, մարզի ղեկավարությունը պետք է ամեն կերպ լուծի Սյունիքի ուժեղ դպրոցի կայացման խնդիրը:

Սյունիքի առաջիկա զարգացման, աղքատության հաղթահարման և արտագաղթի կանխման կարևոր ռեսուրս է զբոսաշրջության զարգացումը: Սյունիքի գեղատեսիլ և առողջարար բնությունը, պատմամշակութային արժեքները, Սիսիանի 5000-ամյա աստղադիտարանը, Տաթևի հիասքանչ համալիրը, Շաքիի շքեղ ջրվեժը, հին Խնձորեսկն ու Գորիսը՝ մարդկային իրենց նուրբ ու համով ավանդույթներով, սյունեցու լուռ, բայց առատ հյուրասիրությունը, Սիսիանի կաթնամթերքը, Քարահունջի անմահական թթի օղին, Մեղրու նուռն ու թուզը զբոսաշրջության զարգացման հնարավորություններն են: Սակայն դրան խանգարում են կենցաղային քաղաքակիրթ կառույցների և բարեկարգ ճանապարհների բացակայությունը: Դրանք լրացնելու համար մեծ գումարներ են պետք, որ մարզը, դժբախտաբար չունի: Այստեղ օգնության պետական ռեսուրսն է միայն ռեալ:

Աղքատությանը և արտագաղթին մեծ չափերով նպաստում է գործազրկությունը, որը մեծ է Հայաստանում: Ըստ սոցիոլոգիական վերջին (2012 թ.) ուսումնասիրությունների, երիտասարդության շուրջ 22 տոկոսը գործազուրկ է: Սյունիքում գործազրկությունը երկու անգամ բարձր է հանրապետության միջին մակարդակից, և փոքր է ապրանքաշրջանառության ու ապրանքների սպառումը: Մեկ շնչին ընկնող ապրանքաշրջանառությունը մոտ հինգ անգամ ցածր է միջին հանրապետական մակարդակից: Այդ ամենը աղքատություն և արտագաղթ ծնող գործոններ են:

Արտագաղթը, բացի սոցիալ-տնտեսական գործոններից, հետևանք է նաև բարոյահոգեբանական, կոռուպցիայի, սոցիալական անարդարությունների գործոնների: Երևանից ամենահեռավոր մարզում ապրելն ու աշխատելը առանց այն էլ կապված են լուրջ դժվարությունների հետ: Սյունեցին երբեք չպետք է իրեն երկրորդ կարգի հայ զգա: Այդ նպատակով Սյունիքը, նշանավոր սյունեցիները նույնպես, ուշադրության կենտ-

ռոնում պետք է լինեն կառավարության որոշումներում և մասնավորապես, լրատվական ու հեռուստատեսային հաղորդումներում: Օրինակ, այս տարի կյանքից հեռացավ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, մանրաքանդակի անզուգական վարպետ Էդուարդ Տեր-Ղազարյանը: Շուրջ երեք օր այդ մասին հեռուստատեսությամբ հաղորդումներ էին արվում, բայց ոչ մի անգամ չնշվեց նրա սյունեցի լինելը, չասվեց, որ նրա ծնողները թաղված են Սիսիանի Սուրբ Հովհաննեսի տաճարում: Կամ, մի քանի ամիս առաջ հեռուստատեսությամբ «Երևանի նշանավոր քանդակները» թեմայով հաղորդում տրվեց: Հաղորդման մեծ մասը նվիրված էր երևանցի Թոքմաջյանի քանդակների ցուցադրմանը (Կարաբալայից մինչև Մ. Սարյան): Դա լավ է, սակայն վատ է, որ ոչ մի ցուցադրում, ոչ մի խոսք չեղավ սյունեցի Ա. Հովսեփյանի կերտած Ա. Թամանյանի և Ա. Տիգրանյանի հրաշագործ արձանների մասին: Այդ տաղանդավոր քանդակագործը, ՀՀ ժողովրդական նկարիչը այսօր գտնվում է աններելի անուշադրության մեջ: Շատ հազվադեպ են նաև Ա. Սաթյանի հմայիչ երաժշտությունը ընդգրկող հաղորդումները:

2011 թ. դեկտեմբերի 2-ին Սիսիանի Համո Սահյանի անվան մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ գիտաժողով, նվիրված մեծ հայագետ ու բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի ծննդյան 140-ամյակին: Մասնակցում էին Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Է. Մինասյանը, պրոֆեսորներ Հ. Հովհաննիսյանը, Հ. Մարգարյանը, ադոնցագետ, դոցենտ Պ. Հովհաննիսյանը և տողերիս հեղինակը: Նշվեց, որ Ն. Ադոնցը հայոց պատմությունը հազար տարով մեծացրեց, հետ տարավ, որ նա այնպիսի դեր խաղաց պատմագիտության և հայագիտության մեջ, ինչպես Կոմիտասը՝ երաժշտության, Աճառյանը՝ լեզվաբանության, Թումանյանը՝ գրականության և Թամանյանը՝ ճարտարապետության մեջ: Ն. Ադոնցի կայացման գործում նշանակալի դեր են խաղացել երեք ստորագրություններ. Առաջինը Ա. Մանթաշյանինն էր, որի շնորհիվ երկար տարիներ Եվրպայում ուսումնառության թոշակ ստացավ, երկրորդը 1917 թ. ռուսաց կայսր Նիկոլայ 2-ի ստորագրություն էր, որով նա հաստատվեց որպես Սանկտ-Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, և երրորդը 1918 թ. Վ. Ի. Լենինի ստորագրությունն էր, որով շարունակեց մնալ պրոֆեսորի պաշտոնում: Արդյոք շա՞տ ունենք նման կենսագրությամբ մեծեր: Եվ այդ մեծ հայագետի 140-ամյակը նշվեց միայն Սիսիանում: Ավելին, ինչպես հասկանալ, որ Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մեծ արժեք ունեցող մենագրության լույս ընծայման 100-ամյակը 2008 թ. Սանկտ-Պետերբուրգի գիտա-

կան հանրությունը մեծ հանդիսավորությամբ նշեց, իսկ Հայաստանում՝ քար լռություն էր:

Շատ անելիքներ կան Սյունիքի առաջիկա զարգացումներում: Մարզի բոլոր տարածքներում ղեկավարումը տեսանելի և արդյունավետ դարձնելու համար գուցե արժե քննարկել մարզպետարանը Կապանից Գորիս տեղափոխելու հարցը: Պատահական չէր, որ ցարը ժամանակին հենց Գորիսն էր ընտրել որպես կենտրոն: Արժե մտածել «Սյունիք» հայրենակցական միության գործունեության արդյունավետության բարձրացման, Սյունիքում տուրիզմը զարգացնելու նպատակով Սպանդարյան մեծ ջրամբարի ափին, Ծղուկի տարածքում հանգստի գոտու ստեղծման մասին: Ժամանակակից ջրամբարի տեղը զբաղեցնող Բազարչայ և Բորիսովկա գյուղերը Երևանի, Գորիսի և Հայաստանի այլ բնակիչների համար հրաշալի ամառանոց էին:

1990-ական թվականներին, իր կյանքի վերջին տարիներին, հայ ժողովրդի, Հայաստանի և Սյունիքի հոգսերը շատ էին մտահոգում մեծ բանաստեղծ, Սյունիքի արժանավոր զավակ Համո Սահյանին: Նա հավատում էր հայ ժողովրդի դժվարությունները հաղթահարելու և ապրելու անտեսանելի կենսական մեծ ուժին: Հաճախ կրկնում էր. «Չպետք է հույսը կորցնել, հայը այդպիսի՞ վիճակներից է դուրս եկել»:

Հուսանք և հավատանք, որ Հայաստանի Հանրապետությունը, այդ թվում և Սյունիքը, առաջիկայում կհաղթահարի ստեղծված մեծ դժվարությունները և ուղիներ ու միջոցներ կգտնի վերացնելու աղքատությունը, կանխելու արտագաղթը և ապահովելու մեր ժողովրդի վերածնունդը:

Գ.Ա. Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ
ԵՊՀ տնտեսագիտության տեսության
ամբիոնի պատվավոր վարիչ,
պատվավոր սյունեցի

«Ազգ»
18/09/2012

ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ
(Ակադեմիկոս Ա.Ա. Արզումանյանի ծննդյան 70-ամյակը)

Լրացավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, քաղաքատնտեսության, համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների կառկառուն մասնագետ, համաշխարհային անուն ունեցող գիտնական, ակտիվ հասարակական գործիչ, մեծ հայրենասեր ու ինտերնացիոնալիստ Անուշավան Աղաֆոնի Արզումանյանի ծննդյան 70-տարին:

Ա. Արզումանյանը ծնվել է 1904 թ. Ղափան շրջանի Կավարտ գյուղում, հողագործի ընտանիքում: Ավարտելով Շուշի քաղաքի ռեալական դպրոցը, պատանի Արզումանյանը ներգրավվում է հեղափոխական շարժումների մեջ: Հեղափոխական պայքարի այդ բովում են հենց դրվում խոշորագույն գիտնականի և հասարակական գործչի ամենաառաջավոր աշխարհայացքի անսասան հիմքերը: Արդեն 1921թ. տասնյոթամյա պատանի Արզումանյանը առհավետ զինվորագրվեց կոմունիստական կուսակցությանը և դարձավ Հայաստանի լենինյան կոմերիտության հիմնադիրներից մեկը:

Ա. Արզումանյանի իմաստալից կյանքը և գործունեությունը բնութագրվում է բազմաբովանդակությամբ ու նպատակասլացությամբ: Հասարակական, քաղաքական ու կազմակերպչական ակտիվ գործունեությունը միշտ օրգանապես զուգակցվել է ուսումնառության, մանկավարժական և գիտահետազոտական աշխատանքների հետ: 1923-24 թթ. Ա. Արզումանյանը Թիֆլիսի Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի ունկնդիր էր, 1928 թ. Մոսկվայի Գ. Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտի ուսանող, իսկ 1933-36 թթ. նրան տեսնում ենք Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի ագրարային ինստիտուտում: Այդ բոլորը օրգանապես զուգակցվել է Սովետական Հայաստանում սոցիալիստական շինարարության գործում մասնակցության և կազմակերպման աշխատանքների հետ: 1926-1928 թթ. Ա. Արզումանյանը գլխավորել է ՀԼԿԵՄ մի շարք պատասխանատու պոստեր, ընդհուպ մինչև ՀԼԿԵՄ ԿԿ նախագահության անդամ և քարտուղարի տեղակալ: 1928 թ. նա ընտրվում է ՀԿ(բ) Կ Հոկտեմբերյանի (նախկին Ղուրդուղլու) շրջկոմի առաջին քարտուղար, նշանակվում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ագիտացիայի և մասսայական աշխատանքների բաժնի վարիչ, իսկ հետո ընտրվում ՀԿ (բ) Կ Երևանի Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար:

Մեզ համար առանձնապես թանկ ու հարազատ են Ա. Արզումանյանի գործունեության տարիները Երևանի պետական համալսարանում: Այսօր մենք կարող ենք հպարտանալ, որ 1937 թ. նշանակվել է ԵՊՀ ռեկտոր, սակայն մեկ ու կես ամիս հետո ազատվել է:

Ակադեմիկոս Ա. Արզումանյանի բազմաբովանդակ իմաստալից կյանքի անբաժանելի կողմերից ու մեծ արժեքներից է նրա անսահման հայրենասիրությունը: Դրա փայլուն արտահայտություններից է այն, որ Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերին կամավոր մեկնում է ռազմաճակատ և պատերազմելով, Կովկասյան լեռներից հասնում է մինչև Պրահա:

Նա որտեղ էլ որ գտնվել ու աշխատել է, միշտ հոգով ու գործերով կապված է եղել Սովետական Հայաստանի հետ, ուրախացել նրա հաջողություններով, մտահոգվել դժվարությունների համար և օգնել դրանց լուծմանը:

1946-1952 թթ. Ա. Արզումանյանը Բաքվում վարում է Ադրբեջանի պետական համալսարանի պրոռեկտորի պաշտոնը, իսկ 1952 թ. հրավիրվում է Մոսկվա և նշանակվում ՍՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի իմպերիալիզմի ընդհանուր պրոբլեմների սեկտորի վարիչ, իսկ հետո՝ նույն ինստիտուտի դիրեկտորի տեղակալ: 1956 թ. նրան հանձնարարվում է կազմակերպել ՍՍՀՄ ԳԱ համաշխարհային ինստիտուտ, որի անփոխարինելի դիրեկտորը մնաց մինչև իր կյանքի վերջը՝ 1965 թվականի հուլիսի 18-ը: Հատկապես այդ տարիներին են ամբողջ ուժով ու բազմակողմանի կերպով ծավալվել Ա. Արզումանյանի տաղանդը, աշխատասիրությունը, ընդունակությունները որպես տեսաբան-հետազոտողի, նոր սովետական դպրոցի գիտնականի, ում գիտական հետազոտությունները ենթարկվում են մեր երկրում կոմունիստական շինարարության ու միջազգային բանվորական շարժման առաջ ծառացած պրոբլեմների լուծման շահերին:

Ա. Արզումանյանի կողմից գրված 100-ից ավելի աշխատությունները արտացոլում են նրա գիտական հետաքրքրությունների չափազանց լայն ու բազմակողմանի շրջանակները, նրա գիտական անսահման էրուդիցիան: Դրանցից շուրջ 30 աշխատություններ տարբեր լեզուներով թարգմանվել և հրատակարվել են արտասահմանում, նրան բերելով համաշխարհային ճանաչում: Ակադեմիկոս Արզումանյանը գիտական խոշոր ներդրում ունի հատկապես իմպերիալիզմի, մոնոպոլիստական կապիտալիզմի, համաշխարհային կապիտալիստական սիստեմի ճգնա-

ժամի նոր երևույթների, ինչպես նաև պրոլետարիատի դրության վատթարացման նոր առանձնահատկությունների ու դրսևորման նոր ձևերի բացահայտման գործում: Ակադեմիկոս Արզումանյանը անմիջական մասնակցություն է ունեցել ՍՍԿԿ և եղբայրական մարքս-լենինյան կուսակցությունների մի շարք ծրագրային փաստաթղթերի մշակմանը: Այդ բոլորն իրենց արժեքավորումը գտան նրանում, որ 1958 թ. Ա. Արզումանյանը ընտրվեց ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1962 թ.՝ ակադեմիկոս, ՍՍՀՄ ԳԱ նախագահության անդամ և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Ակադեմիկոս Արզումանյանը ճանաչվում է նաև որպես հիանալի մանկավարժ դաստիարակ: Իր հմաստալից կյանքի ավելի քան 40 տարիները նա նվիրել է գիտամանկավարժական գործունեությանը, սերունդներին առատորեն հաղորդելով իր հարուստ գիտելիքները, համարձակ կերպով առաջ քաշելով ընդունակություններով օժտված երիտասարդ կադրերին: Իր մարդկային լավագույն գծերով, իր համեստությամբ եղել է իսկական մանկավարժի լավագույն տիպար: Խոշորագույն գիտնականի, լավագույն մանկավարժի և մեծ մարդու պայծառ հիշատակը միշտ կոգևորի մեր մտավորականությանը, երիտասարդ ուսանողությանը՝ նոր գիտական սխրանքների ու մարդկային լավագույն գծերի հասնելու ճանապարհին:

Գ. Ղարիբյան
Քաղաքապետության ամբիոնի
դոցենտ:

«Երևանի Համալսարան»
02-03-1974թ.
№7 (998)

ՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԳԵՏ ՄՈՒՇԵՂ ԱԴՈՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Ծննդյան 100 տարին խորհրդավոր տարեթիվ է նաև նրանով, որ այդ ժամանակը հեռվից մաքրում և ճիշտ է գնահատում մարդուն: Մ. Հ. Ադոնցին ճանաչում ենք անցյալ դարի կեսից, սկզբում որպես նրա ուսանող, ասպիրանտ, իսկ հետագայում՝ համատեղ աշխատանքից, Երևանի պետական համալսարանում և իր գլխավորած ՀԽՍՀ պետպլանի գիտահետազոտական ինստիտուտում: Նա մեծ գիտական- մանկավարժ, իմաստուն և ազնվական մարդ էր: Իմաստուն և ազնվական մեր բարդ կյանքի բոլոր հարաբերություններում՝ ընտանիքում, աշխատանքում, ընկերական, հասարակական-քաղաքական հարաբերություններում: Զուսպ էր, միշտ լուրջ, պահանջկոտ ու կարգապահ: Անսահման բարի էր և սխալները ներող: Ուշադիր ամուսին էր, ընտանիքին նվիրված հայր: Հատկապես առանձնահատուկ էր սիրում թոռանը՝ Ավետին: Համարյա անբաժան էր նրանից: Մուշեղ Համբարձումի Ադոնցը անդավաճան ու ջերմ ընկեր էր: Նախանձելի էր նրա մտերմությունը իր մանկության և աշխատանքային ընկերների՝ պրոֆեսորներ Ս. Բաղալյանի, Ե. Սարգսյանի, Հ. Քարամյանի, Ա. Հարությունյանի, Հ. Թումանյանի, Ս. Միքայելյանի հետ: Օժտված էր մեծ ընդունակություններով և աշխատասիրությամբ: Ուներ փայլուն հիշողություն:

Այդ բոլորը պատահական չէր, քանի որ նա սերում էր Սյունիքի Ադոնցների մեծ գերդաստանից, որի արմատները հասնում էին Սյունաց Օրբելյան իշխանական և Դավիթ Բեկի տոհմերի ակունքներին: Այդ մեծ գերդաստանի զարդը, անշուշտ, հայ ականավոր պատմաբան, բանասեր և բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցն էր (ծնված 1871թ. Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում):

Մուշեղ Համբարձումի Ադոնցը ծնվել է 1910 թ. մայիսի 16-ին Բաքվում: 1922 թ. Ադոնցների ընտանիքը վերադառնում է Սիսիանի շրջանի հայրենի Բռնակոթ գյուղը: Ստանալով մանկավարժական կրթություն, 1930 թ. աշխատել է որպես Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղի դպրոցի

տնօրեն, իսկ 1933 թվականից՝ տնտեսագիտության ոլորտում, սկզբում որպես ՀԽՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության արդյունաբերության բաժնի վարիչ, իսկ 1937-1954 թթ.՝ ՀԽՍՀ անտառաարդյունաբերության ժողկոմատում՝ պլանային-տնտեսագիտական վարչության պետ: 1948 թ. ավարտելով Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան, նույն թվականին պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն և անցնում է դասախոսական աշխատանքի՝ հիմնականում Երևանի պետական համալսարանում: 1958 թ. Մ. Ասոնցը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն և աշխատանքի անցնում, ՀԿԿ Կենտկոմի քարտուղարի պաշտոնում, մինչև 1961 թվականը: 1966 թ. մինչև 1988 թ.՝ ՀԽՍՀ Պետպլանի տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն:

Խորհրդային գիտությունն ուժեղ էր տնտեսամեթոդական հետազոտություններում և համեմատաբար թույլ՝ կիրառական ոլորտում: Դա վերաբերում է նաև տնտեսագիտությանը: Մ. Ադոնցը 1966 թ. դառնալով վերը նշված ինստիտուտի տնօրեն, խորացավ նաև կիրառական տնտեսագիտության հիմնախնդիրների հետազոտությունների և դրանց գործնական լուծումների մեջ: Կարճ ժամանակում նա կարողացավ նոր կազմակերպված ինստիտուտը համալրել կառավարության առաջադրած խնդիրներով: Ընդ որում, ինստիտուտի գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններն էին հանրապետության արտադրողական ուժերի զարգացումը և տեղաբաշխումը, միջճյուղային և միջշրջանային տնտեսական կապերը և հաշվեկշիռները, ժողովրդագրությունը, աշխատանքային ռեսուրսները, աշխատանքի արտադրողականությունը և գնագոյացումը, սպասարկման ոլորտը, կենսամակարդակը, բնակչության եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռը և այլն:

Ինստիտուտը 1967 թ. Ներկայացրեց «1970-1980 թթ. Հայաստանի Հանրապետության արտադրողական ուժերի զարգացման ու տեղաբաշխման ուրվագիծը», իսկ 1975 թ. ՝ «Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարները 1976-1990 թթ.» երկարաժամկետ հատվածում հետազոտությունների արդյունքները: Դրանք հաշվետվությունների ձևով քննարկվում և գնահատվում էին ՀԽՍՀ Պետպլանի կոլեգիայում: Այդ պատճառով բոլոր բաժինների հետազոտությունների արդյունքները մինչև պետպլան ներկայացնելը հանգամանորեն քննարկվում էին ինստիտոի տնօրինության նիստերում: Մինչև քննարկումները, բաժինների հաշվետվություններին հանգամանորեն ծանո-

թանում էր Մ. Ադոնցը, որպեսզի դիրեկցիայում քննարկումները ճնական բնույթ չկրեին: Այդ քննարկումներում բացահայտվում էին կատարված հաշվարկները և ստացված սոցիալ-տնտեսական ցուցանիշները խորությամբ զգալու և ճիշտ գնահատելու նրա բացառիկ ընդունակությունները: Ոչինչ նրա աչքից չէր վրիպում:

Մ. Ադոնցի գլխավորած ինստիտուտի հեղինակությունն այնքան մեծացավ, որ ունեցավ ասպիրանտուրա, իսկ 1976 թ.՝ նաև տնտեսագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդ, որի անփոփոխ նախագահն էր: Այդ խորհրդում տասնյակ երիտասարդ ասպիրանտներ և աշխատողներ պաշտպանեցին թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Դրանցից շատերի գիտական ղեկավարն էր Մ. Ադոնցը:

Մ. Ադոնցը հեղինակ է ավելի քան 100 գիտական հետազոտությունների, որոնցից առավել արժեքավոր են «Արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքը և նրա իջեցման ուղիները» (Եր., 1956 թ.), «Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը 19-րդ դարում» (Եր., 1957 թ.), «Սոցիալիստական հասարակարգի ազգային եկամուտը» (Եր., 1963 թ.), «Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտք 20-րդ դարի սկզբին» (Եր., 1968 թ.), «Միջտնտեսային կոոպերացիան և ագրոարդյունաբերական ինտեգրացիան» (Եր., 1978 թ.): Դրանց պետք է ավելացնել այն, որ ՀԽՀ Պետպլանի գիտահետազոտական ինստիտուտի վերը նշված կառավարությանը ներկայացված 1965 թ. և 1975 թ. հետազոտությունները կատարվել են իր ղեկավարությամբ:

Մ. Ադոնցի նշված և չնշված գիտական ուսումնասիրություններն արտացոլում են բազմապեկտ հետազոտողի ընդգրկուն հետաքրքրությունները: Նրա ուշադրության կենտրոնում էին ինչպես տնտեսագիտության տեսությունը և մեթոդաբանությունը, այնպես էլ 19-րդ և 20-րդ դարերի Հայաստանի տնտեսական զարգացման և հայ տնտեսագիտական մտքի հետազոտությունները: Առանձնապես մեծ է նրա վաստակը Հայաստանում կիրառական տնտեսագիտության կայացման և զարգացման գործում: 1966 թ. մինչև 1988 թ. ՀԽՍՀ-ի տնտեսական զարգացման բոլոր հիմնախնդիրների հետազոտությունը և համապատասխան տնտեսական քաղաքականության առաջարկությունները կատարվել են Մ. Ադոնցի անմիջական գիտական ղեկավարությամբ:

Այդ ամենը թույլ է տալիս արձանագրել, որ Մ. Ադոնց գիտնականը տնտեսագիտական բոլոր ուղղությունների համակարգված հետազոտու-

թյուններում մնում է եզակի:

Ղարաբաղյան շարժման զարգացումներում ինստիտուտը, նրա տնօրենի՝ Մ. Ադոնցի գլխավորությամբ, դրսևորեց ազգային պահանջատիրության սկզբունքային և հետևողական վարքագիծ: ՀՍԽՀ Պետպլանի գիտահետազոտական ինստիտուտն այդ պայքարի առաջին շարքերում էր:

Մ. Ադոնցը եղել է ՀՍԽՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով, մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Ինչպես յուրաքանչյուր մեծ անհատի, այնպես էլ Մ. Ադոնցի հանդեպ ևս եղան անարդարություններ: Սակայն ժողովուրդը բարձր գնահատեց նրան և ինստիտուտն ինքնաբուխ կոչվեց «Ադոնցի ինստիտուտ»:

Փա՛ռք Մուշեղ Համբարձումի Ադոնցին՝ նրա ծննդյան 100-ամյակին:

Թող լույս իջնի նրա շիրիմին:

Յու. Մ. Սուվարյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՊՏՀ ռեկտոր

Գ.Ա. Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
ԵՊՀ տնտեսագիտության
տեսության
ամբիոնի պատվավոր վարիչ

«ԱԶԳ »
15/05/2010թ.
№89 (4469)

ԻՆՉ ՈՐ ԳՐԵԼ Է՝ ԱՆԿԵՂԾ Է ԳՐԵԼ, ՍՐՏՈՎ Է ԳՐԵԼ

Համո Սահյանի մասին խոսքս գրականագետի խոսք չէ, այլ սովորական ընթերցողի, երկրպագուի, հայրենակցի խոսք:

Բանաստեղծի՝ 2005 թ. հրատարակված «Քարե պատարագ» հատընտիրի խմբագիր Հովհաննես Այվազյանին Համո Սահյանն ասել էր. «Որպես մարդ ես դժբախտ եմ, որպես բանաստեղծ՝ երջանիկ, որովհետև ինչ գրել եմ, հրատարակվել է»:

Վեց տարեկանից աշխատել է, տասից տասներեքը սովորել է գյուղի տարրական դպրոցում: Տասներեքում մեկնել է Բաքու՝ կրթությունը շարունակելու: Գյուղում ապրած մանկության տարիները եղել են նրա կյանքի ամենաերջանիկ ժամանակները և գեղեցիկ ու պատկերավոր արտացոլումն են գտել նրա պոեզիայում.

Բայց մտքիս մեջ ու երգիս մեջ,
Ախ, ես ուր էլ գնում,
Այն աշխարհից մի բեռ կանաչ
Մանկություն է մնում:

Մի քանի տարի հետո ստանում է առաջին դաժան հարվածը, գյուղում մահանում է մայրը՝ առանց որդուն տեսնելու:

Հեշտ չէր երկրորդ համաշխարհային պատերազմում նավաստի լինելը: Հենց նավի տաղտակամածի վրա գիշերը հերթապահելիս ծնվում է «Նաիրյան դալար բարդի» սքանչելի բանաստեղծությունը:

Համարձակվում եմ նշել, որ Համո Սահյանի անձնական դժբախտության պատճառներից էր, անշուշտ, կնոջից՝ իր երկու զավակների մայր, բանաստեղծուհի Մարիա Հակոբյանից բաժանվելը: 2004 թ., երբ լույս տեսավ բանաստեղծուհու «Մարինե վանքում» ժողովածուն, կինս՝ լուսահոգի Գայանեն, կարդալով, լացակումած ասաց. «Չեմ սիրում քո Համո Սահյանին, որ իրեն այդքան սիրող կնոջից բաժանվել և խոր վիշտ է պատճառել նրան»:

Իր երկար տարիներին Համո Սահյանին շարունակ հալածել են նախանձողները և հոծ միջակությունը:

Նախանձող մարդկանց ես չեմ հասկանում.
Շնչելս նրանց հանգիստ չի տալիս,
Իսկ երբ տեսնում են հանկարծ ժպտալիս,
Թնդում են. - Տեսեք՝ մեզ ծաղր է անում:
Հիվանդանում եմ, ցնդում են, պայթում,
-Սուտ է, ասում են, ձևեր է թափում:
Փորձում եմ մեռնել, մեռնում են խանդից
Եվ մռնչում են,-Մեռնողը չէ նա,
Դիտմամբ մեռնում է, որ անմահանա:

Ավ. Իսահակյանի անտիպ պատմվածքը հրատարակելու և ոչ հնազանդ ներքին խառնվածքի համար Համո Սահյանին ազատում են «Գրական թերթ»-ի խմբագրի պաշտոնից: ՀԿԿ կետկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանն ասում է. «Գնա, թող մի քիչ հանգիստ քնենք»: ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Է. Ջրբաշյանը հայտարարում է, թե «Համո Սահյանն այլևս նորություն չի բերում, անընդհատ կրկնում է ինքն իրեն»: Հենց դա էլ, ըստ երևույթին, փակեց ՀՀ ԳԱԱ անդամ ընտրվելու Համո Սահյանի ճանապարհը: Համո Սահյանին համարում էին միայն «Սյունիքի բանաստեղծ».

Քո լեռներում ի՞նչ ես գտել,
Որ դու նրանց գիրկը մտել,
Ամեն թուփ ու ճմբով տարված,
Խենթի նման սիրահարված,
Խոնարհվում ես ամեն քարին
Ու երգում ես ամբողջ տարին:
-Իմ լեռներում գտել եմ ես
Ակունքները համբուրելի,
Ամենաջինջ աղբյուրների,
Որ կարող են ճչալ, փրփրել,
Լվանալ ու պարզաջրել
Ապականված մի ողջ աշխարհ:

Իրականում Համո Սահյանը Սյունիքով բացահայտեց և սրբացրեց ողջ Հայաստանը՝ հայրենիքի հանդեպ իր մեծ սերը համեմատելով միայն մոր սիրո հետ:

Դու իմ միակն էիր, ինչպես Հայաստանս...

Լուսահոգի Վ. Աբաջանը ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում ելույթի ժամանակ ասաց. «Ես միշտ հաճույքով եմ ասմունքում Սահյանից: Ախր

Համոն շա՜տ հայ է»: Այո, Համոն շատ հայ էր, շատ հայաստանոտ էր: Ակսել Բակունցը և Համո Սահյանը դարձան Սյունիքի և Սյունիքի միջոցով ողջ Հայաստան աշխարհի խիղճը ու անմնացորդ սիրվեցին ոչ միայն սյունեցիների, այլև համայն հայության կողմից:

Համո Սահյանի պոեզիայի ուժը, ճշմարտացիությունը և համամարդկային լինելը նրանից է, որ ինչ որ գրել է, անկեղծ է գրել, սրտով է գրել:

Թող, որ աչքերիս լույսը խավարի,
Թե առանց սրտի մի բան եմ գրում…
Բայց դուք ինձ ներեք և եղեք բարի,-
Մեկ-մեկ էլ աչքով,
Մեկ-մեկ էլ աչքի համար եմ գրում:
Ինչպիսի անկեղծություն…

Ինչպես և Մարտիրոս Սարյանը, Համո Սահյանն էլ բնությունն աստվածացնում էր: Ըստ նրանց՝ իրական Աստվածը հենց ինքը՝ բնությունն է: Բանաստեղծը բնությանն է վերագրում աշխարհի կատարյալ երգի ստեղծման փառքը:

Ոչ մի բանաստեղծ և ոչ մի ազգի
Չի գրել կյանքում կատարյալ մի երգ,
Այդ ես եմ ասում, և ներող եղեք,
Եթե պատճառը իմ չարությունն է…
Կատարյալ երգը շշուկն է հասկի
Եվ սևահողի շնչառությունն է:

Բանաստեղծը, սակայն, մեծ վտանգ է տեսնում բնությունից մարդու օտարվելու մեջ:

Էլ երկնքոտ կատարներիդ
Ցորեն ցանող չկա
Ասող-խոսող արտույտներիդ
Ականջ արող չկա:
Հողին կանգնել հողոտ ձայնս.
Տես երկինք եմ հանում,
-Ով ժամանակ, ասա տեսնեմ,
Դու այդ ի՞նչ ես անում,
Հողածնին հողից կտրել,
Այդպես ու՞ր ես տանում…
Առեղծվածդ շատ է մթին,
Դեռ վերծանող չկա:

Միևնույն ժամանակ բանաստեղծը դատապարտում է աշխարհը՝ հանճարներ ծնելու, բայց մարդկանց բախտը ապաշնորհներին թողելու համար:

Ախ, իմ խոնարհ, խելոք,
Խելագար աշխարհ,
Միշտ երեխա, միշտ ծեր,
Միշտ հին ու նոր աշխարհ,
Հանճարներ ես ծնում
Եվ մնում ես էլի
Ապաշնորհների
Մենաշնորհ, աշխարհ:

Համո Սահյանը Ղարաբաղյան ազնիվ շարժման ջատագովն էր: Շատ մեծ ցավ էր ապրում ազգի զոհված զավակների համար: «Ազգի արյան գենը գնաց»,- ասում էր նա: Այդ ամենի հետ, խորը հիասթափություն ապրեց բախտախնդիր, ընչաքաղց իշխանավորներից: Միևնույն ժամանակ անգամ այդ մղձավանջային տարիներին նա չի դադարում ապագայի նկատմամբ լավատես լինելուց:

Սպառնալիքները կհեգնենք թուրքի,
Մեր երթն անվթար գարուն կհանենք,
Եվ մեր երթի դեմ կչքվի ինքը,
Այս ցրտի, սովի, թուրքի դաշինքը:

Հայաստանի ապագայի նկատմամբ անխորտակ հավատով լցված օրինակ է իր մեծ բարեկամ Ալեքսան Կիրակոսյանի ձոնած բանաստեղծությունը:

Արևդ հայերեն է ծագում,
Ծառերդ հայերեն են ծաղկում,
Հայերեն են պայթում բառերդ...
Թող Աստված եղածը պահի
Եվ հետո էլ ինչ պատահի...
Հայերեն են գալու դարերդ:

Ես ինձ թույլ չեմ տա գնահատել Համո Սահյանի պոեզիան: Այն շատ գրականագետների կողմից գնահատվել է: Ես գերադասում եմ բերել երջանկահիշատակ հասարակական, քաղաքական գործիչ, մեծ գրականությամբ ապրած Ալեքսան Կիրակոսյանի և հայ գրականության մեծ գիտակ, ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի կարծիքները:

Համո Սահյանի պոեզիայի վերաբերյալ Ա. Կիրակոսյանը գրել է. «**Հա-**

մոյի պոեզիան տիեզերական վիթխարի տարերք ունի: Չունի մի տող, որ անկեղծորեն գրած չլինի: Համոն մեր ժողովրդի ազգային կյանքի հանրագիտարանն է: Համոն վիթխարի անհատականություն է և անսպառ գանձ: Իմաստության հեղեղ է, ապշելու բան է»:

Ակադեմիկոս Հ. Թամրազյանը Համո Սահյանի ծննդյան 70-ամյակի առիթով գրել է. «**Բանաստեղծը գալիքի մարդկանց է հանձնում ժողովրդի և հոգու պատկերը, մաքառումների, տոգորումների ու տագնապների մթնոլորտում ծնված երազները, անքուն, անհանգիստ կարոտների մշուշում ձև առած չքնաղ հեքիաթները և խորհրդավոր տեսիլքներ՝ ապրած կյանքի և գալիք ուղիների մասին**»:

Գ. Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
պրոֆեսոր, ՀՀ գիտության
վաստակավոր գործիչ

«Սյունաց երկիր»
08/04/2014թ
№6 (314)

ԱՄԵՆ ԳՈՒՅՆԸ՝ ՄԻ ԶԻՆՎՈՐ

ՀՀ ժողովրդական նկարիչ Զ. Խաչատրյան

Հայրենական մեծ պատերազմում չորս տարի կռվելուց և ծանր վերքերը բուժելուց հետո ընկերս՝ Զաքար Խաչատրյանը, վերադարձավ և ուսումնառության անցավ սկզբում Գորիսի մանկավարժական տեխնիկումում, ապա՝ Երևանի երաժշտական ուսումնարանում: 1947 թ. հանրակացարանում մնալու հնարավորություն չունենալով՝ որոշեց վերադառնալ Սիսիան: Խորհուրդ տվեցի նրան տեղափոխվել Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարան (որտեղ ես սովորում էի), քանի որ այն ուներ անվճար հանրակացարան: Հետագայում, իր կենսագրականում Զաքար Խաչատրյանը պետք է գրեր. «Ստացվեց այնպես, որ կամա թե ակամա նկարչի իմ մասնագիտությունն ընտրեց ընկերս՝ Գրիգոր Ղարիբյանը: Եթե նրան չհանդիպեի, ինչ կկատարվեր ինձ հետ, միայն Աստված գիտի»:

Բարձր առաջադիմությամբ սովորելով Փ. Թերլեմեզյանի նկարչական ուսումնարանում և Երևանի գեղարվեստի ինստիտուտում՝ Զ. Խաչատրյանը բարձրագույն նկարչական կրթությունն ավարտեց Լենինգրադի Ի. Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտում, արժանանալով ռեպինյան և ստալինյան կրթաթոշակների: Հետագայում, այդ նույն ինստիտուտում ուսանելու տարավ իր եղբորը՝ ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արտաշես Հովսեփյանին և իր սանին՝ ՀՀ ժողովրդական նկարիչ, Հայաստանի Ազգային պատկերասրահի տնօրեն, պրոֆեսոր՝ Փարավոն Միրզոյանին:

Ստանալով հիմնարար կրթություն Ռեպինի անվան գեղարվեստի ինստիտուտում այնպիսի մեծահամբավ նկարչի ղեկավարությամբ, ինչպիսին ԽՍՀՄ գեղարվեստների ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Բ. Յոհանսոնն էր, Զ. Խաչատրյանը փայլուն ավարտեց ակադեմիան, և պետական քննական հանձնաժողովի նախագահ, ԽՍՀՄ գեղարվեստների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ա.Գերասիմովը հենց նրան ընտրեց իր արվեստանոցում ևս չորս տարի կատարելագործվելու: Այսպես կերտվեց ռեալիստ նկարիչը: Սակայն, Զ. Խաչատրյանը անհաղորդ չմնաց աշխարհում, մասնավորապես Ֆրանսիայում, գեղանկարչության առաջավոր զարգացումներին: Խոսքն, անշուշտ վերաբե-

րում է իմպրեսիոնիստական ուղղությանը, որում գույների ճիշտ և հմուտ համադրությամբ հնարավոր է դառնում աշխարհն ավելի խոր ընկալել՝ հասնելով անհրաժեշտ տարածության, օդի թափանցիկության, մարդու տրամադրությունների նուրբ արտահայտման գեղարվեստական առավել գեղեցիկ ընդհանրացումների:

Զ. Խաչատրյանի ոգեշնչման և ստեղծագործության նյութը բնությունը և մարդկային կյանքն են՝ իրենց հաճելի ու դաժան դրսևորումներով: Լինելով Հայրենական մեծ պատերազմի չորս տարիների մասնակիցը և հազարավոր զինվորների մահվան ականատեսը, նկարիչը չէր կարող անտարբեր մնալ պատերազմի մեծ զոհաբերությունների և աշխարհի մայրերի վիշտը արտացոլող հուզիչ թեմաների հանդեպ: Դրա վկայությունն է 2010 թ. «Նվիրվում է զինվորների մայրերին» կտավը, որի վրա միայն ծաղիկներ են՝ նվիրված պատերազմում ընկած զինվորների հիշատակին և ծանր վիշտը մորմոքող նրանց մայրերին: Այն, մի կողմից արտացոլում է հայրենիքին իրենց կյանքը զոհաբերած զինվորների հանդեպ մեծ հարգանքն ու ցավը, մյուս կողմից՝ նրանց տանջահար մայրերին հատուցվող սփոփանքը:

Գեղանկարչության դասական ռեալիստական և իմպրեսիոնիստական սկզբունքների հմուտ ներդաշնակությունը հատկապես նկատելի է Զ. Խաչատրյանի «Երևան» մեծածավալ կտավում, որը նկարել է «Երիտասարդական պալատից» մայրամուտին, Արարատի ֆոնի վրա: Ի տարբերություն շատ նկարիչների, որոնք Արարատը, հատկապես նրա ձյունածածկ գագաթները ընդգծում ու «գեղեցկացնում են», Զ. Խաչատրյանի Արարատը Երևանից շատ հեռու է, հազիվ նշմարելի, ամպերի հետ խառնված: Հենց դա է նկարչի վարպետությունը: Պատահական չէ, որ այդ հրաշալի, հին, թամանյանական շունչը կրող Երևանի պատկերը գտնվում է մշակույթի նախարարի աշխատասենյակում: Շատ տպավորիչ են ցուցահանդեսում ներկայացված «Հավերը» և «Քոչը» կտավները: Ասում են Միքելանջելոն, երբ ավարտել է իր «Դավիթը», մուրճով հարվածել է ծնկին և ասել. «Դե, խոսի՛ր»: Զ. Խաչատրյանի «Հավերը» և «Քոչը»» ստեղծագործություններին նայելիս նույն՝ իրական զգացումներն ես ապրում:

Նկարչի առաքելությունն այն է, որ բնության ստեղծած գեղեցկությունը, հրաշքը դիտողին ներկայացնի առավել ընդգծված ու պատկերավոր: Աշխարհահռչակ Այվազովսկին ունի «Արևածագը Սև ծովի վրա» հայտնի կտավը, որը գտնվում է Թեոդոսիայում իր տուն-թանգարանում: Ակա-

նատեսները պնդում են, որ նկարի արևածագն ավելի շռայլ ու գեղեցիկ է, քան նույն տեղից՝ ծովի բնական արևածագը: Հենց այդպիսին է Զ. Խաչատրյանի «Սիսիանի եկեղեցին մայրամուտին» կտավը: Արևի վերջին ճառագայթների աստվածային գեղեցկությունն ու նուրբ լուսավորությունը հեքիաթային է դարձրել բնությունը, երկինքը, և հատկապես խոտը՝ բազմաբույր ծաղիկներով: Այդ ամենի արդյունքում ավելի խորհրդավոր է դարձել Սիսիանի առանց այն էլ հրաշք Ս. Հովհաննես եկեղեցին: Երևի նշված նկարի տպավորության ազդեցությամբ է ոգեշնչվել Համո Սահյանը և գրել ծաղիկների մասին իր սքանչելի տողերը.

Երբ դաշտ եմ մտնում, ուշքս ու միտքս
Ինձնից խլում են ծաղիկները…
Եվ թվում է, թե ինձ հետ ժպտում,
Ինձ հետ տխրում են ծաղիկները:
Չի պատասխանում հողն ինձ անգամ.
-Ի՞նչ երազներ են տեսնում տեսնես,
Երբ որ քնում են ծաղիկները:

Վերջին շրջանի գործերից ցնցող տպավորություն է թողնում «Տիրամայր» կտավը: Միայն զարմանալ կարելի է, թե օրերս ՀՀ Նախագահի հրամանագրով ՀՀ ժողովրդական նկարչի պատվավոր կոչմանն արժանացած արվեստագետին այդ տարիքում որտեղից այդքան ուժ, աշխատասիրություն ու եռանդ, երևակայություն, համբերություն և վարպետություն այդ հրաշքը ստեղծելու համար:

Գ. Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պրոֆեսոր, ՀՀ գիտության
վաստակավոր գործիչ

«Հայաստանի Հանրապետություն »
13.10.2012 թ.

ՆՈՐՕՐՅԱ ՈՍԿԵՁԵՌԻԿԸ

Ճարտարապետ Բաղդասար Արզումանյան

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հրամանով և մեկնաբանությամբ լույս է տեսնում «Նորօրյա ոսկեձեռիկը. ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի կյանքն ու ստեղծագործական վաստակը» գիրքը, որը հեղինակի՝ ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանի խոսքերով՝ նպատակ ունի պատշաճ գնահատականի արժանացնել իր սաներից ավագի հարուստ վաստակը, գալիք սերունդներին հանձնել նրա անունն ու գործերը:

Բաղդասար Արզումանյանի ուսումնառության տարիները և հետագա աշխատանքային գործունեությունն անցել են իր ուսուցիչ՝ Վարազդատ Հարությունյանի աչքի առջև: Դրա շնորհիվ գիրքը շարադրված է նյութի խոր իմացությամբ, ճարտարապետի տարաբնույթ գործերի ընդգրկումով և դրանց օբյեկտիվ գնահատականներով:

Արտակարգ բազմաժանր է Բաղդասար Արզումանյանի ստեղծագործական ժառանգությունը: Նա նախագծել և կառուցել է բնակելի, հասարակական և արտադրական շենքեր, ճարտարապետական փոքր ձևեր, եկեղեցիներ: Ճարտարապետի իր աշխատանքը նա հաջողությամբ զուգակցել է կիրառական արվեստի նշանակալից ու բարձրաճաշակ գործեր ստեղծելով, գրքային գրաֆիկայի, ծաղրանկարչության, պատմամշակութային հուշարձաններ չափագրելու, հայկական ճարտարապետությանը նվիրված գիրք գրելու հետ:

Որպես նախագծող նա համագործակցել է հայ ճարտարապետների ավագ սերնդի նշանավոր ներկայացուցիչ Հովհաննես Մարգարյանի հետ: Նրանց համատեղ աշխատանքի արդյունքն է Վանաձորի հասարակական կենտրոնի անսամբլը, որը Վարազդատ Հայրությունյանի բնորոշմամբ, իր գեղարվեստական բարձր արժանիքների շնորհիվ Հայաստանում երկրորդն է՝ Երևանի Հանրապետության հրապարակից հետո: Հ. Մարգարյանի և Բ. Արզումանյանի ինքնատիպ գործն է Երևանի ճոպանուղու ստորին կայանը Գետառի ափին, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի համալիրը (Շ. Ազատյանի մասնակցությամբ): Իսկ Երևանի կոնյակի գործարանի

շենքի հեղինակ Հ. Մարգարյանի մահվանից հետո Բ. Արզումանյանին է հանձնարարվել նոր արտադրամասի և համտեսի սրահի նախագիծը (Ս. Ներսեսյանի և Հ. Ալեքսանյանի մասնակցությամբ): Համտեսի սրահի ճարտարապետական-գեղարվեստական բարձր արժեքների համար հեղինակներն արժանացան ՍՍՀՄ գեղարվեստական ակադեմիայի ոսկե մեդալին:

Երևանի հիմնադրման 2750-ամյակի առթիվ 1968 թ. Էրեբունի ամրոցի ստորոտում Բ. Արզումանյանը՝ Շ. Ազատյանի և քանդակագործ Ա. Հարությունյանի հետ ստեղծում են թանգարանային շենքի գեղագիտական առումով այնքան հաջողված օրինակ, որ Ուզբեկստանից այս հեղինակներին են պատվիրում Սամարղանդ քաղաքի հոբելյանի առթիվ կառուցվելիք թանգարանի նախագծումը: Հիշարժան է Երևանի մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանի Բ. Արզումանյանի նախագիծը (Ս. Ներսիսյանի և Ա. Իսրաելյանի հետ համատեղ), որի հարդարանքում իրականացվել են «Սասունցի Դավիթ» էպոսի թեմաներով ինքնատիպ բարձրաքանդակներ (հեղինակ՝ Ա. Հովսեփյան):

Սակայն իր ամենաբեղմնավոր ստեղծագործական տարիները Բ. Արզումանյանը նվիրել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ դառնալով, փաստորեն, Մայրավանքի ճարտարապետը, գրեթե բոլոր նոր կառույցների հեղինակը: Նրա նախագծերով հայկական ազգային ճարտարապետության սկզբունքներով ու մոտիվներով, ներդաշնակ Մայր Աթոռի հինավուրց համալիրի արդեն ձևավորված անսամբլին, կառուցվեցին Վանատունը և Ալեք ու Մարի Մանուկյան գանձատունը՝ շենքեր, որոնք միաժամանակ և՛ ազգային կերպար ունեն, և՛ արդիական բովանդակություն:

Ճարտարապետական փոքր ձևերից աչքի են ընկում Մայր Աթոռի և Արարատյան թեմի առաջնորդարանի տարածքում կանգնեցված, Բ. Արզումանյանի կերտած խաչքարերը, Հայրենիք-Սփյուռք հուշակոթողը, աղբյուր հուշարձանները, որոնք նոր խոսք էին հայկական քանդակագործական արվեստի ավանդական ձևերի բազմադարյան պատմության մեջ:

Ճարտարապետն իրեն դրսևորեց որպես հմուտ ստեղծագործող նաև ոսկերչության բնագավառում: Նրա էսքիզներով (որոնք իրականացրեց Ժիրայր Զուլոյանը) ստեղծվեցին այնպիսի գործեր, որոնք, ինչպես գրում է Վարազդատ Հարությունյանը «թանկարժեք մետաղի մշակման արվեստի կատարելագործություններ և անցյալի մեծատաղանդ հայ ոսկերիչների ստեղծագործությունների ժառանգական շարունակությունն են»: Դրանք են ոսկեկուռ և աղամանդապատ մեսրոպյան այբուբենը և ոսկե-

ձույլ խաչը, որոնք դարձան ժամանակակից հայ կիրառական արվեստի անկրկնելի գործեր: Բ. Արզումանյանը կերտեց նաև կաթողիկոսական գավազանը, ոսկյա սկիհ, հեղինակեց Մայր Աթոռի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», «Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ» և «Ներսես Շնորհալի» շքանշանները, նախագծեց Էջմիածնի Մայր տաճարի Ավագ խորանի վարագույրը, կաթողիկոս Վազգեն Ա-ի պատարագային զգեստը, ձևավորեց «Էջմիածին» ամսագրի շապիկները, իր հեղինակած «Հայկական եկեղեցիները» պատկերագիրքը և այլ գործեր:

Բաղդասար Արզումանյանի տաղանդն առավելագույնս դրսևորվեց եկեղեցական ճարտարապետության բնագավառում: Հայաստանում անկախության տարիներին տեղի ունեցավ եկեղեցաշինության բուռն գործընթաց, որը սկսեց Վազգեն Ա-ի գահակալության տարիներին և շարունակվեց Գարեգին Ա և Գարեգին Բ կաթողիկոսների օրոք: Եվ այս գործում մեծ ավանդ ունեցավ Բաղդասար Արզումանյանը, ով նախագծեց և կառուցեց Հայաստանում և նրա սահմաններից դուրս շուրջ տասը եկեղեցի: Դրանց թվում են Օդեսայի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Սևանի Վազգենյան դպրատան, Երևանում Նոր Նորքի Ս. Սարգիս, Ներքին Դվինի Ս. Հարություն, Սպիտակի Ս. Հարություն, Քաշաթաղի Սրբոց Նահատակած, Գյումրիի Ս. Հակոբ Մծբնեցու, Երևանի Ս. Երրորդություն եկեղեցիները և ուրիշները: Ինչպես բնորոշում է Վարազդատ Հարությունյանը. «Նրա նախագծած եկեղեցիները սերում են միջնադարյան հայկական եկեղեցիների հորինվածքներից, սակայն չեն կրկնում դրանց և հանդես են գալիս հատակագծային և ծավալատարածական նորություններով, փառահեղ են և, իհարկե, հարազատ մեր ազգային ճարտարապետության ավանդույթներին»:

Եվ միանգամայն արդարացի կարելի է ասել, որ Բաղդասար Արզումանյանն իր բազմաժանր և բարձրարվեստ ստեղծագործություններով նմանվում է իր հռչակավոր համաերկրացուն՝ Սյունաց աշխարհի մեծատաղանդ քանդակագործ, ճարտարապետ ու նկարիչ Մոմիկին՝ նրա պես մնայուն գործեր թողնելով հայ մշակույթի անդաստանում:

Գրիգոր Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Մուրադ Հասրաթյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

«Հայաստանի Հանրապետություն »
2007, ապրիլի 19-ը

ՄԵԾԱՐԵՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ

Ես մի քանի ցանկություն եմ ուզում հայտնել: Պետրոս Հովհաննիսյանը երկու ամիս առաջ հեռուստատեսությամբ բնութագրեց Նիկողայոս Ադոնցին մի քանի բառով: Առաջին բնութագրումն այն էր, որ Ադոնցը հայոց պատմությունը հազար տարի հետ տարավ, երկրորդն այն, որ նա այնպիսի դեր խաղաց պատմագրության մեջ, ինչպես Թումանյանը՝ գրականության, Թամանյանը՝ ճարտարապետության, Աճառյանը՝ լեզվաբանության, Աբեղյանը՝ գրականագիտության, Վիկտոր Համբարձումյանը՝ աստղագիտության մեջ: Այդ բնորոշումներով նա ընդգծեց գիտության այդ հսկայի տեղը պատմագիտության, հայագիտության, բյուզանդագիտության մեջ: Ըստ երևույթին 40 տարեկան հասակում Ադոնցն արդեն գիտնական էր, բայց պահանջվեց ևս հարյուր տարի, որպեսզի ճշտվի նրա տեղը գիտության մեջ, ներկայացվի ըստ պատշաճի: Իհարկե, դրանում մեղավորը ժամանակն էր, բայց ուզում եմ նաև մեր մեղքը չքողարկել: Մենք՝ սյունեցիներս, շատ համեստ ենք, ինչը, անշուշտ, լավ հատկանիշ է: Բայց ամեն մի համեստություն, որ չափից անցնում է, բացասական երանգ է ձեռք բերում: Մենք Սյունիքի աշխարհահռչակ զավակին թողեցինք, որ դառնա 140 տարեկան ու նոր միայն մեծարենք:

Ես մեծ ուրախությամբ մասնակից եղա այս գիտաժողովին: Բոլոր ելույթ ունեցողները և «Սյունաց երկիր» թերթի խմբագիր՝ պարոն Ալեքսանյանը շատ բանիմացությամբ, խորությամբ ներկայացրեցին Նիկողայոս Ադոնցի ով լինելը, ինչը շատ գովելի է: Մենք չունենք մեծահարուստ օլիգարխներ, կուզենայի, որ շատ ունենանք: Բարեբախտաբար, ունենք հսկա պատմական ժառանգություն՝ աստղադիտարանը Սիսիանում, միջնադարյան համալսարանը Տաթևում: Մենք ունենք Ակսել Բակունց, Նիկողայոս Ադոնց, Համո Սահյան, Արտաշես Հովսեփյան և հարյուրավոր գիտնականներ ու տասնյակ ակադեմիկոսներ: Մեր խնդիրն է՝ նրանց չթողնել ստվերում, մեր խնդիրն է այսօրվա պես մեծարել նրանցից յուրաքանչյուրին:

Գ. Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

«Սյունաց աշխարհ»
14.12.2011 թ.
№21(240)

ԸՆԹԵՐՑԵԼՈՎ ԱՅՍ ԳԻՐՔԸ....
(խմբագրի վերջաբանը)

Գրքում ութսունհինգամյա մի մտավորականի վավերական կենսագրությունն է, Երևանի պետական համալսարանում վաթսունամյա գործունեությունը, որ անմիջաբար առնչվում է հայ իրականության՝ խորհրդային վերջին մի քանի տասնամյակների ու անկախության շրջանի անցուդարձերի հետ: Լավ է, որ այս կամ այն իրադարձությանը հոբելյարի՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, համալսարանի երկարամյա դասախոս, կուսակցական կոմիտեի քարտուղար, պրոռեկտոր, տնտեսագիտության ամբիոնի վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Գրիգոր Ղարիբյանի մասնակցությունը, նրա իրոք գնահատելի գործունեությունն իրարից անկախ հավաստում են ականատես տարբեր ժամանակակիցներ ու գործընկերներ, վաստակաշատ ու անվանի մարդիկ:

Ուրեմն՝ ոչինչ հորինված չէ այստեղ, ոչինչ չի հակասում կենսական ճշմարտությանը:

Գրքի տարբեր բաժիններում ընդգրկված նյութերը տարաբնույթ են՝ սկսած Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Առաջինի օրհնությունից մինչև ակադ. Գր. Ղարիբյանի ինքնակենսագրությունը, նրա մասին ականավոր գիտնականների ու արվեստի գործիչների, ավագ ու կտսեր գործընկերների, մտերիմների բնութագրական խոսքերը, նրա սաների՝ իրենց ուսուցչի գիտամանկավարժական գործունեության արժևորումները, իր՝ Գր. Ղարիբյանի բնորոշումները իր ուսուցիչներին ու բարերարներին, մեծավաստակ ու անվանի գիտնականներին: Սյունեցի լինելով՝ նա սերտորեն կապված է նրա հող ու ջրին, անկրկնելի բնությանն ու մարդկանց, մանավանդ հայրենակից նշանավոր գիտնականներին:

Ինքս Գր. Ղարիբյանին անձամբ ճանաչել եմ ուսանողական տարիներից՝ 1964-65 թվականներից, երբ նա Տնտեսագիտության ֆակուլտետի քաղաքատնտեսության ամբիոնի եռանդուն ու մեծ ապագա խոստացող երիտասարդ դասախոս էր՝ այն ժամանակվա ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Կ. Կարագյանի և ուրիշ գործընկերների կանխատեսումներով ու հավաստումներով:

Թեև նա ժամանակին քաղաքատնտեսություն էր դասավանդում նաև Հայ բանասիրության ֆակուլտետում ու ինձ անձամբ դաս չի տվել, բայց ուսանողները դասախոսների մասին սովորաբար ամեն ինչ են իմանում

ի լրո: Գիտեինք, օրինակ, որ կյանքը այնքան էլ բարեհաճ չի եղել գեղանկարչական լուրջ հակումներ ունեցող պատանու հանդեպ, և նա Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի տեխնիկումից հետո է եկել ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, դժվարություններն ու խոչընդոտները աշխատասիրությամբ, սեփական ուժերով հաղթահարած անհատականություն է, գիտամանկավարժական ոլորտի մեծ նվիրյալ, որ ասելիք ու անելիք ունի:

Տարիների ընթացքում հաստատվեցին բոլոր կանխատեսումները:

Գր. Ղարիբյանը, իր գիտահետազոտական նվաճումները հաջողությամբ զուգակցելով մանկավարժական գործունեությանը, դարձավ բուհական ուսումնական գործընթացի եռանդուն ու երևելի կազմակերպիչներից մեկը, ԵՊՀ կուսկոմիտեի քարտուղար, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ընտրվեց Հայաստանի ԳԱ թղթակից անդամ:

Գործունեության ողջ ընթացքում նա պահեց սերտ կապը ուսանող երիտասարդության, հանրապետության գիտական մտավորականության, մշակույթի անվանի գործիչների հետ ու երբեք չմոռացավ իր ուսուցիչներին և այն բարի մարդկանց, ովքեր կողմնորոշիչ ու սատար եղան իր դժվարին վերելքի ճանապարհին: Սերն ու հարգանքը փոխադարձ էր, որովհետև նա գործում էր արդար ողջամտությամբ և խորհրդային գաղափարախոսության պայմաններում էլ միշտ բարձր պահեց հայ մարդու և մտավորականի ազգային նկարագիրը, ինքն էլ վճռական դրական դեր խաղաց շատերիս ճակատագրում:

Լինելով ուսումնական և գիտական ոլորտների հմուտ ղեկավար՝ նա ոչ միայն մասնագիտական նախանձախնդրությամբ մաքառել է համալսարանական կրթության ու գիտության որակի բարձրացման համար, այլև համալսարանի պրոռեկտորի թե կուսակցական կոմիտեի քարտուղարի պաշտոններում ամենաբարդ ու կնճռոտ խնդիրներին էլ կարողացել է տալ ողջամիտ ու արդարացի լուծում, որովհետև խոր կենսաճանաչողությամբ պաշտոնեականին միշտ համադրում էր մարդկայինն ու ազգայինը: Դա առանձնապես երևաց արցախյան շարժման ու համաժողովրդական պայքարի՝ և մեզ պարտադրված պատերազմի օրերին: Երևանի պետական համալսարանը ոչ միայն գաղափարական-քաղաքական տեսակետից էր պահանջում Արցախի ազատագրումն ու վերամիավորումը Հայաստանին, այլև գործնական խնդիրներ էր լուծում հայոց բանակը զինելու և հանդերձավորելու, մեր ռազմական ներուժը տեխնիկական նոր միջոցներով համալրելու ուղղությամբ: Պատահական չէ, որ հենց Գր.

Ղարիբյանի ծննդավայրում՝ Սիսիանի Ծղուկ գյուղի ձորում պետք է իրականացվեին համալսարանի լաբորատորիաներում կարկտաբեր ամպերը ցրող «Ալազան» հրթիռային համակարգի փոխարկված մարտագլխիկով զինատեսակի փորձարկումները:

Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ Գր. Ղարիբյանի հայրենասիրական վարքագծում որոշակի դեր ունեին նրա համակողմանի զարգացումն ու արվեստի բարձր ճաշակը, մանավանդ հայ գրականության, հայոց պատմության ու մշակույթի խոր իմացությունն ու անձնական մտերմությունն իր մեծ հայրենակցի՝ մեր ժամանակների իմաստուն քնարերգու, պաշտելի բանաստեղծ Համո Սահյանի հետ: Իմ գրքերից մեկը՝ «Հովհաննես Շիրազ, գիրք Ա» մենագրությունը, նրան նվիրել եմ հետևյալ ընծայագրով. «Ակադեմիկոս Գրիգոր Ղարիբյանին՝ պայծառ ու լուսամիտ մտավորականին, որին ճանաչելով եմ շուրջ կես դար և համոզվել, որ նա գիտական բարդագույն խնդիրներին միշտ համադրել է հայոց երգն ու բանաստեղծությունը և մանավանդ պաշտելի Համո Սահյանի պոեզիան:

Իմ ճակատագրում խաղացած վճռական դերի ու նրա հրաշալի գոյության համար երախտագիտությամբ ու լավագույն մաղթանքներով՝ Սամվել Մուրադյան: 27.09.2012»:

Գրքի նյութերը աներկբա վկայում են, որ Գր. Ղարիբյանը սիրված ու փնտրված ընկեր է, ընտանիքի օրինակելի հայր ու ամուսին: Խառնվածքով ու բնավորությամբ ևս օրինակելի է, պարտաճանաչ, պահանջկոտ, նպատակասլաց ու հետևողական: Բարոյականային այս բարձր որակները նա դրսևորել է ողջ գործունեության ընթացքում: Սակայն, այս ամենով հանդերձ, քաղաքական տեսակետից առանձնապես վտանգավոր ժամանակներում աղետները կանխելու զգուշավորություն ու ողջամտություն պետք է ունենար ԵՊՀ ղեկավարությունը, այլապես ցանկացած վրիպում կարող էր դառնալ ճակատագրական: Համատարած անգրագիտության վերացման դարաշրջանում մեր ազգային պատմությունն ու մշակութային արժեքները կեղծելով և ծախելով պրոֆեսոր դարձած ու պաշտոնական դիրքերի հասած ոմանք անգամ 1970 – 80-ական թվականներին ազգային զարթոնքի ամեն մի դրսևորում և խորհրդային հնացած կաղապարներից ամեն գաղափարական շեղում համարում էին նացիոնալիզմի արտահայտություն: Եվ այն ժամանակ, երբ փոստային հեռագրի 1 բառն ընդամենը 3 կոպեկ էր, 103 ռուբլի արժողությամբ հեռագիր էին հղում Մոսկվա, թե՝ համալսարանում իբր նացիոնալիզմ կա, և ազգայնական, դաշնակցական խմբեր են գործում: Այս իրավիճակում ի՞նչ

կարող էր անել ռեկտորի կուսկոմիտեի քարտուղարար Գր. Ղարիբյանը, երբ հարկադրված էր վերին պահանջով քննել ականավոր պատմաբան ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանի, մեր մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակի և արձակագիր ու հրապարակախոս Վարդգես Պետրոսյանի ստեղծագործություններում «նացիոնալիզմի դրսևորումներն ու հարուցիչները», որ իբր «հայտնաբերել» ու մատնանշել էին խորհրդային պետությանն առավել հավատարիմ ձևացող պնդաճակատները, ովքեր ոչ ավել ոչ պակաս սպառնում էին «Մոսկվայով….»:

Իմ սերունդը լավ է հիշում, որ ամոթալի այդ հարցը քննող Գր. Ղարիբյանն իր գլխավորած հանձնաժողովով Խ. Բաղալյանին ու մյուս զրպարտիչներին խիզախորեն տվեց արժանի հակահարված և ազնիվ մտավորականներին ու համալսարանը փրկեց անհիմն ու վտանգավոր մեղադրանքներից:

Գր. Ղարիբյանի հայրենանվեր ու բովանդակալից կյանքի ուղին հարուստ է այսպիսի լուսավոր էջերով ու դրվագներով: Խմբագրի հայացքով ընթերցելով՝ նկատել եմ, որ դրանց մի մասն է միայն հիշատակվում ու լուսաբանվում այս գրքում, գիրք, որը հայ արժանավոր ու վաստակաշատ մտավորականի իմաստալից կյանքի ճշմարիտ պատմությունն է:

Արնշատությո՜ւն նրան, և թող արդյունավոր լինեն նաև հետագա տարիները:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ,
ՀՀ գիտության վաստակավոր

Բովանդակություն

Սուրբ օրհնություն 3
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան 5
85-ամյա կյանքիս էջերից 8
ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյան 13
Ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյան 14
Հիսուն տարի միասին 15
Գրիգոր Ալեքսանի Ղարիբյան - 85.
Գիտության և կրթության նվիրյալը 17
Մեր դասախոսը 20
Գրիգոր Ալեքսանի Ղարիբյան – 80.
Կրթությանն ու գիտությանը նվիրված կյանք 23
Արդյունավետ համագործակցություն 27
Հոբելյանները լավ առիթ են, որ.... 29
Ի խորոց սրտի և ամենայն ջերմությամբ.... 33
Մեր սիրելի Ղարիբյան Գրիշան 35
Սիրված ընկեր 37
Օրհնված, սուրբ ընտանիք 38
Հարգված մանկավարժն ու գիտնականը 39
ԵՊՀ-ն և Արցախյան գոյամարտը 41
Գրիգոր Ղարիբյանի 85-ամյա կյանքի չգրված էջերից 45
50 лет знакомства 46
Ամեն ինչ՝ հանուն ուսանողի 47
Մեծ ուսուցչապետ 48

Ընդհանուր բնույթի հոդվածներ

Սիրելի գիտնականն ու քաղաքացին 49
Երևանի պետական համալսարանը 90-ամյա զարգացումներում ... 52
Նա ծառայեց հայրենիքին և արարեց բարին 59
Քննական հայացք Հայ ազգային կոնգրեսի
«100 քայլ» ծրագրին 66
Մարդկային կապիտալի կորուստների խնդիրները և
արտագաղթը կանխելու ուղիները Հայաստանում 73

Սյունիք – սյունեցիներ

Իմ սիսիական աշխարհը 80
Սյունիքի զարգացման մասին 82
Խոշորագույն գիտնականն ու քաղաքացին 88
Հայ ականավոր տնտեսագետ Մուշեղ Ադոնցի
ծննդյան 100-ամյակը 91
Ինչ որ գրել է՝ անկեղծ է գրել, սրտով է գրել 95
Ամեն գույնը՝ մի զինվոր 100
Նորօրյա ոկեձեռիկը 103
Մեծարենք մեր մեծերից յուրաքանչյուրին 106
Ընթերցելով այս գիրքը … 107

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գրիգոր Ալեքսանի Ղարիբյան

85-ամյա հոբելյանական և 60-ամյա համալսարանական կյանքիս էջերից

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 7.125:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1